



## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


588

129

Luy  
1005

164

Yuzg Pys - Yn Dhuwqaraw  
2013 0776 349 10  
July 2013



# ԳԻՒՂԱԿԱՆ

Pa

# ԲԱԼՔԻՑ



9. FEB 8

## ԱԼԵՔՈՎԻԿԻ ԱՐԱՐԱԿԱՆ

124



Sophia U

ՏՊԱՐԱՆ Ա. ՎԱՐԴԱՆԵԱՆՅ ԵՒ ԲԱ-

1883

ՆՈՒԻՐ

ՀԱՅՈՑ ՀՈԳԵԿՈՐ ԴՊՐՈՑՆԵՐԻ

Доз. Цензурою. Тифлисъ, 17-го Июня 1883 года.  
Тип. М. Вартанянца и К°, на Тройц. пер. д. № 11

ԹԵՄԱԿԱՆ ՎԵՐԱՏԵՍՈՒՉԱՆՔՆԵՐԻՆ

աշխատանիրողից:



1005 - 2013  
Կ. 1000

## ԸՆԹԵՐՑՈՂԻՆ

Շատ տարիներ չեն անցել այն օրից,  
երբ ամենքս էլ խոնաւ ու խարխուլ ընակա-  
րաններում, հակամանկավարժների ծանր  
ազգեցութեան տակ, խրթին ու անհաս-  
կանալի դասագրքերը մրմնջում, սերտում  
էինք....

Կամենալով անյիշատակ չը թողնել այդ  
օրերը, կամենալով մեր գրականութեան մէջ  
իր արժանի տեղը շնորհել այդ օրերին, ես  
ամենայն սիրով աշխատասիրեցի այս գիրքը՝  
որպէս պատկեր և բացատրութիւն մեր  
անցեալ դպրոցական կեանքի:

Այժմ լոյս ընծայելով սորան՝ տալիս եմ  
ձեր ձեռքը, ընթե՛րցող, և գրական ասպա-  
րիզին թողնում սորա դատաստանը...

ԱԴ. ԱՐԱՐԱՏԵԱՆՑ

# ԳԻՒՂԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅ

Ա.

## ՔԸՐՈԶ

Գարունքն էր:

Առաւտեան լոյսն ու մութը իրարից դեռ չեխն քաժանուել, դեռ Շամշուլդեցիք խորը քնից չեխն սթափուել, ժամկոչ Քիքանը եկեղեցու ջուխտակ զանգակը ծնգծնգացրեց ու կամաց քայլերով դէպի Նահապետանց կալի կողմը գնալով՝ ձայն հանեց.

—Զարթնեցէք. Էսօր կիրակի ա. ժամ համեցէք. քարոզ կալ. . .

Գիւղը գզրդաց նրա կրկնումներից:

Նատ ժամանակ չանցաւ, երկու երեխալ—Արամն ու Մարգարը—վագելով մտան եկեղեցին: Դորանք տէր-Առոկասի աշակերտներն էին, որ մի և նոյն ժամանակ տիրացվածիւն էլ էին անում: Տէրտէրը սորանց օգնութեամբ ժամասացութիւնը սկսեց: Եկեղեցին հետզհետէ բազմութիւնով լցուեց: Առաջ մեծերը, յետոյ միջակները և այսպէս կարգով ամենքն էլ շարուեցին: Սեղանի խաչկալի առաջին մէկ մոմ էր ալրվում. կանթէղը ուղիղ գրքակալի առաջին էր կախած: Փուրվառի մէջ ծը-

խուժ էր խունկը, որ իր անուշահոտութեամբ ու հաճելի բուրմունքով աւելի էր շարժում ժողովրդի անխառն ջերմեռանդութիւնը. . . .

Տէրտէրը երբ «նորաստեղծեալի աւետարանը» կարգաց, Արամն ու Մարգարը միաձայն սկսեցին «նորաստեղծեալ» երգը: Խոզդների ականջը զնզում էր նրանց բարակ ու կլլլան ձէնիցը: Ամենավերջի տունը սկսեց մի օտարական՝ բոլորովին տարբեր եղանակով: Ամենքն էլ ապշեցին այս մարդի անսթգոր եղանակի վրա: Մինը միւսի զլխովը ծկրակում էր իմանալու, թէ ով էր նա...

Հէնց որ երգեցիկ երեխանները ուզում էին զնւ անել, տէրտէրը ձեռքի իշարաժուվ հասկացնում էր «կամաց ձէն պահեցէք:» Երևի նա գիտէր օտարականի ով և ինչ հունարի տէր լինելը: Տէրտէրը օտարականին իր առաջն էր կանգնեցրել, իսկ հանրածանօթ տիրացու Աւետիքին, որը կարգալգրել հազիւ թէ գիտէր, բայց լաւ էր երգում՝ պատկանեալ տեղիցը հեռացրել էր: Մեծասիրտ Աւետիքը խռովել, ժամ չէր ասում:

Օտարականի դիրքը աւելի էր շարժում ժողովրդի հետաքրքրութիւնը: Նա ձեռքերը խաչմերուկ դրել էր կրծքին, գլուխիք բարձր՝ ջրակալած աչքերը խաչկալին քցել, ոտի մինը առաջ, միւսը յետ գրել: Սորա մազերը մինչև ուսերքն էին համնում: Գլուխը շարժելով, մորուքը տմբացնելով, հաստ ձախնը կտրատելով-կլկլացնելով, նա ալնպէս էր երգում «Սիօնի որդիկ», որ լսողները ակամալից կարող էին մտմտալ. «աղբէր, սա հըշտակ ա, թէ սատանալ. գրնովը մտաւ թէ լուսամուտով:» Հէնց որ միանգամ էլ ձայն-խաղը խիստ վեր քաշեց ու յանկարծ ցածրացրեց, Արամն ու Մարգարը թէքուեցին տէրտէրի կողմը՝ մի մի մոմ ձեռքերին: Տէրտէրը երեսը

ժողովրդին դարձրեց՝ խաչը ձեռքին: Ամենքն էլ իմացան, որ նա քարոզ է տալու: Ալեորները ծալապատիկ նստուեցին:

«Օրհնեալ ժողովուրդ, օրհնուի ձեր տուրքն ու մուտքը, պտղաբերութիւն ձեր հանգն ու անդաստանը, լոցուին ձեր հորերն ու ձորերը, աճէք դուք էլ,» ձեր տաւարն էլ. մի խօսք պէտք ա ասեմ, գիտեմ որ դուք բարի էք, ինձ կը լսէք. . . .»

Տէրտէրը մի քանի բոպէ հազարուն նուիրեց: Նա թէ ի՞նչ պէտք է ասէր, ոչով էլ կասկած չունեցաւ: Ամենքն էլ գիտէին՝ որ տէր հայրը վատ բան չէր ասիլ: Աշկարա երեւում էր՝ որ նորա բերանից հրեշտակները դուրս ու տուն էին անում. . .

«Սիրելիք, շարունակից նա, Աստօծ էս գէղի համար մի լուսաւոր ճրագ ա զարկել, դուք չէք իմանում: Պէտք ա, որ ամենքս էլ էգ լուսն ընդունենք: Առանց լուսի աշխարհքը հառամ թիքալ ա: Ով որ Աստծու լուսից կը փախչի, նրա զլխին քար ու էրկաթ կ'ընկնի, աչքի լուսն էլ կը մթնի: Լուս ասածդ ուսումն ա: Մենք շատ վազուց Աստօծ էինք կանչում, որ մի հալալ, ուսումնագէտ վարժապետ ունենանք: Վերինը մեր խօսքը լսեց, մեղ տուեց: Մննում ա, որ մեր հոգին ու սիրտը ցնծալ: Տեսնում էք առաջիս կանգնած օտարականին. սա ա, որ իրան ստովն եկել ա էս գէզր: Աստօծ մեր երեխանցը կորցրեց ոչ: Էն անմեղ գառներին ոնց կը կորցնէր: Նրանք կը կարդան, սուրբ տաճարումը ժամ կ'ասեն ու մեղ կը մթիթարեն....»

Մարդիկ, կանալք, մեծ ու փոքր կարծես մի հոգի ու մի մարմին դառած լինէին: Սուրբ սեղանը նորանց

աչքում Աստծու աթոռի էր նմանում, ուր խաղում էին արդար հոգիները...

«Տեսնո՞ւմ էք ինձ, շարունակեց նա, ես ծերացել եմ—զօրութիւնից ընկել: Ել առաջուան տէր-Ղուկասը չեմ: Ել չեմ կարողանում ձեր թղթերը գրիլ-կարդալ, երեխանցը բան սովորացնիլ: Ես մէնակ հայերէն գիր գիտեմ, էս օտարականը չորս լեզու գիտի: Իմացած կէնաք, որ ով որ մի լեզու գիտի, նա մի մարդ ա, ով որ չորս լեզու՝ նա չորս մարդ ա: Չորս լուծ եզն ու ուժի լուծ գոմէշը մին չի, մի ուժի չի: Էնպէս էլ ես ու էս օտարականը: Սրան պահեցէք էս գէղումը ձեր երեխանց խաթէր, որ գիրք կարդան: Սա ձեր թղթերը կը գրի, ձեզ գլխի կը քցի ձեր հետաքնները: Իրիկունը անժամանակ մեր տունը եկաւ սա, հարց ու փորձ արի, տեսայ որ Աստօծ էս գէղին մի լուս ա տուել: Սա մեր երեխանց մըշշակն ու հոգեւոր հայրը կը լինի: Ովինչ կուզենայ՝ իրան տանիցը կ'ուզարկի սրա համար—հաց, պանիր, եղ, ձու, հաւ ու էսպէս բաներ: Սրա հոգին դրանով էլ գնի կը մնալ: Աստօծ սրան հազարապատիկ կը վարձադրի: Դէ, Բնչ էք ասում, օրհնեալ որդիկ, Օսէփ քոխվա:»

— Նատ լաւ կ'ըլի, տէրտէր ջան: Դուրս գանք ժամիցը, մասլահամ անենք» — խօսեց Օսէփը և ապա, տերեների շփոցի պէս, մի խուլ քչիչոց ընկաւ եկեղեցին:

«Լսնցէք, մըդիկ, ես էլ խօսք ունեմ» — բարձրաձայն քչիչոցն ընդհատեց տէրտէրը և մի ձեռքով Արամի ու Մարգարի ձեռքիցը բռնելով, միւս ձեռքով օտարականի — շարունակեց.» այս երկու երեխէն տալիս եմ քեզ, վարժապետ աղբէր, սուրբ տաճարի մէջ, ժողովրդիս առաջին: Մարգարին իմ տղէն ա — մինումարս, Արամն էլ

մի խեղճ իրիցկինի — Հանգուցեալ տէր-Մարուքի տղէն ա — էլի մինումար, որ յետոյ կ'իմանաս: Պարտական ըլես, թէ էս երկուսին աչքիցդ քցես: Դու սրանց լաւ կարդացրու, խրատի, սրանք էլ էն մէկէլ երեխանցը կը-հետևեն, կը սովորացնեն ու քեզ օգնական կըլեն: Իմացար:

Օտարականը գլուխը տմբացրեց — աղէկ կեղնի — ասելով:

«Արամ ջան, Մարգար ջան, դուք էլ շատ ապրէք, իմ տասը հասնէք. ձեր վարժապետը էլ ես չեմ, սա ա — ձեռը պաշեցէք:»

Վարժապետը տէրտէրի ձեռը պաչեց, երեխաները վարժապետի: Այս մի այնպիսի օրինակ էր, որ տէրտէրը դորանով ոչ թէ միայն ուսումնարանի հիմնաքարը դըրեց, այլ և շարժեց ժողովրդի բարի նախանձը: Օրինակը շատ է ազգում սրտին, բան խօսքը:

«Դէ, օրհնեալ լինիք, ասաց տէրտէրը ու ժամերգութեան վերջաբանը սկսեց: Մի քանի ըռպէից յետոյ եկեղեցու դուռը փակուեց...

Բ.

ՄԻԱԲԱՆԱԹԻԹԻՒՆ:

Հայոց ազգը կորցրեց իր անկախութիւնը, գրականութիւնն ու փառքը. բայց ջուխտակ ձեռքով պինդ պահեց իր լեզուն, եկեղեցին և անունը: Այս երեք տարրը ձեռքից չը թողնելու համար՝ նա կրեց պարսիկներից հաղար ու մի՛ հալածանք, տանջանք և խիստ պատիժ... Եթէ որ թշնամին լաղթուած յետ գարձաւ մեր ազգը նորէն հաստատեց իր թիկունքը իր երկնատուր կրօնի ճշմարտութեան վրայ ու մտաւ սուրբ տաճարի ծոցը, ինչպէս մանուկը մօր գրկին, նա այնպէս մնաց մինչև մեր օրերը... Կորնն, հող ու մոխիր դարձան նորա պատմական վկայարանների մեծագոյն մասը. բայց մնաց մի առաքելական հաստատութիւն, որը չը կտրեց ազգիս սրտից աստուածապահատութեան, առաքինութեան ու գրագիտութեան սէրը:

Տէր-Ղուկասը, ինչպէս նոյն հաստատութեան պաշտօնեալ, իր հասկացողութեամբ քարոզեց ժողովրդին. բայց քանի՛ տէր-Ղուկասներ էլ Հայաստանի զանազան անկիւններում իրենց սրբազն պարագն էին կատարում:

Եկեղեցու վսեմ խորհուրդը թելագրում էր եկեղեցականին, նա էլ իր բանաւոր հօտին էր պարզում:— Մինը թէ միւսը վառ պահեցին զրասիրութեան կալծը հայոց սրտի մէջ:

Հայը միշտ ուզեցել է իր տղէն ժամասող լինի՝ տէրտէրի առաջին կանգնած: Հայ-կնոջ սիրտը անպատմելի է, նուիրական է դէպի ժամերգութիւնը: Ով որ

մօնթէ է տեսել, անշաւշտ պէտք է իմանար՝ որ բարի ծնողն ուզել է նրան տիրացու շինել: Ահա թէ ինչի՞ մօնթերը սաղմոս ու ժամագիրք էին կարգում...

Եկեղեցում փոխասողը՝ տէրտէրից յնոոյ պատուի տեղն էր ժառանգում: Տիրացուն միշտ եղել է տէրտէրի աջակիցը և նրա կողքին: Այս էլ փոքր բան չէր— տէրտէրից մեծ ով կալ: Ամենքի հալըն է նա և ամենքն էլ նրա խօսքը շաքարով ու մեղրով են կտրում...

Ուրեմն՝ ի՞նչ կարծիք, որ տէր Ղուկասի խօսքն ու խրատը մեծ տալաւորութիւն կը զործէր ժողովրդի սըրտի վրայ:

Դեռ կէս օր չը կար: Նահապետանց կալումը հաւաքուել, մեծերը քարերի վրայ նստուել, շարուել էին. փոքրերն էլ ըրջանաձև կանգնել, չէին համարձակվուանստել: Տէրտէրը մէջ տեղն էր, օտարականը նրա առաջին: Նա գլուխը քարշ էր քցել և աշոցուցամտով գետնի փոշոտ երեսը գծելով, երեխ ուզում էր իմանալ թէ՝ իր այսօրուան վիճակը ի՞նչպէս կանցնի:

Հովը փչում էր: Հաստարձատ կաղնի ծառը ժողովրդի վրայ ստուեր էր ձգել: Տէրտէրը մի քանի անգամ հայեցք ու ակնարի ձգելով կանգնողների մէջ լուութիւն պահպանեց, որ մինչ ալդ կէտը ամեն մարդ իր սրտի ուզածն էր խօսում...

«Տէրտէր ջան, խօսեց Միրզանց Օսէփը, ուզումեմ էս զարիք աղբօրը մի քանի խօսք հարցնեմ, կը թողնս:»

— Ուրդի, լեզուն Աստծունն ա, խօսա, ամա Աստծու խօսքը խօսա:

«Ա՛յ տիրացու ջան, որտեղից ես:»

— Ես ըշտէ Հստածփոլու երկրէն եմ...

«Բա ուր ես եկել. տուն-տեղ չունեմ:»

— Ունի՞մ. հրա չունիմ, թողեր եմ ու եկեր....

«Ախր պատճառն ի՞նչ ա. ի՞ն ես թողել ու եկել:»

— Հէջ. ըշտէ գործ գտնում, փարա վաստըկիմ....

«Կնիկ—խիզան էլ ունեն, թէ հէնց մէնակ դու ես:»

— Կին օր ունենամ նէ՝ աստէն ու անդէն շըշիմ զը... Հէջ փան մը չունիմ, միամիտ կեցէք: Տէր հօրս փոլոր փաթմել եմ—գիյնա...»

«Հիմի օր մենք ըլ պահենք, դու ուր կը գնաս:»

— Ըշտէ ուր... ափրուստ փնթուելու, փարայ վաստըկելու...

«Շատ լաւ: Քանի՞ լիզու գիր գիտաս:»

— Գիյնամ, ըշտէ, խայոց, քիչ մը ոսաց, Փէրսի, ըմա թրքաց լիզուն աղէկ գիյնամ...»

«Մենք խօ թուրք չենք, ինչի՞ ապէտքը թուրքի լիզուն: Մեզ հարկաւոր չէ թուրքն էլ, իր լիզուն էլ... Հա. ձայնը բարձրացրեց Օսէփը, էն սատանական բաներիցն էլ խաբար են. օրինակ—թլիսմագիր, ջաղու, փալքաց անիլ ու ուրիշ հազար բան...»

— Գիյնամ, ըմա հավաս չունիմ: Կրնամ նէ փան մը անել, գլուխս եօլլաի տանել...»

«Շատ լաւ...»

— Օսէփ քոխվա, ի՞նչ ես շատ հարց ու փորձ անում, նրա խօսքը կտրեց Հանէսը, ի՞նչ ես դարիք մարդին ամանշացնում. չես տեսնում, որ ամեն բան գիտի: Աշխարհի տակ ու գլուխը զըի միջին ա, խախալել ա—էլի...»

— Հա, տղէք, վրաբերեց Սալին. տեսնում չէք, որ դրաբառ ա խօսում, լիզուն միքիչ դժար եմ հասկանում: Բա էդ մնց կ'ըլի, դրա լիզուն երեխէքը կ'իմանան: Սլու-

պէս խօսողին տէրտէրը քմքածիծաղով պատասխանեց.

«Որեակ, զրաբառն ա լաւ թէ աշխարհաբառը: Աստօծ անի, որ մեր երեխէքը զրաբառ սովորեն: Դու ի՞նչ գիտաս, Սալի ջան, որ էդ գիտենաս:»

— Ո՞վ ա ինչ ասում, տէրտէր ջան. ես էս եմ ասում թէ՝ ես զարիք աղբէրը որ էդքան բան գիտալ, աշխարհի խէր ու շառը դիմ իմանում ա,— ի՞նչ ա դրա հալը...»

«Սուս, մասխարա, բարկացաւ Օսէփը, դու որ սրա պէս չօլէչօլ ընկած ըլես, հազար սար ու ձոր անցկացած, հաց ու չուր էլ չես գտնի: Գիտեն. Ըստամբոլը որտեղ ա—հըէ չհանդամումը: Էստեղ որ թազա փափաղ առնես, չուանց էնտեղ հասնիլը կը մաշի, խաբար ե՞տ:»

— Ի՞ն ես չարանում, ընդդիմադրեց Սալին, Օսէփ քոխվա, ես իմ կարճ խելքովը իմանում եմ, որ էդ մարդի լիզուն մեր երեխանց խելքի բանը չի: Էլ ի՞նչ կալ..»

«Տէր Աստօծ... Ալ տղա, Սալի, դու որ չես իմանում, հէնց գիտաս ամենքն էլ քու օրին են: Ախր դու ի՞նչ ես, որ բան հասկանաս...»

— Իէ լաւ, պարոն Օսէփ, մէջ ընկաւ բարեխօս հալը, ճէի պոչը կարճ արէք. հուջաթի օր չի: Մարդին Աստօծ դարկել ա մեզ համար: Դուք ամենքդ էլ տեսաք, թէ ոնց ես Արամին ու Մարգարին ժամումը վարժապետ աղբօրը պահ տուի: Դուք էլ խօսք տուէք, — վերջանալ...»

Տէրտէրի բարեխօսութիւնը հանդարտացրեց Սալինին և նա զիջաւ նկատողութեան կէտից: Օսէփը հաճութեամբ խօսեց—

«Տէրտէր ջան, էս զարիք աղբօրը մէնակ եսկը

պահեմ իմ հաց ու ջրովը, միայն թէ՝ սա իմ Նազարին լաւ կարդացնի: Նազարս մի քիչ մեծ ա, լիզուն էլ թւ-  
վատ, ամա բան չը կալ—կը գրատուի: Վարժապետը որ  
կալ—նազի ա: Նազին գիտի, թէ ո՞րն ա սաղին...»

—Երեսպաշտութիւն մի անիլ, իննամի Օսէփ, գար-  
ձեալ մէջ ընկաւ Սալին, որ չէր կարողանում համբերել,  
դու՛ քու Նազարը, տէրտէրը՝ իրան Մարգարը տէրտէրա-  
կինը՝ իրան Արամը—խի՞ Աղբէր, բա մենք երեխատէր չե՞նք:  
Ասում ա—տնտես, հաւասար տես. բա էս լսել չես:  
Ոսկին ծոցումը մարդ ա՝ ամենքիս երեխին էլ պէտք ա  
նոկի տալ—խօսքդ ի՞նչ ա:

Մինչև Օսէփը կը պատասխանէր, ժողովրդի մէջ  
քչիցոց ընկաւ: Բոլորն էլ լեզու ածեցին: Երեկի մեծա-  
մասնութիւնը աւելի համամիտ էին Սալինին, քան Օսէ-  
փին: Սոլա պատճառը օտարականի գծուձ շըրերն ու  
այլանդակ կերպարանքը պէտք է լինէր, որ տեսնողին  
իսկոյն կասկածանաց մէջ էր ձգում:

Եւ ճշմարիտ, ժողովուրդն իրաւունք ունէր կաս-  
կածելու: Պարսնի լայնաձագ շալվարը, գլխին ծածկած  
կարմրագոյն փէսը, ձեռքին բռնած երկարակով չիլու-  
խը, հաստ գագանակը, սև ու խոր ընկած աչքերը,  
սև սաթի պէս մորուքը, քըլըլուած շորերը, քձառած  
մազերը—այս բոլորը նրան նմանեցնում էին մի թափա-  
ռական քիւրդի, որն իր նմանների հետ թալանչու-  
թիւններ է անում հայոց հողի վրա....

«Տէրտէ՛ր, մեծ բանը մտից ընկելա: Թո՛ղ, Սալին  
ի՞նչ ուզում ա խօսի: Էս գէղի երեխէքը դիփ իմն են.  
ես դիմունանց հմար էլ ցաւում եմ» ասաց Օսէփն ու  
դէմեց վարժապետին.

«Մի ասա՛, աղբէր, անունդ ի՞նչ ա:

— Օվանէս:

«Ազգո՞ւ:»

— Սադօնանց:

«Օվանէ՛ Սադօնանց» — կմկմաց Օսէփն ու Նարցըրեց.

«տէ՛րտէր, էս անունը զլո՞ջ ա, թէ ըրոջ:»

— Բա Օվանէս Մկրտիչն ո՞վ էր....

«Նատ լաւ: Տեսնում ե՞ս, Օվանէս աղբէր, էս  
մարդիկը դիփն էլ լաւն են, ամենքի երեխէքն էլ  
գովական են. սազ աշխարհումը էս գէղը մի հատիկ ա:  
Քեզ կը սահենք—ինչքան վախտ էլ քու սիրտը կուզի: Ամա թէ ուրիշ ծոնութին տեսանք, վայն եկել ա,  
քեզ տարել....»

— Ինչ կը հրամե՛ս. եսիկ շատ աղեկ գիյնամ...

«Ամենքի երեխին էլ մի աչքով մտիկ արա, ոնց  
որ քու հոգու որդիկը: Միամիտ կաց, մենք էլ քեզ կը շա-  
հենք, եբոր լաւութիւնդ տեսնանք: Դու որ մեր երե-  
խանցը լաւ հետեւս, մենք քեզանից բան չենք խնալի: Նարուլ ե՞ս, աղբէր:»

— Ըշտէ, մեր ուզած փանն ալ ադիկ է...

Չ»

ԱՇՈՒՂ ԵՒ ՎՃԻՌ

Հենց այն միջոցին, երբ տանուտէր Օսէփը խօսքն  
ու խրատը վերջացրեց, մի խումբ շների հաջոց լսուեց:

Դիւղի վերի թաղիցը հպարտ-հպարտ գալիս էր ա-  
շուղ Երգար-Զգլին, սազը մէջքին, չիբուխը ձեռքին,

Խուճուճամազ բուխարի գլխարկը թէք ծածկած, մահուդ կարի մի թեքը թիկունքին, միւսը կախ, երկար բէխերը սրած, ծայրերը ոլորած: Սորան տեսնողը հէնց կիմանար դարձա է, գիւղի տէրն է կամ մի պարսկական խան, ժողովուրդն էլ նրա ռահաժիլը: Հէնց որ մօտեցաւ զիւղամիջին, մի քանի շներ վրա վագեցին: Բայց հանրածանօթ աշուղի գոռոցքը խեղճերի վրա սարսափ ձգեց՝ կալանչելով յետ փախան ու Սայնի տան կտրին իրար գգեցին:

«Զէ..., մտածեց աշուղը, էս խալխը որ սուս ու փուս հաւաքուած են, էս տեղ մի հնարք կայ. կամ մեռած մէջիդ պէտք ալի, որ զլիսին հաւաքուել են, կամ թագաւորի խալչ ու բէգառն են թովչի տնուած: Արի սըրանց ուրախացնեմ:» Եւ տեղն ու տեղը կանգնելով՝ խրոխտ ձախնը զլեց—

Աշուղ եմ, ես եմ,  
Սէր-աղբէրդ ես եմ...  
Թէ դարդ-կրակ ունէք,  
Ճար, դարձանը ես եմ...

Չայնը, եղանակը և խօսքը իսկոյն ճանաչուեց: Աշուղը միջոց չը տուեց խալխին իրանց անբաւ գոհունակուժիւնը յայտնելու, նորէն սկսեց—

Կիրակի օրուան տէրը,  
Ինձ տուել ասուքը մէրը.  
Ես որ տեսայ ձեզ միաբան,  
Ապրէք դուք-ձեր տէրտէրը...

«Դու էլ ապրես, զօրանաս, ուստա Եղար-Օղի»— միաբերան գոչեցին ամենքն ու կանգնեցին:

«Օրհնեալ լինիս, կէս տէրտէր, համեցէք, համե-

թէք»—ասելով Տէր-Ղուկասը նրան հրաւիրեց գէպի սալքարը, որ պատուաւոր տեղն էր:

Անուանի աշուղը խրախուսվելով տէրտէրի ու հասարակութեան սրտաբուղխ ողջունից, կալի մէջ տեղը կանգնեց, աջ ու ձախ նայեց, տեսաւ որ ըոլորի շրթունքի վրայ էլ միատեսակ ժպիտ է խազում—«Օխտն անուանի սուրբ Կարապետը ըլի ձեր քօմագը»—տասց ու երրորդեց.

Աստօծ օրհնեց մարդկանց ցեղը,  
Ինձի զարկեց էս շէն գէղը.  
Աստծու իսուքը ասենք, լսենք,  
Գտնենք մեղաց ճարն ու գեղը...  
(Խառը բացականչութիւններ:)

«Զէր քրտինքով ապրէք, ասաց,  
Ծովը քցեց մարդկանցն Աստուած.  
Բայց որ ուսում չունեն մարդիկ,  
Ինչ կիմանան՝ ինչ ա քրտինք...»

—Քրտամբ երեսաց կերիցես զհաց քո—ասաց Աստուած: Օրհնեալ լինիս, ապրեն քու վեց աղջկերքը. մենք նրանց հայցը անսպակաս կ'անենք, ուրախ կաց, խօսեց տէրտէրը և նրա կուռը բռնելով գէպի սալ քարը քարշեց:

—Ես ու իմ Աստօծը, վրաբերեց Օսէփը, ով որ ուսում չունենալ—ինչ մարդ ա, ինչ կիմանայ՝ քրտինքն ինչ ա: Տեսնում ես, ուստա Եղար-Օղի, էս զարիք աղքօրը. սրան էս գէղումը վարժապետ պէտք ա շինենք, լաւ շենք անի:

«Նատ լաւ, բեղերը ոլորելով խօսեց աշուղը, ամագիտանք որ վարժապետ օլանը մէկ աշուղից, երկու տէրտէրից շատ բան պէտք ա գիտենալ:»

— Ե՞ն, հեր օրհնած, հինգ աշուղի, քսան տէրտէրի չափ էլ գիտի. Ի՞նչ ես վախում:

Եղագար-Օղլին տեղիցը կանգնեց: Օսէփի խօսքը նրան առ եկաւ, կարծես սրտին դիպաւ: «Սադ Կաւկազումը ինձ հետ ոտ մեկնող, առաջս կանգնող չի էլել. սա ովա, որ էդ գովասանքին արժանացել ա»: Այս մտածմունքով ուզեց առաջին իսկ քայլում կապել նորան:

«Բարիս կամեցող եղբայր, դու ուզում ես էս գէղումը վարժապետ ըլիլ, ամա շատ բարի, շատ լաւ.

Ասա, ով ա հիմնագիրը,

Վարժապետաց անմահ փիրը.

Թէ որ կասես՝ կիմանանք որ

Կարաս պատմել Աստծու գիրը:»

Օվանէս եղբայրը նոյնալէս ուզեց իր հունարը ցոյց տալ. էլ երկար չը մտածեց, այս միտքը արտասանեց—  
«Աղէկ գիլնամ Աստծուն գիրը.

Աւետարան, Դաւթի սաղմոս,

Թէ փանամ նէ քեզի կը ցուցնեմ—

Խնձպէսին փիրն էր Քրիտաս...

«Ե՛ վալլա, ակամալից գոռաց աշուղը, շատ լաւ, աղէկ. Հիմի մէկ խօսքիս սլատասխան կուզեմ. Ալըն—Աստուած, բէն—բառն Աստծոլ, զիմ—զառն միածին. Դա—ի՞նչն ա:»

—Աղիկա հեշտ խօսքեր են: Դա—չիք չորրորդութիւն. Բմմա սէ—սէրն է Աստծուն:....

«Ապրես, շատ ապրես»—կրկնեց աշնուղը ու տեղը նստեց, արդէն հասկանալով վարժապետի մտաւոր կարողութիւնը և գիտութեան չափը: «Ա. խալխը, Դաղէթի ողորմածիկ տէր-Դանելից օխտն անգամ տւելի գիտի, Կահրու պէս աշուղիցը հինգ անգամ աւելի: Թէ որ դուք

չեք պահիլ, ես սրան կը տանեմ Դաղէթի ու վարժապետ կը ձեռնադրեմ: Տէրտէրը փառոց կենալ, լաւ վարժապետ ա ճարել: Էս ժամանակումը ով ա տուել էսպէս բան ի բուն զիր իմացող: Ճշմտրիտ որ հաւանեցի:»

—Որ դու հաւանեցիր, խօսեց բարձր ձայնով Օսէփը, փառք Աստծու: Մի մարդ չը կար երկրումս, որ հաւան կենալիր. Հիմի Աստօծ ողորմաց, որ քու բարեբար գիր իմացող էլ կայ ու զիւղացիք պարզերես կըլեն ձեր առաջին. դուք էլ չեք կարալ պարծենալ...

Տէրտէրը նկատեց Եղագար-Օղլու գունափախուիլը: Նա ուզում էր խրթին տեղերից բան հարցնի, մինչև որ վարժապետին կապի ու կշկուի, իր անունը չը խայտառակի: Բայց հոգեսոր հալըը խաղաղութիւնը պաշտպանեց.

«Ի՞նչ ես ասում, բարեկամ Օսէփ, Եղագար-Օղլու չափ ով ինչ գիտալ. Էս որ հարցըց՝ շատ հեշտ բան էր, ես էլ գիտէի, ոնց որ գիտեմ—տէրտէրի փիրը Քրիստոսն ա: Աշուղը անմահ խօսքը որ ասեց՝ վարժապետը գլխի ընկաւ: Ամա էս թողնենք, որդիկ, Աստօծ տալ, շատ բան գիտենանք, իրար վրա նախանձունենք. ես ասեմ՝ ես շատ գիտամ, դու ասես՝ ես շատ գիտամ: Յոյս ունեմ, որ մեր երեխէքը ժամանակով մեզանից առաւել գետենան. ասած ա՝ Օր յաւուր բզինէ զբան իւր....

Ճարտարապետու տէրտէրն էլ խօսքի չեք մանգալիս. Հէնց որ նա իր օրհնած բերանը բաց էր անում, ամենքն էլ ականջները սրում ու չորս կողմն էլ չեին նալում. միայն ալսքանն էր լսվում—«օրհնուի բերանդ:»

Օտարականը տէր հօր խրատախօս բերանին մնաց պարտական, որ մեղմացրեց Եղագար-Օղլու սիրտը և սա ալես հալը չը թելադրեց:

- 23 -

Հենց այդ ըստէում մի սևազգեստ կին մեղ ծանօթ երեխայի-Արամի ճեռքը բռնած, ամբոխը ճեղքելով, ներս սողաց գլխակոր ու տէրտէրի ականջումը ինչ որ փնթ- փնթաց:

«Ահա, որդիկ, շարունակեց տէրտէրը, բանը վեր-  
լացած է: Մեր իրիցկինը իրանց մարաքը սրբել, ծփծփել  
առև խնդրում ա, որ ուսումնարանը էնտեղ բաց ըլի:  
Էս էլ մեծ բան ա: Առաջ էնտեղ կը կարդան. եթոր  
ցուրտը կընկնի, Աստօծ ողորմած ա, հալլադ մի հոգե-  
սէր մարդ լուս կ'ընկնի ու իրան օդէն կամ գոմա-  
տունը կը տալ: Որդիկ, սա իր Արամին էլ հետը բերել ա-  
ռև ձեր առաջին վարժապետին ատալիս. սա խնդրում ա՝  
որ Արամը հիմիկանց եղև վարժապետինն ա, էլ իրանը չի,  
ինքն ու իր Աստօծը: Բարի վարժապետ, տէրտէրը խոս-  
քը մասնաւորեց, էս երեխի հէրը Աստծու օրհնած քա-  
հանայ էր. ես նրա պետքն էլ չարժեմ. նա որ մեռաւ՝  
երեք օրից լետոյ գերեզմանաթմբի վրա լուս վէր եկաւ:  
Էս հրաշքիցն իմացիր թէ՛ նա ի՞նչ գառն էր: Գնա, Ա-  
րամ ջան, վարժապետի ձեռը մէկ էլ պաշի...»

Ա. Ասմը դէպի վարժապետը վագեց. վարժապետն էլ գլուխը խոնարհեց դէպի տէրտէրը:

«Աստուած՝ օրհնեսցի!»

— Բարի ժառանգ եղնիս մարիկիզ» — կմկմաց վարժապետը:

«Աստուած խէրը վրաբերի»—գոռաց աշուղը տեղիցը կանգնելով։ Բոլորն էլ ձայն հանեցին։ Աշուղն իր սազի լարերին զարկեց մատնուկով—ծինզը ծընդը ծինզ.... և երգեց—

«Մեր երեխանց աջը քեզ տանը,

«Նրանց մեղքը ու վարձքը քեզ տանք.  
«Այ վարժապետ, գործդ տեսնանք,  
«Օրչինանք, անէծք—էս էլ քեզ տանք...»

7

## Օգազ Եկ Արքականութեան.

Նամշուլդեցիք գաղտօփար չունենալով օգի, ջրի մաքրութեան, ընակարանների և առհասարակ բարեկեցութեան մասին, ամեն պատուհաս վերաբերում էին անզուլժ ճակատագրին: Երկերեք լարկանի տները դիւզացոց միտն էին ձգում հեքեաթներում նկարագրվող կոչեամսաց ները: Բաւական է, որ քօխի ունեին և ապրում էին առանց քնիթի ու մուննաթի՝ ազատվելով ցըտից, շոքից և արտագին այլ պատահարներից: Տները կէս սաժէն հողի մէջ, առաստալլ պատերի ու ռահումին երի վրայ հաստատած, իսկ տանիքի վրայ մէկ արշին խորութեամբ հող էր ածած, որ անձրեւածուրն ու ձիւնի հալուածքը ներս ըլ թափանցեն: Մի մի երդիկ լուսաշողք էր ձգում իւրաքանչիւր տան մէջ: Այդ այն երդիկն է՝ որի միջոցով նշանած տղաները գիշեր ժամանակ տանձ ու խնձորներ էին կաթկալեցնում իրանց սիրելին երի համար..... Յած, նեղլիկ ու ճոճուան տախտակի հաստ գուռը բաց ու խուփ անելու համար ուժով հարսը կամ տղայ պէտք էր, այլապէս՝ ամեն երեխալ չը կարող ճռացնել նրան: Խո գեռ չեմ մոռացել մեր դրան փառացնել նրան:

կիչը, որ մէկ հաջա հաստ փայտ էր: Դրան դիմացը մէկ քհիլ կար՝ ներսից ցցած. փակիչի ծալրը գէմ էի տալիս բհրին, միւս ծալրն էլ դրան գոտ կափայտին և վագելով մօրս ծոցն էի մտնում...

Տների առօսստաղից հողը մազգում էր. անձրեւ եկած միջոցներին տները կաթիլքից ծով էին գառնում: Կաթիլքից գոյացած ջրերը ես շատ անգամ փետամաններով ու տաշտակով գուրս եմ ածել, ոտաբորիկ...

Տները կից էին գոմերին. մի կողմում տաւարն էին կապում, միւսում տնացիք բնակվում. թէ տաւարի և թէ իրանց ներս մտնելու ճանապարհը միենոյն էր. կով, եղ, գոմէշ, ձի, հորթ—ըոլորն էլ նոյն գունովը մտնում ու թէքվում էին դէպի իրանց ախոռները: Գոմի մէ ծալրում, աղբածակի տակին, անասունների թրիքը կիտում էին ու կոյտի միջին թին ցցում, որ յետոյ գուրս ածեն: Սարսափելի գարշահոտութիւն էր բուրում այդ կոյտից, որը ոչ թէ միայն իրանց, այլ և անլեզու հայլաններին վնասում էր: Գոմատէրերը այդ կոյտը ամեն օր մէկ անգամ խառնում էին, որ գոմի տաքանալուն նպաստէր: Տիրոջ համար գարշահոտութիւնը միենոյն բանն էր՝ ինչ որ չիբուխ քաշողին ծխտուի թանձը ու սիրելի ծուխը....

Հաւերը թառում էին տան ներսը՝ շէմքում հաստատած թառի վրա: Ամեն առաւօտ հարսն ու աղջիկ թէւ մաքրումէին նրանց ծէրտը, սակայն՝ ծրտի հոտով հոտում էր տունը: Սովորաբար, հաւաքները պէտք է գուրսը լինէին, բայց հաւերը գողանալուց էլ երկիւղ կար: Գիշերը շըջող աղուէսները հաւաբների թշնամին էին: Բուն բարիկենդանին, իմ միտն է գալիս, հանրածանօթ նահապետը մի աղուէս էր բռնել իրանց

հաւաբնումը. անիծածը քսան հաւ էր խեղտումել ու ճիտապուկ արել, խեղճ տանտիկնոջ տունը քանդել: Միրզանց Օսէփը որ տեսաւ Նահապետին շատ միկտալիս կորսատի համար, հրամանից՝ աղուէսի բգիցը թոկ կապել, գռնէ գուռը մանածել ու փող, ցըրեան, զարի, ով ինչ կը տայ, ժողովել և տուլ Նահապետի կնոջը նոր հաւեր զնելու համար: Երանի այն օրին. ինչքան խնդում էինք խեղճ բանտարկեալի վրա, երբ նա պոչը շարժում, տատաները կրծտացնում էր: Անտարակնոյն, շարժում, աղատութիւն էր խնդրում մեղանից, բայց մենք գագանակով նրան լացացնում էինք....

Ինչ և իցէ, թողնենք լիշողութիւնները:

Տունը իր կազմակերպութեամբ ասվում էր օջաղ: Օջաղ քանդելը, նրանից հեռանալը, նրա վրայ խէթ աչքով մտիկ անելը գիւղացոց համար մեղք էր համար-միւսին եթէ զգալի վնաս էր տուած լինում, հակառակորդի օջաղն էր լինկում և անմիջապէս թողութիւն ստանում: Եօթը եղլալրներ՝ թոռների տէր՝ իրարից չէին բաժանվում և բաժանվելիս օջաղը մեծինն էր: Մի տեսակ նախապաշարմունք՝ որ գիւղացու տան կանգման ու հարստութեան պատճառներից մինն էր, այն է՝ որ կարծվում էր թէ օջաղի գլխին կալ մահու և կեանքի հրեշտակը, որը ծերունու կերպարանքով ամեն լուսնավերջի պտտում է գոմի մէջ և որին տեսնել կարող էին միայն տան արգարները: Նա անուանվումէր գովլաթ-բաժանող: Օջաղին ծուռ նայողը գովլաթին էր քացով տալիս: Այսպիսի գէպերում գովլաթ բաժանողը խոռվում, հեռանում էր այն տանիցը: / 0ջաղի առաջին ծնվում, մնվում, զարդանում և

ընդ միշտ խրատվում էր տան զաւակը: Մարդիկ երդվում, պարծենում ու հպարտանում էին օջաղի անունով: Նրանք արտաքին նեղութիւններից ճնշուած, աշխատանքից լոգնած, երբ մտնում էին իրենց ծածկարանը, կորչում էին բոլոր սրտնեղութիւնները: Օջաղի առաջին ինքնիշխան են մարդիկը. օջաղը նրանց միտիժարանն է, աջ ու ձախ նրանք իրանց սեփականը տեսնելով, զաւակների հետ շուրջ բոլորած «փառք քեզ տէր» են կանչում...

Եթէ մէկը ուղում էր ամուսնացնի իր որդուն, առումէր. «այս ինչ օջաղիցը մի բուռը մոխիր պէտք ավերցնեմ. նրա աղջիկը կուտա, կաղա, քաշալ ա—ինձ զարուլ ա. որովհետև՝ էն օջաղը հառամ թիքա չի վերցնում, հառամ կաթնակեր չի մեծացնում...»

Ամենաշերմեռանդն այն է՝ որ վոսքը իները ամեն կիրակնամտին արդար մոմ էին վառում օջաղի գլխաքարիցը. երբ որ մայրը խունկ էր ծխում, բոլորն էլ քարերիցն համբուրելով ծունը էին կրկնում մօր հետ, որ օջաղը բարեխօս լինի տիրամալը Աստուածանին, սա էլ Աստծուն, Աստուած էլ կանգուն պահէր իրանց տունը միշտ և հանապագ... «Ասա, բալա ջան, իմ ալովթքը դու էլ ասա, որ քու արդար բերանիցը Աստօծ թէզ կլսի:» Այսպէս էր յորդորում մայրը որդոցը աղօթելիս:

Գեռ ևս մեղք է համարիվում կիրակնամտին օջաղիցը կրակ դուրս տալ.—տվողի տաւարը կը կոտորիէր. իւրաքանչիւր տուն այդ օրերում չը պէտք է հանդցնէր կրակը\*: Ահա թէ ի՞նչ ասել է օջաղ:

\*) Եւս սովորութիւնը կարծես կրակապաշտութեան ժամանակից լինի մնացած: Մէր առ կան դից առաջեւ հայերը կրակն անշշչ էին պահում:

Ալժմ գանք մարաքին, որ շատ շուտով պէտք է մանսւկների կրթութեան տաճար դառնալ, թէ և օջաղի մասին այս համառօտ տեսութիւնով ինքն ըստ ինքեան քայատրիվում է մարաքը:

Դիւղի վերի թաղումը, աղբարաձորի գլխին, ու երես մարդի պէս կանգնած էր մեր մարաքը: Դա նշանաւոր էր իր հնութիւնով: Դորա պատմութիւնը տալիս էր ողորմածիկ տէր Մարութի տիրացու ժամանակին—երեսուն տարի ալս անցքից առաջ: Երջապատով կալերից մզելն ու տարմանը այնքան կուտփել էին նրա ծպոտեալ եռանկիւնածեւ կատարին, որ տեղ-տեղ կանացել էր: Նրա պատերը ոլ սխի ծառի ճիւղերից հիւսուածք լինելով, արեւի ու անձրեսի ներգործութիւնից փտել-խարխալ էին գարձել: Քամին վսկսումէր ծակերից. այնտեղ ծաերը թառում էին, գժվժում, ծլվլում ու ճովովում... Առաստազը այդ պատերի վրալ էր կախ ընկած. վեց կէռ ու մէռ սիւներ պահում էին հինօրեալ շէնքը փլելուց: Հիւսիսալին քամին գաղգողացնում էր նրան, այնովէս, որ առաստազի օձաբների նման ծակերից հողը մաղվում էր: Մարտաքի ներսի մի կողմում կուտփած էր հողացեալ տարմանը, որ տէրտէրակինը նրան թողել էր հատերի քջուջ անելու և ձու ածելու համար: Այդ հողացեալ մարմնից գուրս էին սողում զանազան նամաճճիներ—իշխառանչ, բազոջներ, շատ սոնանի սողուններ... Այս ու այն կողմում նամասունկեր էին բոել՝ բարակ արմտով, լայն ու տափակ զիսարկով: Մարտաքի գրան համար մէկ ճեղք էր թողած, ցած ու նեղլիկ, որին փակում էր մէկ կապուկ փուշ:

Այս ամենը առենք շատ լաւ էր, սակայն՝ ամենագլխառութեան էր ամեն պակասութեան: Սեղանի,

աթոռի, գրատախտակի, նստարանների և այլ ուսանողական առարկաների տեղը ընդարձակ էր, որոնց փոխանակքարերը պէտք է ծառալէին...

Երբ պատկառելի հերոսը, Օվանէս վարժապետն ինձ ու Մարգարին ամբողջ օրը քար էր կրել տալիս Պէլունց քանդուած մարաքատեղից՝ մենք շատ դժուարութեամբ էինք քարերը տեղ հասցնում: Ես ու ընկերոս տնքալով իրար օգնում էինք. իսկ վարժապետը քարերը դասաւրում էր մարաքի միջին: Քարի լաւ ու վաստ նստելակերպը, նրա աջ ու ձախ կողմը վարժապետն այնպէս էր հասկանում, որ կարծէիր որմնազիր է: Մարաքի մէջ կիսաշրջանաձև շարուկ-շարուկ քարեր դարսելով՝ նրան հաճախնքատան կերպարանք տուեց: Սակայն՝ քրտինքը մեր ճակատից ծլլում էր. մեր ուժը չէր գիտանում մեծ ու ծանր քարերի կրելուն: «Ապրէք, ըերէք, ըշտէ չոչուխս»-խրախուսում էր վարժապետը, բայց մենք մլու էինք անում, նրան բարկացնում...

Հէնց որ մթնեց, Միքանց Օսէփը ներս մտաւ և համարելով մինչեւ 70 քար—70 երեխալի նստելու համար, վրարերեց—

«Ապրէս, զօրանաս, վարժապետ, լաւ բան ես տեսել. էս ա՛ ուսումնարանը պատրաստ ա էլի՞... Անըժ. կասես զննադատուն ըլի...»

Ե.

ԿՈՆԱՆՑ ԴՐՈՒԹԻՒՆԸ ԵՒ ՃԱՇԱԿԸ ԴԵՊԻ  
ՈՒՍՈՒՄԸ.

Ուսումնարանը նոր, վարժապետը նոր—երկուսն էլ խօսակցութեան հետաքրքիր նիւթեր են: Վարժապետը՝ որ կարողացել է նվգար-օղլուն կապել ու կաշկանգել հարցերի մէջ, ով չէր խօսիլ նրա վրայ. ուսումնարանը՝ որ երեխանցը պէտք է դաստիարակեր և ժամանող տիրացուներ տար ծնողաց, ով չէր սիրիլ նրան: Ամենքն էլ քրքրում էին ալդ երկու կապուկը, թէ տեսնեն մէջն ի՞նչ կայ և թէ վերջն ի՞նչ կը լինի: Տէրտէրանց տանձի ծառի շվաքումը նստած, գուլալա գործելով, երկու միջահասակ կին զրոյց էին անում: Սալոմը իր խօսակցի առաջեւ իր սիրտը բաց արեց ու հետեւալ բացատրութիւնը ավեց:

«Տասնը չորս տարի ա, ինչ պսակուած եմ: Մարգսիմ երեսին մի անգամ ուրախ սրապվ չի ծիծաղել, դրսի բանը-լսածն ու տեսածը մօսս չի պատմել, որ ես էլ լսեմ, ան ուրախանամ, ան լաց ըլեմ... Նա ճիպոտով քացով ու, ինչ որ ձեռն ա ընկել—նրանով ինձ միշտ քեօթակներ ա տվել. անմեղ բանը նրան հերիք ա՛ որ ջանիս ընկնի, միսս ուտի... Ամա ի՞նչ անեմ, արինս ա, չիգարս ա, էն սարն ա զլիխս, էն ծառն ա՛ շվաքի տակին եմ, ում ինչ կարամ ասիլ: Զոլ ա գնում—սիրոս ա հետը, բաղն ա գնում—միտքս, հանդ ա գնում—խելքս, հունձ ա գնում—հնգիլու: Տաք արևի տակին—արանումը էրվում ա, խրովվում, չարչարփում, որ աշ-

խատանքը բերի ինձ ու երեխանցս պահի: Ասա՛, Շուշան ջան, էս զայդի մարդին ոնց ջուղար տամ: Աստօծ ոչ անի, նրա մի մատը ցաւի, իմ սուզ ջանն էլ հետք կը ցաւի. նրա մի ախ քաշիլը սրտիս ճզները կտրատում առաջ էն սհաթը թմակում, ջարդում, ուշունց ատալիս, մէկէլ սհաթը՝ արտօտունքը գեռ աչքերիս՝ նրա զլսովը սլոտաւ-պտուտ եմ անում, թէ հ'ը—տղամարդիս սիրու կնարեմ ոչ: Ասած ա՛ մարդամիջում մարդս, հարիր թուժան պարտքս—էս սուտ խօսք ա: Հիմի, Աստօծ տվել ա, գէզը վարժապետ ա եկել, ոսկին ծոցումը մի մարդ՝ սրան-նրան պէտք ա փայտ տայ, բա ես ի՞նչ անեմ, որ իմ Արտէմին էլ զրկուի ոչ: Խնչ անեմ, թէ տասը հետ էլ դրա խաթէրքեօթակ կուտեմ, պէտք ա էնքան առեմ, ասեմ... որ Արտէմիս էլ ուսումնարան զարկիլ տամ: Խալխի կնանիքը իրանց երեխանց ոտն ու ձեռը պնդացնում են, շորերը լուանում, որ զարկեն կարդալու, բա ես ի՞նչ անեմ, որ ջուրն ընկնեմ... Իմ երեխէն նրանցից լաւ ազգի ճուտ ա, ուղղուփով ու շնորհքով ա: ուրիշները ժամումը փոխ ասեն, ծլվլան, թղթեր գրեն ու կարդան, իմը զուրկ մնալ... Երեկ, Շուշան ջան, իմ խելօք մարդին ասումեմ՝ Արտեմիս էլ կարդացնենք. ասում ա՛ «սուս, դրա վախտը չի. վախտը որ գայ՝ մեծ նանը քեզ կասի»...

Շուշանը, որ երկար ժամանակ լսում էր, վրաբերեց.

— Է՛հ, մեծ նանն էլ մեծացել, խելքը յետ ա տվել...

«Ոչ թէ մեծացել, խելքը յետ ա տուել. գովրանն ա փոխուել, ժամանակն ա խարար ըլել: Մարդ որ մեծանայ՝ մգամ խելքը յետ կը տայ. ախը քանի շատ ասլի, էնքան շատ բան կը տեսնի ու շատ բան կը սովորի: Ո՛վ չի ըսէնց: Ես տասնուշինդ տարեկան վախտս ու հիմի խօ

մի՞ն չեմ: Նատ բան տեսնովը շատ բան կիմանալ: Պառաւած ծառը շատ ճզներ կ'ունենալ: Մեծ նանը գլուխը որ քարը տայ, որ ժամանակը շուռա եկել, մեծ ու պուծուք մին են գառնուում. դրանը խոնարհ են երեւում, տանը արծիւներ: Դու հէնց զիտաս մեր մարդիկն էլ մեծ նանին լսում են, նրա խօսքովն են. մեծ նանի անունը տալիս են, որ հարսները վախեն—սուս կենան: Ելի թէ նամուս կայ, թէ արուու կայ—կնաննոց մէջն ամնացել. մարդիկը կամանց կամանց խարար են ըլում: Նատ վախտ մարդս ինձ ծեծելիս նանն առաջն ա ընկնում, որ չը թաղնի. բա ինչի՞ նրան չի լսում. քանի նանը կովաւմ ա թէ՝ «մի ծեծիլ, իսի՞ ես թակում. Ես պէտք ա ամենքիդ խրատողն ըլեմ.» մարդս տւելի ա կատաղում.... Է՛հ, որ մինն ասեմ. մեծ նանը մի փարգայ ա մեր տան հմար, մեր նամուսի հմար՝ սւրիշ՝ չչինչ: »

«Ոչ որ մարդիկը մարդիկերանց հետ, էնպէս էլ կնանիքը կնաննոց հետ ասում—խօսումեն իրանց խելքի կտրած բաների վրա. տմա ի՞նչ անես, որ խօսածները չեն կարում իրանց մարդին եղ ասեն, ասեն էլ՝ ով չուանի կը դնի: Աղջի, բա Աստօծ էլ խի՞տ կնդանը լիզու, բերան, անկաջ ու աչք տուել, որ ըսէնց պէտք ա կամլէր, որ իրան խելքի կտրածը, իրան լսածն ու տեսածը կարենալ ոչ մի լիասիրա մարդին եղ ասի, մարդն ուրիշանալ կնդայ հետ, կնիկը տիսրի մարդի հետ. ամեն օր խօ հարսանիք չը պէտք ա ըլի, որ ամենքն էլ իրար հետ ուրիշանան, ան մեռել-Աստօծ ոչ անի—որ տիսրեն, սև սուզը մտնեն: Ես իմ կարճ խելքովը, Շուշան ջան, ընէնց եմ զիտում, որ ամեն սհաթ մարդ ու կնիկ պէտք ա խելք խելքի տան, ձէն՝ ձէնի, կուռ՝ կուան, սիրտ՝ սրտի. մարդը տիսրի՝ կնիկը պէտք ա ուրախացնի, կնիկը տիսրի՝ մարդը:

Էսպէս որ ըլենք, Աստծուն էլ գիր կը գալ, էլ ու  
բանդին էլ, մեր մինը հազար կը գառնալ։ Մէնակ  
խօ ինձ վրայ չեմ խօսում, ամենքի...»

—Աղջի, Սալոմ ջան, խօսքը կտրեց Շուշանը, ինչ  
լիզուանիկն ես ըլել. էդ խօսքերը ո՞նց ես իրար անում։

«Ո՞նց եմ իրար անում, հա. գիտամ, թէ սրտումս  
ինչեր կան, բոլազումս ինչեր են զլղում... էրնակ  
նադան օքմնուն, որ սիրտը հանդիստ կ'ըլի։ Ի՞նչ իմաս-  
տուն պէտք ա, որ Սողոմոնի գառնալ, սրտիս գաւթարը  
կարգայ ու մի ճար անի։ Քաղքի կնանիքը հագած-կա-  
պած մեր խաչը ուխտ են գալիս. տեսնում ես՝ ոնց են  
ճլլամորթ ընկած, իրանց մարտկերանց զլխին խանում  
գառած. ամա էդ էն կնանիքն են՝ որ ծառի տիրելը  
վերեխցը որ ընկնում ա նրանց ոտին, ոտը կոտրում ա,  
էնքան են նազուք ու զումաշ. ասա նրանք ի՞նչ օգուտ  
են տալիս իրանց մարդկերանցը, որ էտէնց լաւ ուստա-  
ցնում, լաւ խմացնում, լաւ էլ պահում են. նրանց գր-  
լուխը արել չի տեսնում, մէջքը՝ անձրե։»

—Ե՛չ, Սալոմ, ոտդ ում հետ ես մեկնում. գու-  
հէնց գիտաս նրանք շատ լաւ են անում, որ իրանց  
կնանոնց զուլն են գառնում։

«Զէ, լաւ չեն անում. միջակ պէտք ա ըլի՝ ոչ է-  
նէնց, ոչ էլ ըսէնց։ Բա էս լաւ ա, որ շատ կոանալուցն  
ու վերկենալուցը մէջքիս իլիկը կոտրում ա, շուաքս ա  
սեին տալիս, լիզուս ա բլբլում, խելքս ու ուղուրս  
կամանց կամանց կորչում... Եանի էս, ան ուրիշ գեղե-  
րումն ով չի ըսէնց, ով ա ինձանից լաւ օրում։ Ասած  
ա՝ մի տանու չենք, մի ձէնու ենք։ Բա էս չես լսել,  
որ ասում են՝ գեղացին շատ տանջուելուցն ա մեռնում,  
քաղքին շատ ուտիլ—խմիլուցը։»

—Աղջի, Սալոմ, ի՞նչ ես սրտնեղում. «Ճիպոտն ա  
կնգալ Աստօծը». Էս խօ նոր խօսք չի. Ճիպոտը կնգալ  
ծուռ կողքերը դրստել ու դրստում ա. վայ մեր օրին:  
«Եանի խեղճ կնանոնց կողքը ո՞նց ա ծուռ։»

—Դէ ես ինչ գիտամ, ամենքն էլ ասում են: Հալ-  
բաթ կնանիքը ներքի արտի ցորենն են, մարդիկը վերի.  
ասաց քնթի տակին Շուշանը։

«Ծուռ կողք ունեցողը ծուռ մտքի տէր կ'ըլի,  
Շուշան ջան: Մարդիկը ե՞րբ են մեզ նման ողորմութիւն  
տալիս աղքատին, թաքուն-աշկար հաց ու ջուր տալիս  
քեասիք հարևանին, զըլացներին «քեզ մատաղ, քեզ  
սադաղ» ասիլով լաւ լաւ զրեր անել տալիս, մատաղներ  
տառում, խունկ ու մում ծխում, թէ ինչ ա՝ հիւանդս  
լաւանալ, ան մարդիս բանը յաջող գնալ։ Ո՞ր մարդը չի  
տեսնում կնգալ քաշած տանջանքը տանը՝ մէնակ, դը-  
րանը՝ իրան հետ։ Ո՞ր մէրը իրան որդու կուռը բռնած  
դպա ժամն ու խաչի դուռը, դպա ուսումնարանը չի  
տանում։ Մարդիկն էս բաները ե՞րբ են անում։ Շուշան  
ջան, նհան ես մարդկերանց կուանը. զորթ ա՝ նրանք  
մեր աչքի լիսն են, մեր զլխի տէրը. ամա ինսանը դրուստ  
պէտք ա խօսի։»

—Դրուստ ես խօսում, ընդուր ա մարդդ շատ թա-  
կում քեզ, է՛:

«Լիզուն թակիլուն ա մտիկ անում. իմ հօր տանը  
ասող-խօսող եմ ըլել, իմ մարդանց տանն էլ իմ մարդի  
հետ պէտք ա ըլեմ։ Աղջի, բա կնիկը համ ուրիշների  
հետ չխօսկան ըլի, համ իրան թագն ու պսակի։»

—Էդ վախտը, Սալոմ ջան, մենք սկի հայվանի  
նման էլ չենք ըլիլ։

«Ի՞նչ ես ասում, մարդ աշուղ պէտք ա ըլի, որ մեր կեանքը ալամ-աշխարհին նազլի պէս ասի, մեր սրտիցն ու ջիգարիցը խօսի՝ մեր էս թաքուն մնացած բաղչի դըռները բաց անիլով, թէ չէ՝ մեր խօսալովն ի՞նչ կը դառնայ, ասած ա՝ բող չուալ, բող չանաղ, ոչ տուտ ունի, ոչ պուճախ, հա ածա՛, հա ածա՛...»

Սալոմը խօսքը հէնց կտրեց, տեսաւ ուրիշ երեք կանալք էլ գալիս են գէպի ծառի չուաքը-մէկը գուլըա անելով, երկուսը իլիկ մանելով:

«Ա, կնանիք, եարաք գուք էլ ինձ նման ուրախ էք թէ մէնակ ես եմ»—խօսք քցեց տէրտէրակինը ու ամենքըն էլ նստեցին երկսի մօտ:

—Խի՞ գու ի՞նչ ես, մենք ի՞նչ, պատասխանեց Սալոմը, քու ուրախութիւնն էլ մերը չի՛: Ասա, տէրտէրակին, ո՞նց ես ուրախ:

«Բա գու քու Արտէմին կարդալու ըս պէտք ատամ»—հարցրեց տէրտէրակինը:

—Ե՛չ, էրնակ ձեզ, պատասխանեց Սալոմը, որ ձեր տղերանցը կարգալ պէտք ա տաք:

«Խիչ էրնակ մեզ, խօսեց Զավահիրը, գու էլ կարդացնիլ տուր, ով ա ձեռդ բունում: Առուը մէնակ մնի, երկուսի հմար չի՝ աշխարփի ա, գարդ մի՛ անիլ:»

—Եդ ես էլ զիտեմ, Զավո քիր ջան, ամա չեմ կարում: Իմ տղամարդն ասում ա՝ տաւար ոլտհիլը մեզ կաթն ու, մածուն ա տալիս, կարդալն ի՞նչ ա տալիս: Ես էլ սուս եմ կենում...»

«Ե՛շ—զագէն, կրկին մէջ ընկաւ տէրտէրակինը, ի՞նչ որ կայ՝ զըր միջնին ա, ես զիր չեմ կարդացած, ամա իմ ողորմածիկ տէրտէրիցը էնսպէս պատմութիւններ եմ սուրել, որ ասեմ՝ մարդի լաց կալ. լսողը կ'ասի՛ տէր

Աստօծ, եանի էս փուչ աշխարհը ինչի՞ հմար ա...:»

—Տէրտէրակին, խօսքը կտրեց Զաւահիրը, մենք մըջիւնի օրինակի շունչ ենք, ուրիշ ի՞նչ պէտք ա ըլենք. Աստօծ մեր մարմնին խօ չի կարօտ, մեր հոգուն... Եդ ամեն բանը ես էլ զիտամ: Ամա էս Սալոմը որ իրան մարդիցը գանգատվում ա, ի՞նչ կասես, դրուստ ա ասում: Ես էրկու տարուայ պատկուած հարսն էի, նոր էի իմ մարդի բոլուն ու բուսաթին մտիկ անում, թէ հալա տեսնեմ ոնց մարդ ա...»

«Հէնց էդէնց էլ պէտք ա ըլի: Որդի, Սալոմ, կը-նիկ ազգը արսրզ կ'ըլի, որ մի-մին քեօթակ չուտի՛ խելքի չի գալ. մարդը բիրիլուցը կը բգարի, կնիկը շաղ տաւ-լուցը չի բգարիլ: Ո՞ւր ա էն գանանդա—ծով կնիկը, որ մարդի աշխատանքի առաջին պատ գառնայ, տունն ու գուրսը լցնի: Հէնց զիտաս ուրիշները լաւ օրի են իրանց մարդկերանց ձեռիցը. ամա ի՞նչ անես, քարը վեր են ունում, քարի տակին դնում...»

—Ե՛շ... տէրտէրակին, ես պակաս կնիկ եմ. ամա հեսաբ շատ կայ: «Ճիպոտն ա կնդայ Աստօծը.» սրա ասողի լիզուն լալկի, ջանը քրքրուի...»

«Խի՞ լալկի, նազի ջան, խօսեց Զավահիրը, գու էլ իմ Մարիանի պէս սիրուն-սիրուն տղէրք բեր, եղնա մարդիկ վրա խօսայ: Խեղճը երեխի թուշ չի պաշել, էն ա մազը իրեսին սիպտակել, ըրացել ա:»

Այս խօսքերը նազնի վրա այնպէս խոր ազգեցին, որ նա կարմրեց, զլուխը կախ քցեց, քնիթի տակին կըմ-կմալով.—

—Դու էլ զոռով մարդի ճշքաւուատառ ես անում: Տվողն Աստօծ ա՝ որ չի տալիս, ես ի՞նչ անեմ..»

Տէրտէրակինը նկատելով, որ կոռւի հոտ է փշում,  
շտապեց խօսակցութեան նիւթը փոխել:

«Աղջի, մի սուս: Զավօ, լսել ես. ասում են՝ էս  
վարժապետը գիր անել գիտի, զորժ ա...»

— Լսել եմ:

— Ես էլ եմ լսել:

— Ես ձեզանից վաղ եմ լսել. ի՞նչ ա որ... հարցրեց .

Սալոմը:

«Ի՞նչ պէտք ա ըլի. մեր նազնի հմար մի «կալ  
ու կապ» անիլ տանք, բալքի մի երեխայ բերի, մարդին  
ուրախացնի..»

«Զավօ, վստահ խօսեց տէրտէրակինը, նա Սոլոմոնի  
ու Հովհաննի գրերիցն էլ ունի: Մէնակ խօ նազնի հմար  
չենք գիր անիլ տալ. շատերը կան՝ որ աղաչանք են  
անում, անկաջիս միսը կերել են... Հալա թողէք մի-  
քիչ մնալ, ճանաչուի, սուտն ու զորժը իմացուի, եղնա-  
քիչ մնալ, ճանաչուի, սուտն ու զորժը իմացուի, եղնա-  
քիչ մնալ, ճանաչուի, սուտն ու զորժը իմացուի: Մէրգանց 0-  
բներաններումդ տաք ջուրը համ չի տալիս: Մէրգանց 0-  
սէփը կիմանալ, գիտաք, որտեղից խաբար կը տայ...  
Նէ ուսումնարանը շինել են, սարքն են քցել, որ տես-  
նաք՝ խելքնիդ կը գնալ, հայիլ-մալիլ կը մնաք վրէն:  
Ես թողել էք, սատանական խօսում...»

— Դէ գնանք, տեսնենք, տէրտէրակին ջան:

— Ամօթ ա, աղջի, մարդիկը կը տեսնեն, ասաց  
մէկը:

— Խի՞ ա ամօթ, վրաբերեց միւսը թաքուն կը գը-  
նանք, գոնիցը մտիկ կ'անենք: Որ կասեն ի՞նչ էք ու-  
գում. կասենք—հաւ ենք կարցրել, ման ենք գալիս...

Տէրտէրակնոշն ամենքն էլ ստիպեցին տեղիցը շար-  
ժուիլ ու փսփսալէ ճամբալ ընկնիլ գէպի մ արտքը:

Նորանց տեսնողը կը կարծէր թէ՝ գերեզմանատուն են  
գնում այդ կատարելու:

«Աղջի, ուր էք գնում» — ձայն հանեց Անախանումը  
որ գալիս էր աղբբիցը՝ կուժն ուսած:

— Սուս, քու աչքն էլ. ինչ ես բղավում, թառ ու  
թառակին իմաց անում, պատասխանեց Զավահիրը:

«Խի՞ գոզեր էք:»

— Գոզը գու ես....



ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ.

Տէրտէրը աշուղ եղգար-0ղու և ժողովրդականաց  
հետ խաչով ու մաշտոցով ուսումնարանի հաստատու-  
թիւնը բարեմաղթեց: Եւ այդ հանդէսը խաղաղութեամբ  
կատարուեց այն օրից երեք օր յետոյ՝ երբ գիւղացիք  
նահապետանց կալում միաբանուելով՝ ընդունեցին Օվա-  
նէսին...

Փափուկ սեռը գեռ անկիւններից ծկրակում էր տես-  
նելու՝ թէ ի՞նչպէս մարդ է վարժապետը: Նորա դժնդակ  
գէմքը գեռ չէր ընդհանրացել: Նա նոյնպէս հետամուտ  
էր ճանաչելու՝ թէ ովքեր են իրան նայում, ի՞նչպէս,  
ի՞նչի՞ համար...

Սովորութեան համաձայն՝ ամեն տուն էլ ուզում  
էր պատուել վարժապետին, մանաւանդ նրանք՝ որոնք  
հասուն տղալ ունէին կարդացնելու: Խշուղ եղգար-0ղ-

լին, որ եկել էր տեղս մարաքա ասուած ժողովրդական հանդէսը կատարելու ու ցորեան ժողովելու, էլ միջնց չունեցաւ սկսել իր գործը. տէրտէրի ու վարժապետի հետ իշխանների տներն էր պատում ու իր խաղերով՝ զմալլեցնում՝ ամենքին: Հրաւէրքում որքան էլ խնդրում էին վարժապետին գինի կամ օղի գործ ածելու, նա մերժում էր. «ըշտէ, իսկի բնաւ չեմ գործ ածել. օղին մարիկն է մեղաց, ըմմա գինին մարիկը չարեաց:» Այս յատկութիւնը նրա պատիւն աւելի բարձրացեց...

Արամը, Մարգարը և Ղազարը վարժապետի առաջին անգամ ընդունած աշակերտները եղան: Այնուհետև ուրիշ միքանիսը ևս ընդունվեցան: Բարի վարժապետը օրը Յ թէ Կ անգամ մտնում էր մարաքը և որպէս թէ դաս էր պատմում երեխաններին:

Ում հայրը տանը չէր, մայրն էր իր որդուն յանձնում վարժապետին՝ առաջուց հօր կամքը առնելով: Վարժապետը չխօսկան կանանց իշարաթներին շուտ ընտելացաւ: Մի տեսակ իշարաթ կայ, որ կատարվում է ձեռքերի շարժման միջոցով և հասկացնում է հետեւեալը. «վարժապետ ջան, միսը քեզ, ոսկորը մեզ:» Կը նշանակի, էլ Բնչ կը նշանակի, յետին տխմար պէտք է լինի մարդ, որ չըմբռնի ալդ առածի իմաստն ու նըպատակը:

Ամեն ծնող էլ ալդ ալլանդակ առածը մըմնջում էր վարժապետի մօտ, որ անհասկանալի չէր մնում նաև երեխային:

Վայ քեզ, օրե՛ր: Մալրական ալդ առաջին խօսքը ես էլ լսեցի վարժապետիս մօտ՝ հենց մարաքի շեմքումը, որից յետոյ անծանօթի սեաւ ու կնճռոտ աչքերը

խորհրդաւոր ակնածութեամբ սևեռվեցին իմ մանկական ճակատի վրա: Սիրտս թռ.թռաց և մօրս ձեռքը պինդ սեղմելով՝ երեսս վարագուրեցի նրա մին թանի փէշէրքում: Սակայն՝ զմւր. ինձ նստացրին նշանակեալ տեղը՝ քարի վրայ... Եւ շատ խաւար սպառնալիք միշտ սրբում էր իմ աչքերի գառն արտասունքը...:

Նոր աշակերտի գլխին անծանօթը ձեռք քսելով՝ նստեցնում էր իր տեղը ու ասում. «ըշտէ, նստէ աստեղ, ըմմա ձէնիկդ կտրէ:» Երեխան տեսնելով իր նմաններին նստած՝ ինքն էլ ակամալ նստում և լեզուն ու պոռշը ծամելով, պլշած նախում էր սրա ու նրա վրա Միքանիսը՝ որ տէրտէրի մօտ փափ ասել էին սովորել, ձեռքը բերաններին կամաց խփելով, «սուս-սուս» էին անում, որպէս թէ կարգն են պահում...:

Այս կերպով ժողովուել էին տասն աշակերտներ, որոնց հետ վարժապետը զեռ մլուշու էր անում: Արամն ու Մարգարը մի-մի ժամագիրք և ութի կանոն սազմոս ունեին. մնացածները զեռ ոչինչ: Վարժապետը մի-մի կտոր թղթի վրայ «տպաձեռք» այբ-բէն էր գրել ու տուել վերջինների ձեռքը: Արամն ու Մարգարը նըրանց սովորեցնում էին տէրունական աղօթքից մի-մի տուն: Առ ալժմ երեխանց համար կարգալը հեշտ էր թվում և ալդ տևեց հինգ օր:

Ոչ մի տեսակ պատժի գործադրութիւն չը կար: Տէրտէրը վարժապետին խրատել էր, որ երեխանցը շուտապ չը խռանացնէ զանազան պատիժներով: Այս այն հետեւանքն ունեցաւ, որ նրանք իրար խրախուսում-գուրգուրում էին կարդալու համար: Սակայն, գժրագտաքար, երեխանց մեծ մասը զիւղումը չէր: Նրանք իրանց ծնողաց հետ գուրսն էին գտնվում՝ ամբալին աշխատանքով:

Տէրտէրն ուսումնարանը մտաւ՝ իր խոստման համեմատ՝ հէնց այն միջոցին, երբ Արամն ու Մարգարը վարժապետի առաջին չոքած, գլխակոր «Համբարձի զաշս իմ» փոխը տուն-տուն ասում էին: Օրչնած հոգին իր ձեռքի գաւաղանով դաս ասողների գլխին կամաց թմբացնելով իմաց արեց իր ներկայութիւնը և վրաբերեց. «այ տղայ համբարձին նոր էք սովորում...»

Դաս ասողները տեղներիցը ծլունդ էլան: Վարժապետը գոռաց. «Ըշտէ, ամենքդ ալ ոտաց կանգնէք:» Մնացած երեխալքը չը հասկացան. տէրտէրը վրա քցեց. «Որդիկ, երբոր ես գոմ, կամ ուրիշ մարդ էստեղ մտնի, ին սհամթը դուք կանգնեցէք: Օրէնք ա, լսեցիք:»

Նրանք կանգնեցին ու չխօսկան հարսի պէս՝ գլխով արին:

«Բարի վարժապետ, խօսեց տէրտէրը, էս երեխէրքը առանց գրքի անմեղ են գալիս. չարութիւն էլ կանեն: Եքուց մարդ ա գնում քաղաք. էնտեղ ես մի բարեկամ ունեմ-Աւետիք Եփէնճեանցը, որ գիրք ծախող անրան փող զարկենք, գրքերն ստանանք ու յետոյ երեխանցը նոր հաւաքենք: Խ՞նչ կ'ասես:»

— Ադիկ աղեկ է, ըմմա...

«Ամա ի՞նչ: Հինգ օրից յետոյ գնացողը յետ կը դառնայ ու գրքերը կը բերի: Միայն էտ ասա, թէ ի՞նչ գրքեր են հարկաւոր, որ բերել տանք:»

— Ըշտէ, չիս գիյնա... մէկ քանոն, ուժ քանոն սաղմոս Դաւթի, ժամագիր, սուրփ աւետարան, որփ Մատիլդա, դոսկա, չոթքը: Ասիկ են տղոց կարթլուն, ես ադոնցով շատ փան կէնիմ...

«Բա թոռողիթ, դալամ...»

— Ադիկ ալ պէտք են, հըա...

«Շատ լաւ: Թէ էս երեխանցը մենք դաստուր տանք, գնան տները» — ասաց տէրտէրն ու խօսքը դարձեց երեխաներին: «Ադա, մուրախաս էք, գնացէք ձեր տները, ոտն ու ձեռնիդ պնդացրէք: Զեր հօրն ու մօրն ասեցէք, որ թազա զըքեր առնիլու հմար փող հազիր անհն: Ամեն օր վարժապետի հմար թաժա հաց, պանիր, ձու, եղ ու կերակուր բերէք մեր տուն: Իմացաք. ասածս մտահան չտնէք:»

Երեխալքը ժպտալով գլխով արին:

«Հինգ օր խաղ արէք, եղնա կը զաք, որ թազա զըքեր տամ ձեզ: Թէ, վարժապետի ձեռը պաշեցէք ու գնա ցէք:»

— Հըամանը կատարուեց:

## Հ.

### ՄԱԿԱԿԱՆ ԿԵԱՆՔ

Գարնան վերջի հով ու զով քամին էր փչում, անտառը խշշում, կանաչը ժպտում, ծիծաղում: Սարերը ու հանգերը գոյն գոյն ծաղիկներով են զարդարուել, ոսկէ հասկ արտերը լիք լիք կատարով ժարմացել, տարու բերվելով հէրանց են գնում: Եւ թռչունները ակոսների մէջ հազար մի տեսակ ծլվլում են, երգում... Տես այգիները դրախտ են դարձել, կարմրիկ պտուղներցուեր ու մոշեր ուտող են կանչում: Այսպէս ամեն տեղ,

ամեն սար ու ձոր պայծառ է, ուրախ և մանուկներին կանչում դէպի խաղ...

Ուսումնարանից հենց որ դուրս եկան, տղերքը ցըռեցին իրանց տները, մի կտոր հաց կերան, բան իմաց արին իրանց տանըցոնց ու էլի մի տեղ հաւաքուեցան:

«Տղերք, ուր գնանք» — հարցըց Արամը:

— Բաղերը գնանք:

— Զէ... ես-ես աս-ասսեմ, վրաբերեց կզկզան Նազարը. գը... գ-գնանք ձ-ձ-ձաւ —

— Ճաւճաւը, ճաւճաւը գնանք, խօսքը կտրեց Մարգարը, էնտեղ տաւարածները լզանում են...

Այս խօսքը դեռ չը վերջացրած՝ տղերքը զնւ արին ու թռան:

~~~~~

Ճաւճաւ գետը բարձր ապառաժից մշտական գոռում-գոչումով ցած թռչելով՝ դուրս էր քանդել քարափի տակից քար ու աւազը և տեղն ու տեղը կազմել մի լճակ, որը բոլորին էլ յայտնի էր պատահ ն-դ ե օ լ անունով: Երեխաները ապառաժի երեսից ուսնատեղեր գտնելով, չորեքթաթ անելով ցած էին գնում այնտեղ լողալու և ձուկ որսալու: Բայց այդ գեօլն էլ իր որսն էր անում նրանցից, որոնք այնքան լլլլում էին: Ամեն տարի մի կամ երկու երեխալ ջրին գոհ էր գնում: Խելօքները տը-դայի խեղովելու պատճառները բացադրում էին թէ՝ քաչքերը կուլ են տուել, բոթել ու քցել են ջուրը և թէ այդ քարափը քաչքերի բուն է..., Տեղի գերքին ու անմատչելիութեանը նայելով, ճշմարիտ որ՝ այդ քա-

րափը քաչքերի բուն էր: Ես շատ անգամ երեսիս խաչակնքելով, ահահար ու գողահար ցած եմ նայել անդունդի գլխիցը, աչքերս շաղուել և խկոյն յետ յետ եմ փախել...

Այգիների ճանապարհը այդ ժայռի գլխովն էր անցնում: Հարսները այգիներից վերադառնալիս խնձոր ու տանձ էին շպուտում դէպի ջուրը՝ ցած. լեղորդները մինը միւսի վրա ընկնելով, ծկլթալով, բռնում էին որսը ջրի երեսից...

Ահա, դէպի այս կողմը վազեցին մեր մ օ ն թ ե թ ը: Այս տեղ, լողալու միջոցին, ինչ լեզուով էլ կուզես, ասում-խօսում և երգում էին. իսկ երգերը շատ պարզ, հասկանալի և մանկական սրտին սիրելի էին: Այստեղ տաւարածներից մէկը ալսպէս էր երգում, երբոր մօնթերը արդէն ապառաժի գլխին կանգնած էին.

Գարունքը կուենք պտղի խակը,

Ամառը մտնենք ջրի տակը...

Աշունքը որ գալ՝ մտնենք բագը,

Ցուրտ ձմեռը՝ ընկնենք ծակը...

Ամենքն էլ արձագանք տուին երգողին մի առանձին հարալ-հրոցով: Աշակերտները անդունդի գլխիցը ծկռտացին. Արամը խրախուսվեց ու սկսեց —

Քարի գլխին ձէն տանք

Քաչքերին խոկի տանք...

Չորեքթաթ անելով,

Աղբէր, ձեր կուշտը գանք...

Այս երգին ևս հետևեց հարալ-հրոց, ապա նրանք ցած գնալով մինչեւ ո ը կ ը կ ա ն տ ե ղ ը՝ այնտեղից քամակների վրա սոթ տալով՝ թըլըլսկացին տակի ճմճմուտի կանաչ խոտի վրալ:

Տաւարածների գլխաւորը, Սողոմոնը, շողոքորթութեամբ խօսեց. «Ադա, փախել էք հա... Հիմի որ ձեր ձեռն ու ոտք կապեմ ու էլ յետ զարկիլ տամ ուսումնարանը, գլխնիդ ջարդիլ տամ, ոնց կանէք:»

—Սողոման ջան, իմ արևը, փախել չենք, պատասխանեց Արամը:

Միւս երեխանները տեսնելով նորեկ մօնթերին, հետաքրքութիւնից շարժուած, ջրիցը դուրս սողացին ու վրթվրթալով, ատամ-ատամի տալով, շտապեցին իրանց շորերը հազնիլ: Արամն այդ միջոցին պատմեց այն բուրը, ինչ որ պատահել էր ուսումնարանումը և դուրսը: Ամենքն էլ բերանները բաց լսում էին: Երբոր այն էլ լիշից՝ թէ ինքը միւսերին տէրունական աղօթքը սովորեցնում էր, շատ ծիծաղեցին:

«Ադա, Արամ, դու էլ դրանց վարժապետն ես, էլիժմիտով խօսեց Սողոմոնը:

—Հա, բա ի՞նչ ես իմանում. դրանց պապիցն էլ շատ գիտեմ..

«Ադա ջան, սկի թակում էիր:»

—Զէ, իմ արևը: Որ ուզենալի, էնէնց սկլա կը տալի որ... Ամա մեղքս զալիս էր: Դրուստ չի, Արտէմ ջան:

—Սկլա... աչքերը շրջելով ձալն հանեց Արտէմը:

—Զէ, Արտէմ, սուստ մի խօսիլ, իմ ձեռին էր, որ ուզենալի՝ լաւ թարթալոշներ կը տալի:

«Դէ լաւ, լաւ, ընդհատեց Սողոմոնը. Էս ասա թէ սկի բան սովորեցին, էն խիժի պիժին գլխի՞ ընկան...»

—Տնաշէն, էդ հեշտ ա: Սկի երեսներին դրուստ խաչակնքիլը չը սովորեցին: Տէրունական աղօթքիցը իրեք տուն անջաղ գլխի ընկան...

«Ադա, ես ձեզ մատաղ, տիմունականը ի՞նչ զատ ա:»  
—Տիմունական չի, տիմունական...

«Բա ի՞նչ:»

—Տէրունական:

«Հա. էդ ի՞նչ ջանաւար ա, որ կարում չեն սովորիլ:»

—Դու ի՞նչ գիտես, որ էդ գետենաս:

«Դէ ասիլ տուր, լսենք իմանանք:»

—Արտէմ, քու սովլածը մի ասա, թող լսեն, ասաց Արամը հրամայողական ձայնով: Արտէմն առանց երկմտելու, ծիծաղն երեսին, սկսեց ասել. «Հայրը մէ երգին, սսւրբ եղցին անուն քո, գեսցէ արքայութին քո, եղցին կամ քո երգինս-երկիր:»

Ամենքն էլ զարմացած մնացին: Սողոմոնը հարցըց:

«Էլ չկայ, Արտէմ ջան:»

—Զէ, սլոծանք:

«Զեղ մատաղ, խէլիմ բան էք սովորել. մենք էլ եարաբ կարանք սովլիիլ:»

—Խի չէք կարալ, հաց ուտող չէք, վրաբերեց Մարգարը:

«Բա երբ պէտք ա կարդալու գնաք:»

—Մի շաբթից եղը: Ով որ կուզի, իրան մօղն ասի՝ ոտն ու ձեռը պնդացնել տայ ու գայ կարդայ: Հենց հեշտ ա որ...

«Ադա, Մարգար, սրաէս ա գալիս, թէ ես էլ զամ կարդամ:»

—Կարդա էլի, շեշտեց Արամը. տաւար պահելով ի՞նչ կը գառնաս:

«Մաքի դուք ի՞նչ պէտք ա գառնաք: Մեր կովերի կաթն ու մածունը էլ ուտիլ չէք...»

Խի՞, Սողոման ջան, կարող չենք տէլուտէր դառնա՞լ:  
«Բա ինչ. ես ել ձեռդ կը պաշեմ:»

— Իմ արևը, կը չոքես ու լնէնց կը պաշես. խելքը որտեղ ա.... Աղա, Միխայիլ, Սաքօ, դուք կարդաւ չեք ուղարմ...

## — 40 կարգանք:

«Թուք, դադէն»-Արամը դիմեց միւսներին:

—Убьёт...

«Убо ѿшъ, пілъ»

—Ես ել կուզեմ...

«Թէ մենք գնում ենք, ով որ ուզում ա կարդալ — մեղ հետ գայ:» Այս խօսքից լետոյ Սըրամն իր չորս ընկերների հետ ճամբար ընկառ: Տաւարածներից փոքրերն ուզեցին հետևել գնացողներին, միայն Սողոմոնն իր դադանակի ծալը ցոլց տուեց — «Հլա ի՞նչ վախտի կորդալ ա...»

Տղերքն ուրախ-ուրախ դուրս եկան ծաւճալի զարի-վայրը ու Հասնելով ալգիներից բարձր մի կանաչ տախտ տեղ, սկսեցին «պահպակ» պահպակ, իմ քարը պահպակ՝ խաղալ, բայց տեսան որ անխաջող է անցնուած, խաղը դարձրին «ճռւտ-ճռւտի», ամեն մէկը մի քար գնելով առաջին ճռւտի տեղը:

—իմ տակին կուտ,

Բուլ առկին ճուղ.

Ես թուշեմ, քունը իւլեմ,

Դուքս, իմ խյու-

Ասելով այնպէս էին թռչում նրանք ու իրար ճուտ խլում, որ կառես թեւաւոր լինեին: Երկար շարունակելով ալդ խաղը՝ միակերպութիւնից էլ ձանձրացան և ապա բազատեղերից տռ տռ ու կ, թթ թնջուկ, շուշան, խինձը և ալլ ալսալիսի կանաչեղէն քաղեցին ու անուշ արին:

«Բաւական է, խօսեց Արամը քրտինքը սրբելով,  
հիմի էլ եկեք զնանք բաղերը:»

— Զէ, Արամ ջան, պատսխանեց Մարգարը, միքիչ նստենք Էս կանաչ տեղը, գիշանանք, եղնա դնանք:

Վարդարին լսեցին, ամենքն էլ շարուեցին Արամի չորս կողմբ:

«Տղերք, ով կարայ լաւ հեղիսած ասիլ...»

—Ե՞ս, Արամ ջան, վրաբերեց Արտէմիք:

— Խի՛. քու մէրը իմ մօրիցը շատ հեքիաժ գիտի՛,  
վրա բերեց Մարգարը:

«Ոչ դու, ոչ Արտէմիլը. ես կասեմ՝ թէ կուղէք»—  
մէջ բնկաւ Արամի:

Գուշ ասա, ձայն տուին ամենքը. ամա կարճ—որ  
բաղերը պէտք ա գնանք:

«Լաւ, դէ լսեցէք: Կինում ա, չի լինում մի քըրաքըռած կարպետ, աղբահարումը կունձու պէս վեր ընկած: Մի պառաւ անց կենալիս գտնում ա դրան, ուրախանում ու տուն տանում: Նա հենց ա իմանում՝ թէ կարպետի միջին ոսկի կըլի: Որ մթնում ա, կրակին բցում — լիս ա անում տունը, կազուկը բաց անում, տեսնում մի մարդի գլուխ արինշաղախ: Զեռիցը վէր ա քցում, ուզում ա գուրս փախչիլ: Պլուխը ձեն ա տալիս. «կանց, ուր ես գնում, խի՞ ես վախում: Արի, քեզ

մի բան հարցնեմ, թէ իմացար, հոգիդ գլախտի փայ ա, թէ չէ՝ կարակարասը կընկնես:» Պառաւը մնում ա շը-վարած. «Տէ՛ Աստօծ, ի՞նչ կըակի մէջ ընկայ»—ասում ա, ու հարցնում: Ասա, ալ գլուխ, ի՞նչ բան ա:» Գլու-խը հարցնում ա. «մարդի գլուխը հեշտ կը կտրե՞ն, թէ մըջիւնի:» Պառաւը պատասխան ա տալիս. «գլուխը գլուխ ա, մարդի ըլի թէ մըջիւնի:» Երկուսն էլ մեղք բան ա: Մարդն իրան հմար ա ապրում, մըջիւնն իրան, արջն էլ իրան: Աստօծ սարը տեսնում ա, ձինը գը-նում, ամենքիցն էլ իրան ու գեօրա մեղք ա հարցնում:»  
—Որ էդէնց ա, թէլը կարեց Մարդարը, էն ով էր կտրել էն խեղճ մարդի գլուխը. մեղքը չէ՞ր...

«Թուրքերն են կտրել, ով ա կտրել»—վրաբերեց Արամը:

—Դու ի՞նչ գիտես:

«Ախը պառաւն ա ասում: Մարդի գլուխն ով կը կտրի, թուրքերն էլի—գիտում չէ՞ք:»

—ԱՌի, թէ կը մեծանամ, թուրքի տղին գիտես ի՞նչ կանեմ...

«Սնև, սնև, Արտէմ ջան, թողէք հեքիաթը վեր-ջացնեմ է...»

—Կաց Հլա, Արամ ջան. բա որ մըջիւնին սպանիլը էլ մեղք ա, մարդիկը խի՞ են նրանց կլնճորելով անց կենում...

«Մարդար, հենց խօսում ես, կասես ծծկեր ըլես: Ո՞վ ա մըջիւնի հետն ընկնում, թէ սպանենք նրանց, իրանք մեր ոտի տակն են ընկնում ու կտորվում են մենք ի՞նչ անենք: Սնև կացէք, ասեմ, պոճնեմ, որ հոգիս կիսատ չը մնայ:»

Եւ նա շարունակեց.

«Գլուխը տեսաւ որ պառաւը գլուխստ պատասխան տվեց, ուրախացաւ ու հարցրեց. «Նանի, իմ բողազն ով ա գուրս կորել:» Պառաւն էլի միտք արեց ու ասեց. «Որդի, քեզ մորթողը թուրք ա ըլել. նրա մաջէն կոտ-րի:» Գլուխը զարմացաւ, թէ նանը որտեղից իմացաւ էդ բանը ու եղնա տղաչանք արեց, ասեց. «Նանի, խօ էս ա ես մեռել-պոծել եմ, հիմիկանց եղև գու երե-խանցը խրատի, որ երբոր մեծանան, թուրքերի նման՝ մարդի գլուխ չը կտրեն. իմացա՞ր:» Պառաւն ասեց. «ԱՌ բալա, ես պառաւ կնիկ եմ. ես էլ երեխայ չեմ բերել:» Գլուխն ասեց-Աստօծ կը տայ—ու աչքիցը թր-ռաւ, կարպետն էլ հետը թը՛ռու...»

—Արամ, բա գլուխը կը թռչի:

«Աստծու բան էր. կարպետն ու գլուխը իրար հետ թը՛ռու, թռան...»

—Եղնամ. պառաւը...

«Պառաւն ուզեց բոնի, էլ կարաց ոչ: Հարիր տա-րուցը եղը պառաւին հարիր հազար տղա ըլաւ....»

—Չէ, էդ սուտ ա, վրաբերեց Մարդարը:

«Վահ, իմ մէրը սուտ կասի՞. նա ամեն բան էլ գիտի, Մարդար ջան:»

Եղնամ:

«Եղնամ, աղբէր, չարն էնտեղ, բարին էստեղ: Աս-տծանից հինգ խնձոր կաթեց, չորսը մեզ, մինն էլ ա-լամ աշխարհին:»

—Պոծար:

«Հա. լաւը չէ՞ր:»

—Շատ լաւն էր, ասեց Արտէմը:

—Ես սովորեցի, վրաբերեց Մարդարը:

—Ես էլ...

«Թէ հիմի վեր կենանք, ասաց Արամն ու ամենքն էլ կանգնեցին:

Տղերքն այժմ «զու» արին ու դէսլի ներքև վագեցին: Պատի գլխիցը թռան ընկան տէրտէրանց ալգին: Ալստեղ չը կշտացան, Արտէմանց ալգուն ալցելեցին: Ալնտեղից էլ շէմքաքարի գլխավը ներս սողացին Միրզանց Օսէփի ալգին, ուր խօմանգուր խնձոր ուտելիս՝ ալգեպանը վրահասաւ ու յանկարծ Արամին բռնելով՝ գոռաց. «Եղինչ էք անում. ուտումէքը. հիմի էլ ես ձեզ կուտեմ»: Արամի ընկերները ճարպիկ գտնվեցին, թռան ու հեռու, սպատի գլխին կանգնեցին: Ալդեսանը ուռի ծառի բարակ ճղնելով Արամին կապեց հնձանի առաջի հաստարմատ թթենուցը: Արամը լաց էր լինում...

«Ե՛՛, բաղմանչի, բղաւեց Մարզարը, քեզ հմար մի հաւ կը բերենք, բաց թող մեր ընկօրը.»

—Հաւը բերէք, եղնաւ բաց թողնեմ: Ալս եղաւ քռնակալի պատասխանը և ապա Արամի ականջներիցը քաշեց, մի քանի լաւ թաթալոշներ տուեց...

Ընկերները Արամին կապուած տեսնելով ու նրա հեկեկանքը լսելով, չիմացան ինչ անեն: Երկուսը վագեցին հաւ բերելու, որոնց գնալզալը երկու ժամի չափ տեսեց: Արամին ազատեցին...

Երանի թէ մեծ մարդիկն էլ ալնքան ընկերասէր, անմեղ սիրով կապուած լինէին իրար հետ, ինչպէս ալս փոքրիկները:

Ճանապարհին հարցըց Արամը. «Արտէմ ջան, հաւը մնց բերիք:»

—Մեր տան գուռը կոխպած էր: Ես գոմի աղբածակով նի մտայ, հաւը րոնեցի ու էլ եղ էնտեղով գուրս եկալ, բերի:

«Բա որ քու մէրը հաւերն ականի, տեսնի պահաւա ա:»

«Ե՛՛. կասենք ազուէսն ա տարել, չախալը կերել...

«Ես ձեր գասերը լսու կը սովբացնեմ, բալա ջան, գուրք որ ինձ ազատեցիք էն թաթուլսի ձեռիցը:»

Արամի փոքրիկ սիրով երտիստագիտութեամբ լըցուել էր...

Ալսովէս զրոյց անելով, նրանք հասան ա. Աստուածածին ուխտատեղին, որ գտնվում է գրսի—բերգում.\* ) ներս մտան տաճարը և իրանց մանկական բերանով ըսկուեցին ազօթել առ Աստուած: Արամը ինչ տեղից ու ինչ սպատիերից էլ համբուրում էր, նրանք էլ նոյն տեղին էին դիմում:

«Ով Աստուածածին, մեզ շնորհք տուր, որ լաւ կարգանք»-տասաց Արամը:

Ամենքն էլ կրկնեցին նոյնը բարձր ձախով:

\* ) Ծամշուրգանի ի չնումն քաղաքաբեղի է եղել և ունեցել է իր անտարիկ բերգը, որը մինչեւ պյուր էլ կիսակործան մեռմէ: Քարարձաններն ու հյակապ տաճարները մինչ պյուր յեշեցնումն նրան տիրողների երրեմական փառքն ու գամշը: Երբզը երեք մատի է բաժանած—իր պարիսպներով: Դը սիրերգ, մի ջերերդ, ները ի-րերդ: Յիշեալ ուխտատեղին զօրաւոր և հրաշագործ խաչերից մեկն է համարվում շրջակայի գիրերից, որոնք նեղ միջոցներում ՚երա պաշտպանութեաններ գիմնում:

«Տղերք, ամենքդ էլ ձեր մտքումը աղօթք արէք,  
որ լաւ կարգանք, մեծ-մեծ մարդիկ դառնանք—տէր-  
տէր, չինովնիկ, մովրով, վարժապետ ու մելիք ըլենք:»

—Ենքան մեռնենք ոչ, վրաբերեց Մարգարը, որ  
էդ խօսքերը կատարվեն: Ամա ես մելիք ու միք զա-  
պէտք ա դառնամ...

—Ես էլ վարժապետ կը դառնամ, կմկմաց Արամը,  
դէ սլաշեցէք ծոհար խաչիցը: Երբոր մեծանանք, տը-  
ղէրք, կը գանք մատաղ կանեմք...

—Ես մի աննշան մատաղ կ'անեմ, վրաբերեց Ար-  
տէմը:

—Ես-ո մի է-էրինջ-ջը կա-կականեմ, կզկզաց Օսէփի  
տղէն՝ Ղազարը:

Տիրամօր անարատ սլատկերը, որ սեղանի վրալ բազ-  
մած էր, երեխանց գիմացը ծիծաղում էր. Նրա չորս  
կողմին չորս հրեշտակներ խաղում էին...

Երեխայքը խաչքարերին անժիւ համբոյներ տա-  
լուց յետոյ՝ դուրս եկան:

Արևը դեռ մայր չէր մտել. ծառերի կատարները  
շոշողում էին: Երկնակամարի տակ կիսաբոլորակ լու-  
սինը երեսում էր: Երեխայքը դեռ ձորի գլուխը չէին  
հասել, որ Արտէմի բարակ ձայնով խաղը թմրած ար-  
գեպաններին սքանչացրեց:

Աշըլ ամ-ման ամ,  
Քորփա ամ-ման ամ...

Արտէմ, ձայն տուեց Արամը, ադա հայերէն տաս,  
հայերէն. բա քու մէրը քեզ խրատ չի տուել:»

—Դէ լսեցէք. հայերէն եմ ասում.

«Սարի գլխին խոտ չը կալ,  
Չորի միջին ջուր չը կալ..  
Անըան հարսի խնոցում  
Կարագ չը կալ, եղ չը կալ. Շ.Շ.»  
«Էդէնց կասեն, չը հաւանեց հպարտ Արամն ու  
ինքն սկսեց.

«Ես եմ քու ազիզ ալլէրը,  
Սիրտս ա մտել քու սէրը.  
Էսէնց շատ տաղեր գիտեմ,  
Շանց ա տվել իմ մէրը.»

—Աղա, Արամ ջան, ինչ լաւն էր Է... խրախու-  
սեցին ամենքը. աշուղ Վահրին էլ չի կարող էդէնց  
ասի: Ասա, քեզ մատաղ, ասա:

«Խաչի դրանն ենք—մուրազնիս տալ,  
Աղօթք անենք, որ շատ շնորհք տալ.  
Թէ հառամ ես—միտքդ ծուռը,  
Հրէղէն սուրը գլուխդ տալ.»

Ամենքն էլ գոռացին. ամէնէ:  
«Ել ասում չե՞ս, Արամ ջան, հարցըեց Մարգարը:  
—Զէ. ձէնս կտրուեց: Մինն էլ ալլըի գլխին կա-  
սեմ ու պռծանք, գնաց.... Ես խօ մէնակ էդ չը գիտեմ,  
հազար բան: Ենալիս պունգլը կասեմ, որ ձեր սլապերն  
էլ չեն գտնի: Ես ի՞նչն ա—

«Սարի ծէրին վսպում ա,  
Աւ ամբերին վախցնում ա,  
Հնձլորներին հովցնում ա:»  
—Քամին ա, պատասխանեց Արտէմը:  
«Դէ լաւ. Ես ի՞նչն ա—  
Մանուկ, մանուկ, դու շատ քնուկ,  
Հէնց որ զարթնես՝ անես լալուկ:»

— Երեխէն ա, պատասխանեց Մարգարը:

«Ես ի՞նչն ա—

Աչքերը չուցեց, ձեռքերը փռեց,

Կատարը ճղեց՝ մեզ ծաղիկ տուց:

Մի քանի անգամ կրկնել տուին այդ հանելուկը,  
սակայն՝ չը գտան:

«Ոչ ով չի գիտում, հարցը Արամը, Թիֆլիսն  
ինձ տուշքը, մասեմ:

Դազարը մէջ ընկաւ, կակազեց, բայց Մարգարն  
արգելեց—ասելով. «Դազար ջան, ես որ չեմ գիտում,  
գու էլ չես գիտալ: Դնո՞ւ, Թիֆլիսը քեզ տուինք, Ա-  
րամիմ:»

Ուտեմ, խմեմ Թիֆլիս,

Հագնեմ, մաշեմ Թիֆլիս,

Տան տեր դառնամ Թիֆլիս,

Մեղրում ծորամ Թիֆլիս,

Ես ձեզ պահեմ Թիֆլիս:—Մանուշակի  
թուփին ա:

—Ի՞նչ հեշտ ա էլել, ձայն հանեց Մարգարը, դէ  
մինն էլ ես ասեմ. Ես ի՞նչն ա:

Քայթ, քայթ, մի չուալ ցաքատ,

Ոչ կոյժ ունի, ոչ էրկաժ:

—Աստամներն են, պատասխանեց Արամը: Մար-  
գարն առնուեց. «արա դէ ինձ նման բեր անկապուկի  
ասա. տես—

Քարաթնիթոշ, տմբին տուր,

Գլուխդ վեր կալ քարին տուր:»

—Եդ հեշտ ա, Մարգար, ասաց Արտէմը, ուրիշ  
ասա:

«Թէ լսեցէք, տես—

Պունգլն ու բլիթ մեր տանը,

Կատուի պոչիկ ձեր տանը.

Բեր խրովէ մեր տանը,

Տար կծոտէ ձեր տանը:»

—Ետզը խօ ծը-ծը-ծծկեր-րըն էլ ա զի-զի-զիտ-  
տում, կզկզաց Դազարը:

«Ես էլ մինը կ'ասեմ, ասաց Արտէմը ու ոկոեց —

Մեղրիկ մատ-մատ,

Զամչիկ հատ-հատ,

Մէկէլ տեսանք

Տեղը գարտակ...»

«Թէ մինն էլ Ես»—ձայն հանեց Արամը ու ոկոեց:

Սիրի —սիրին սարի գոշին,

Սարի սմբուլ մեր տան հօշին:»

«Դազար ջան, աբա մինն էլ գու ասահ—ասաց  
Մարգարը:

—Մար-մարգար, շշատ զի-զի-զիտտամ-ամմ.....

—Զի կարում, չէ, ընդմիջեց Արամը, շատ գիտալ,  
ամա լիզուն վրա չի գալիս: Տղերքը քմքածիծաղ տուին:

Արևն էլ չը կար: Աստղերը նոր պսպղում էին: Լու-  
սինը ծիծաղում էր նայողի ճակատին: Գիւղի տները  
այստեղ ու այստեղ ցցուած երեսում էին: Տեղ տեղ գը-  
րան ճեղքերից նկատվում էր ճրագի աղոտ լոյսեր: Ե-  
կեղեցու պատերը սիպտակին էին տալիս:

«Արամ ջան, ասաց Մարգարը, հիմի տուն ենք  
գնում ու մի բան չենք տանում տան համար:»

—Հալբաթ պէտք ա սինդը ուկից, սի բէխից  
ու խազազից քաղէինք ու տուն տանէինք. Հիմի իմ  
մէրը ինձ սպասելիս կ'ըլի...

— Բան չը կալ, վրաբերեց Արտէմը, էքուց էլ գընանք Անծոտ-ճալէն ու քաղենք:

Հենց այս խօսքում Մարգարը լետ ընկաւ, տրիփ տանգը կապեց, գուլը ծուլպը շինեց ու տեսնելով ընկերները քսան քայլաչտի հեռու են՝ ձայնը բարձրացրեց—

Կարպեալ ծակ ծէր արա,  
Կոճակները մէր արա.  
Չուալ ունես, տանդ չունես,  
Մի կապէկի խելք չունես. . .

«Հայ—Հոն-լ...» գոռացին ամենքը: Արամը խրախուսվեց ալդ երգիցն ու ինքն էլ սկսեց—

«Եթիմ եմ, հէր չունեմ,  
Խելք ունեմ, տէր չունեմ...  
Աստօծ, գու ինձ չկորցնես,  
Քեզ ունեմ, իմ մօրն ունեմ. . .»

Վերջի տունը կլկլացնելիս Արամի ձայնը կերկերուեց. եթէ լուս լինէր, նրա աչերում արտասուքի կաթիլներ կը նկատուէին:

— Ե—ՀԷ!—ՀՈՆ-Լ... Շների հաչոցը գիւղը դրբացըրեց:

«Ես քեզ մատաղ, ես, բալա ջան. ես եմ քու տէրը, Աստօծն ա քեզ պահողը:» Ախովէս մըմնջալով մի պառաւ կին նրանց առաջը դուրս եկաւ: Դա Արամի մալըն էր՝ որ աղբաձորի գլխին նստած սպասում էր իր մինուճար որդու վերադարձին...

Մեր երեխանց ազնու օրեր, Ասկէ ժամեր շուտ կը բռչէն. Մեր երեխանց խաղէր, տաղէր, Ծիծաղ, ժայխ շուտ կը կորչէն: Կորանց տեղը սաղմնու, տեսորակ, Նարեկ կը տան եւ մի տախտակ. Ծիծաղի տեղ՝ յայռ ժպիս, Իրատի տեղ՝ պատիժ անմիտ...



ՀՈՆ-Լ ՓՈՎ, ՓՈՎ-Լ ՀՈՎ.

Մեր գիւղացիք հպարտ էին: Հենց որ մի օտարականի հետ խօսելիս լինէին, խկոյն կասէին. «Պաղէն, փողը հող ա, ամա մեր հողը փող ա:» Այս գաղափարական խօսքը նրանց մէջ առած էր դարձել, որի աղբեւը գատարկախօս լեզուն չէր, այլ երկրի բերրիցւթիւնը:

Խնչ ասես, որ չէր ճարվում այս գիւղում: Բնական անտառներն ու երկրի պարարտութիւնը առատորէն տալիս էին գիւղացուն իր սրտի ուզածը: Տարուան երեք եղանակում աշխատում—ձմրան դրամուտը տուն էին ածում. ծակ աման չէր մնում, ծակ տոպրակ—լրցնում էին: Տանձ, մեղրատանձ, ծտատանձ, խնձոր, ծաղկախնձոր, թթու խնձոր, գկէռ, սիզ, սալոր, և սրա տեսակները, հօն, աճար, կաղին, կոծոխուր, գեղձ, սերգեիլ, ընկողզ, տկողին, բալ, կեռաս և այլ այսպիսի

սլուղները ուրիշ գիւղերում փողով էին ոտացվում, այստեղ սալերով ժողովում ոչ թէ միայն այդիներից, ալև և անտառից, ուր ամեն օտար այցելու լիակատար իրաւունք ունէր՝ ինչ պտղից էլ որքան կամենար, ժողովիք: Այս գէպքում փող ասածք ով բերան կը բերէր: Ուրիշ գիւղերում 15 տարուալ ընթացքում պէտք է ջրես մի թուփ, որ ծառ զառնայ, ապա քրտնած զաս, շուաքում նստես—հովանաս. բայց այստեղ ծառատունկը մի կողմից աճում, միւս կողմից պտղաբերում էր՝ ընութեան հովանաւորութեան տակ... Անտառն ահարկու էր՝ գաղանների բնակարան. այս պատճառով տեղացիք քաջ որսորդներ էին, յանդուզն ու խիստ ճարպիկ: Զքաւոր ընտանիք զրեթէ ըը կար ալս գիւղում բացի որբերից: «Մարդ Աստծու, ասումէր Միրզանց Օսէքը, աջ եմ մտիկ անում՝ փէսէս ա. ձախ եմ մտիկ անում՝ խնամիս, առաջիս կանգնած ա հարեւանս, քամակիս՝ կնքաւորս, ազգականս, աղբէրս, բարեկամս... Բա ես սրանցից կարամ բան խնամիլ: Եկէք, սիրելիս, եկէք, քանի կայ՝ կուտենք, երբոր կը հատնի, Աստծուց կուզենք, մեր սար ու ձորիցը կուզենք...» Ամենքն էլ զրեթէ այսպէս, Օսէքի նման, բարեսիրտ և ողորմած մարդիկ էին: Արքունական կոռը, բէգեառը, հարկը Շամշուլդեցիք ամեն գիւղից էլ շուտ էին վճարում: Միթէ սա փոքր բան էր:

Տէրտէրը շատ անգամ էր խօսում հարկ ու բէգառի առիթով. «Թագաւորը մեր երկրի տէրն ա. Նրա անունը սուրբ պէտք ա ըլի ամենքի համար. Նա չի թողում՝ որ եադ ազգերը իր աշխարհի ռահաթին նեղութիւն տան. նա որ ըըլի, ջանով մարդը անջանի գլխին կը տայ՝ ձեռքի թիքէն կը խլի: Թագաւորի ողորմու-

թիւնը աշխարհիս մեծ ու պուճուրին էլ հասնում ա, ոնց որ անձրեք: Արևի լուսն ու տաքութիւնը իո մէնակ մեր գէղի համար չի, աշխարհովի ա: Ո՞վ չի հասկանալ էս բանը: Մեծին՝ մեծ, պուճուրին պուճուր ասէք, որ Աստծու աչքին դուր գաք: Կը փակուի էն բերանը, կը պապանձուի էն լեզուն, որ «փառք քեզ տէք» չի կանչիլ. որովհետեւ հիմիկուան օրէնքը մեր զլիխին՝ շուաք ա անում, մենք տակին նստած ապրում ենք: Մի ժամանակ, զնիթ ա, մեր ազգը պարսից լծի տակ հոգեւարքի էր, որ մեր հացը խլում-ուտում, մեր ջուրը խմում—ակը պղտորում, մեր սիրուն սիրուն աղջկերանցը թոցնում, տանում էին... ամա Աստուած իր ոչխարին ազատեց էդ անօրէնիցը: Հիմի Նա էնալէս ա կարգադրել, որ հայ Ազգը քիչ ազատ շունչ քաշի ու օրհնի իր վրա շուաք անող թախտն ու ձեռքը: Հիմի աշխարհէքիս մէջ Քրիստոսի օրէնքն ա թագաւորում. էդ օրէնքի մէջ ասուած ա—«գնացէք, Աստծունը՝ Աստծուն տուէք, թագաւորինը՝ թագաւորին:» Ա՛խ, ինչ լաւ խօսք ա. ինչ լաւ կը լինէր, որ ամենքն էլ իմանալին սրա զօրութիւնը. ամա մնց կարան իմանալ: Քարոզը զըքի մի երեսի զրածն ա սովորացնում, կարգալը ամեն երեսի: Ով որ կարգալ չի գիտում, նա հազար օրէնքից մի երկուսն ա իմանում: Պէտք ա կարգալ իմանաք, որ ս. աւետարանը, Աստծու էդ օրէնքագիրը ձեռքը տամ, հեռու կանգնեմ, ես իմ աղօթքն անեմ, դուք էլ ձեզ ու ձեզ նրան կարգաք ու զօրութիւնն իմանաք. թէ չէ՝ թէլին տալով շատ բան չի դուրս գալ: Զոկ բան ա հինգ ու վեց ակոսը, չոկ՝ մի օրավարը... Ամա չէ, սիրելի ժողովուրդ, դուք էլի ուրիշներից խելօք էք. դուք շատ լաւ գիտէք, որ ուահաթը թագաւորի հոգեւոր որ-

դիկն են, որ ռահաժամի համար խարջ ու բեգառը էնպէս պարտք ա, ոնց որ տէրտէրի համար «եկեսցէ» ասիլը: Խահաթը խարջն իրան համար ա տալիս. նրանով թագաւորը ճամբէք, կարմունջներ ու հազար էս տեսակ լաւ բաներ ա շինիլ տալիս, որ մեր ոտը քարին չը դիպչէ, երկիրը պայծառանայ ու լուսաւորուի՝ ժամի վառ կանթեղի նման... Ե՛րնակ թէ մեր սրտի ու հոգու կանթեղն էլ վառուէր, սիրելիք. Երնակ թէ ամեն մարդ էլ գիրք կարգալն էնպէս սիրէր, ոնց որ սրբի գուռուր...»

Այսպէս, ամեն խօսք ու զրոյց տեղն ու տեղն էր վճռվում, ամեն բամբառանք չքանում: Տէր-Ղուկասը ոչ թէ հալր էր, ալլ և դատաւոր, առաջնորդող ու մխիթարող: Ամեն գաղտնիք տէր հօրը յալտնի էր լինում և ամեն նեղութեան միակ ելքը նա ուսումն մէջ էր գտնում, որ մինչ օրս շատ անդամ ձեռնաձիգ էր եղած իր ժողովրդի գիտակցութիւնը շարժել և նրա մէջ ուսում ու գիտութիւն մտտակարարել, սակայն՝ այդ չէր յաջողվել: Նա հազիւ թէ այս անդամ սկզբնաւորեց իր մտագրութիւնը:

Օվանէս վարժապետը երկիք մի պուճախից դուրս գալով և թափառելով, եկաւ հասաւ այս գիւղը: Հէնց որ ծծեց ալստեղի պայծառ օդից, խմեց գլցլան ջրերից, տեսաւ վայելչակազմ ու սիրոնատես, բարի ու հիւրասէր մարդկանց, գրաւվեց, ճգնաւոր ձեացաւ, գիտնական երևաց ու բանդ եղաւ: Բայց ո՞վ էր ինքը, ո՞րտեղից, ի՞նչ անցեալի տէր—ոչ ովի յալտնի չէր:

«Ճիմի մեր ի՞նչն ա պակաս, տէրտէր ջան—այսպէս էին խօսում գիւղացիք—ինչ որ չ'ունէինք, քու աղօթքովն ունեցանք: Ո՞ր գէղը ուսումնարան ունի, որ մենք

ունենք: Ո՞ր գէղի երեխէքն են զշի պէս ծլվլում, ոնց որ մերը: Փառոց կենա ոլատճառ գառնողը:»

— Օրհնեալ լինիք, պատասխանում էր տէրտէրը, ինձանից վնաս չի հասնիլ ձեզ, միայն թէ ինձ լոէք, զրի պոչիցը բռնէք, չունքի՝ մեր ճար ու իլլաջը զիրն ա մնացել... Քաղաքին քաղաք են ասում, նրա համար, որ միջի մարդիկը գիրին էլ գիր գիտան. գուք էլ որ գիր գիտենաք, մեր գեղն էլ անուանի կը գառնայ, ոնց որ առաջ քաղաք ա էլել...

«Մենք քու որդիկն ենք, աջիդ մատազ, հէնց ինչ որ ասես՝ պատրաստ ենք. ամա, տէրտէր ջան, քու Մարգարին ու տէրտէրանց Արամին ամենքն էլ գովում են ու ասում՝ ուսումնարանումը էդ երկուսն են լաւ կարգում...»

— Բա ի՞նչ կ'ըլի, որդիկ, տէրտէրի տղէրքը լաւ կը կարգան. նրանք աչք են բաց անում թէ չէ՝ զիրն են տեսնում. ամա ձերոնք՝ կով ու հորժ: Աստուած տա՛, որ ձեր տղէրքն էլ լաւ կարգան: Ասած ա՛ ատելական քարը պատի գլուխը կ'անցնի. միամիտ կացէք, ձերոնք մերիցը անց կը կենան...

«Լաւ ես ասում, տէրտէր, ամա խամ աշառը լծան տակին առանց ճիպոտի քաշում չի: Եղէնցէլ երեխէն ա: Դու վարժապետին էս բանը գլխի քցի, որ մեր երեխանցը պատի գլուխը նի հանի....»

— Միամիտ կացէք. նա էդ բոլորը մեզանից շատ լաւ գիտի: Երկու տարումը երեխէքը քեամ ու կը լեն, աշխարհիս խէր ու շառը կիմանան:

«Ղորիթ, աջիդ մատազ!»

— Կարգս վկալ. կը տեսնէք:

Մենք ևս կը տեսնենք, ընժեղուղ. մենք էլ հեռու չգնանք:

### ԹՇ.

ԿԱՐԳ ՈՒ ԿԱՆՈՒ.

Ամենայն ինչ կատարեալ է:

Օգոստոս ամսի վերջերում ուսումնարանն իր պատկառելի կերպարանքն ստացաւ. Աշակերտների թիւը հասնում էր 60-ի. Ամեն մինը մշտական նստելու համար որոշեալ քարն ունէր: Բարձրագիրք ու հարթերես քարին նստեցնելիս հասակը 'ի նկատի չէր առնվում: Քարին նստեցնելու դէմ իրաւունք չը կար բողոքելու թէ տանը և թէ դուրսը: Առանց նստեցնելու էլ կարելի էր կարդացնել, բայց այդ մի առանձին ուրախալի առանձնաշնորհութիւն պէտք է համարուեր:

Բարի վարժապետը աշակերտաց գասակարգերի էր բաժանել. դասընկերների թիւը չորսից աւելի չէր, բայց որում՝ նրանց գիտութիւնն էլ միատեսակ չէր և իրար հետ չէին մտել ուսումնարան—մի օր առաջ, հինգ օր յետոյ:

Դասազրքերը մեզ լայտնի են:

Երեխալին ուսումնարան մտնելու առաջին օրից վարժապետը անմիջապէս դաս էր տալիս «այր-բէնի» առաջին շարքը, որ տառերը ճանաչի ու բերան անի: Յառաջադէմ խօսքը անկարելի էր վերաբերել նրանցից

ոչ մէկին, ըստ որում՝ ամեն մէկը պարտական էր ու բատել տուած դասը՝ հրամանին համեմատ:

Արամը, Մարգարը և Պաղարը—այս երեքը ժամագրքի վրա էին դաս առնում, մնացեալը «այբբենարանի» վրա՝ զանազան դասերում:

«Ժամագիրք» կարգացողները զլիսաւոր աշակերտներն էին և նստում էին տուածին տեղում: Ուժ տարեկանի մօտ նստեցրած էր 17 տարեկան տղայ: Ամենքն էլ մի տոնով, մի ձայնով մըմնջում էին դասերը.

— Ալլ—ժէ—ճէ—ուն, ըէն—ինի—մէն—ոէ՛...

— Զա—ալլ—զան, զա—եչ—զէ՛...

— Ալլ—ըէն—անը, զիմ—ալլ—ըէ՛—զան—արգանը...

— Ե՛—եթ՛ը—թօ, է՛—եթ՛ը—թօ....

Նստերն էլ միայն ձայներ էին հանում, որ լսուի թէ՝ կարգում են. խի՛—շի՛—լու—զա—ըի՛—բան—բու...

Ահա, այսպէս էին սերտում դասերը: Նրանք բռնած ունեին իրանց գասազրքերը ջուխտ ձեռքով: Հրամայած էր՝ աչքները դասի տաղերից չը հեռացնել, այս ու այն կողմը չը նայել—միշտ կարդալ, բարձրածանին կարդալ...

Առաւօտեան—արեւը նոր դուրս զալիս—երեխալիքը պարտաւոր էին ուսումնարան գնալ և մինչեւ կէսօր սերտել տուած դասերը և միանգամ էլ ուրիշ դաս առնել: Բայց կէսօր ասածդ ժամացույզը չէր որոշվում: Աշակերտներն անգամ ընտելացել ու ծածուկ նայում էին թէ՝ ե՞րբ պէտք է արևի շողքը պատի ճեղքիցը ընկնի ծուռ սիւնի տակը, որ ապա թէ գնան հաց ուտելու: Նւ ե՞րբ պէտք է արևի մալի մանի, որ արձակուեն: Այս մշտական կարգն էր, որ քանդել չէր կարելի:

Վարժապետը ամեն մէկի կարգալու ձայնը պէտք

Ե լսէր. այս պատճառով ամենքն էլ իրանց ձայնը զլում էին:

«Հարկաւորութիւն գնալ» ամեն անդամ չէր թուլատրվում: Այդպիսի գեղաքերում երեխան պէտք է դուրս գար տեղից՝ առանց ընկօր փէշէրքին դիպչելու՝ առանց մի շփոց հանելու՝ ձեռքերը դոշին դրած կանգնէր վարժապետի դիմացը և այնքան, մինչև որ կամ թուլատվութիւն կը ստանար և կամ ոչ: Հակառակ դէպքում երեխան տանջվում էր աղիքալին բորբոքումից, կծկվում էր... Վարժապետի հաշուով, ընուլթիւնը հազիւթէ ստիպէր տղային օրական երկու անդամ «Հարկաւորութիւն» գնալու: Դեռ երկու անդամ հարկաւորութիւն գնացողը կասկածի տակ էր ընկնում վարժապետից:

Դասաւանը (անուանենք) մանգալ, ուրիշի այժուին (անուանենք) նստել, մանկական փորձերով զբազուիլ, մինի ու միւսի հետ խօսիլ, մի քարից միւսի վրա թռչիլ, քարերը ծանր ու քաշ անիլ—խստ արգելուած էր: Դասամիջնց, հանգեցու, խաղ, վազվել, ձայն տալ, աշխոյժ առնել... Բնչ խօսքեր են, հեռի մեր երեխաներից:

Ոչ ոք չէր կարող հացի պատառ բերանը դնել: Ուղարկ զի կարգ ու կանօնի մէջ գեղձմունքներ չը մըտնէին, վարժապետը պարումէր երեխանց հարգանելն ու զբանները. ում մօտ հացի կտոր էր գտնում—խլում էր: Բայց այս ոչինչ: Բարի գաստիքակը երեխանց բերանները բամբակ էր ձգում ու ծամել տալիս, ասկա բամբակը դուրս հանելով՝ նկատում էր, թէ ատամների տակ մնացած հացի փշքանքից կակէլ է բամբակին և խոյն եղբակացնում էր՝ որ նա անժամանակ հաց էր կերել:

Ես փորձը սովորաբար մինչ կէս օրն էր կատարվում: Վարժապետի հասկացողութիւնով, ինչ աշակերտ մինչեւ կէս օր հաց է ուտում, նա կորցնում է իր շնորհքը, բժիշտում և ոչինչ չի սովորում:—Երեխանց սրտի մաղձը շարժվում էր անօթութիւնից, որ սովոր չէին երկար սոված մնալու:

Տուած դասերի պահանջը խստ էր և աշակերտի կողմից մէկ սխալ անելը—աններելի:

Դասընկերները միասին էին կանչվում դաս ասելու, որոնք պարտաւոր էին ամենայն համեստութեամբ դուրս գալ տեղներիցը, նախ գլուխ խոնարհել, ապա չոքել վարժապետի առաջին «խանուն հօր» անել և մէկը՝ որին վարժապետը իշարած կ'անէր՝ բարձր ձայնով պէտք է ասէր դասը, լետոյ՝ երկրորդը, երրորդը.... Մէկը դաս ասելիս՝ միւսերն էլ պէտք է նոյն բառերը մըմննալին իրանց մտքումը, գրքին ապուշ նայելով: Դասասցութեան միջոցներին լուսութիւնը տեղի չէր ունենում. Նստած աշակերտները սովորական եղանակով պէտք է կարգալին: Վարժապետի ականջը սուր էր. նա ամեն բան լսում և ամեն ձայն ճանաչում էր: Այսպէս, բոլորին էլ կէնտ կէնտ գուրս էր կանչում, դաս հարցնում, նոր դաս տալիս: Դատ թէ քիչ վարժ կարդացողներին նա ասում էր. «աստէն անդեղ» և ցուցամատով աստէնն ու անդեղը ցոյց տալիս:

Բարեհոգին դաս տալիս նստում էր իր յատուկ տեղը՝ ստաւոր ու ճռճռան տախտակի վրայ. բայց երբ աղատ էր՝ երկարակոթ չիբուխը ծխելով, սրա ու նրա վրա արձակումներ անելով, մէջ տեղը բոլթա էր տալիս...

Աշակերտները կէս օրից լետոյ սովորում էին խա-

ուր դասեր—հայոց, վրայ «անը—բանը» ռուսաց «ա-  
բէ-վէ», չոտկալի վրայ մինչև հազարաւորների տեղերը  
նաև այբուբէնական համբանքը—ալք՝ մէկ, բէ՛ն երկու,  
գիմ՝ երեք... Այդ միջոցներին ազօթք իմացողը ըլ գիտե-  
ցողին տուն տուն սովորեցնում էր: Այս խառնուրդից  
երեսում էր, որ մեր վարժապետի համար դասերի ընտ-  
րութիւն չը կար. ինքն ինչ էլ գիտէր, այն էլ սովորե-  
ցնում էր...

Ուսումնաբանը մաքուր պահպանելու համար նշանակած էր շաբաթապահ աշակերտներ։ Մի եօթնեակում երեք աշակերտ պարտաւոր էին օրը մէկ անգամ ուսումնաբանը սրբել—աղբը դէն ածել։ Շաբաթապահները օրական երկու կուժ ջուր էին բերում աղբիւրից՝ կաթուն աշակերտի և այլ եկողդ-գնացողի համար։

Ինչպէս հաց ուտելն էր կարգով, այնպէս էլ ջուր  
խմելը: Աշակերտները անժամանակ ջուր խմել չեին կա-  
զող: Մինչև կէս-օրը մէկ անգամ խմել թոյլ էր տըր-  
վում, կէս օրից յետոյ միայն երկու անգամ, այն էլ՝ ոչ  
իրանց կամքով, այլ շաբաթապահների: Մինչև կէս-օր  
երկու անգամ ջուր խմելուց հասկացվում էր իս մողի  
հաց կերած լինելը. այս պատճառով աշակերտները  
ծարաւից պապակվում և ջրին մօտենալ չեին համար-  
ձակվում: Դատ անգամ շաբաթապահը վրէժինդիր  
լինելով՝ բոլոր օվին զրկում էր մէկին ու միւսին  
ջրից՝ սուր յալտնելով. «Կա մի երկու հետ խմել ա, ու-  
զում ա էլ խմի:» Այսպիսի գէպքերում հաշիւր վերջա-  
ցնում էր ինքը—քարժապետը:

Դաբաթապահները պարտաւոր էին երկու օրը մէկ անգամ վարժապետի չիբուխի կոմիտի ծխածակը մաքրել բարակ ու երկար ճիղոտով. նոյնպէս պէտք է կըակ

Հասցնէլն՝ երբ նա պատրաստվում էր ծխելու։ Նրանք պարտաւոր էին մախորկի հաստ կոթռոչները կտրտելու մանրացնելու...»

Ծէպլի կամ ո.ոգգի ասուած միամօր ճիպոտներ  
ուռենու ճիւղից՝ շաբթական ԶՈ հատ կտրել, կշտել, և  
յանձնել վարժապետին—շաբթապահի պարտքն էր:  
Ծէպլիները հաւանելի պետք է լինէին վարժապետի  
քմաց. Հակառակ դէպքում՝ նա ճիպոտների ուժը փոր-  
ձում էր նոյն իսկ բերողների վրայ ու նորը կտրել տա-  
լիս: Զարմանալի ճաշակ ունէր վարժապետը. նա իսկոյն  
հասկանում էր ճիպոտների շատ կամ քիչ դիմանալու  
ուժը: Ճիպոտների կապուկը պահպում էր մի անմատ-  
չելի տեղում—մեծ սիւնի և պատի արանքումը:

Նաբաթապահները ամենախիստ կերպով պատասխանատու էին որ և է կորուստի մասին. Նրանք իսկուն պէտք է ցոյց տային գողին և եթէ դա չը գտնուեց, այն ժամանակ ամբողջ գասառունը պատասխանատու էր...

Վարժապետի հաւատը անդրդուելի էր. նա հաւատ չ'էր ընծայում և ոչ մէկի խօսքին. իր ուժը այս «կարգ ու կանոնի» պահպանութեան մէջ էր կալանում:

Փորձի աղագաւ՝ կամ նոյն իսկ հարկաւորութեան պատճառով վարժապետը երբ դուրս էր գնում ուսում-նարից՝ թողնում էր չեթուխը կամ ֆէսը տախտակին դրած. աշակերտները պարտաւոր էին այդ թողած առարկային ընդունել՝ որպէս վարժապետի և հարկ եղածին պէս՝ այսինքն՝ տեղիցը դուրս գալիս ու նստելիս պէտք է գլուխ տային նրան... Փորձի աղագաւ, ասացի, նրա համար, որ շատ անգամ, առանց պատճառի էլ, վարժապետը դուրս էր գնում և ծածուկ նայում պատի ճեղքերից, թէ տեսնի՝ ովք է զէս ու դէն նայում, շարժ-

վում, անհանգիստ լինում։ Այս արարքը, իշխանական խորհուրդը չէր, որ լեռոյ կը տեսնենք։

Աշակերտաց խիստ արգելուած էր ճանճ, միջատ,  
իշանաւանչ, բողոքներ սպանելու դասատան մէջ:  
Նատ անդամ նամաճճիները երեխանց թիկունքով սո-  
ղալով՝ երեսի կողմն էին թեքվում. մանկան սուր-  
աչքը տեսնում էր բազմոտն սողունին և չէր համար-  
ձակվում ականջի տակիցը վայր գլորել: Ի՞նչ կը լինէր  
արդեօք նրա դրութիւնը այդ բապէում:

Վարժապետը գիւղի դալլաք Վանէսին հրամայել էր,  
որ երեխանց գլուխը խուզելիս՝ պոչերն ու ճակատին կախ  
մազերը չը մկրատի, որովհետեւ գլխի այդ մասի մազերը  
իրան էին պատկանում...

Դուքսը խաղ անել, շների ու կատուների վրա  
յարձակուել, քար ձգել, խաղ ասել, ճչալ, ծկրտալ և  
այլ այսպիսի մանկական կեանքի աղ ու համեմը խիստ  
արգելած էր։ Վարժապետը հազար աչք ունէր, ամեն  
բան տեսնում էր։ Երեխալի շորերը եթէ ցիսոտ էին լի-  
նում, իսկոյն իմացվում էր՝ որ նա խաղ է արել, իսկ  
եթէ թողոտ՝ հասկացվում էր, որ նա տանը խռովել,  
օր թաօջադի մոխրի միջին թօլ-թօլ է եղել։ (Խռով-  
կան երեխալիքը այս վիճակի մէջ են։) Տանիցը ուստում-  
նարան գնալիս աշակերտը պատահողին գլուխ պէտք է  
խոնարհէր եւ ապա անցնէր։ Յիշոցներ տվող երեխալի  
համար պատրաստ էր երկու զօրաւոր գործէք—քերան-  
փակիչ և քերան-քանչուկ... Զանազան պատճառ-  
ներով արդարանալը դատապարտութեան առիթներ էին։

Առաւելան դասերն սկսելուց առաջ ոչ մի ազօթք չէին ասում. միայն հայ ուտելու գնալիս մեծ աշակերտը կ'ասէր «ընկալ քաղցրութեամբ» նարեկի

Դլվանիցը մի տուն. իսկ երեկոյեան արձակումին «Հալին մեղք, հալածին դեք, ջնջին յանցանք» աղօթքը:

Երեխաները միատեսակ շորերի մէջ էին. Նրանք շորերով չէին ճանաչվում, շորերով փայլում...

Ծերունի փալախան դրած էր գիմացը՝ դրան մօտ՝  
պատի ճեղքումը, որ նայողի վրա սարսափ էր ձգում։  
Հինգ գագի չափ երկարութեամբ թոկ էլ փալախայի  
մօտն էր, որ հարկաւոր գեպքերում օգնական հանդի-  
սանար...

Ամեն երեկոյ վարժապետը աշակերտաց եկեղեցի էր տանում. փոխ ասողները ամենի առաջն էին՝ կանգնում։ 60-ից աւելի երեխալք զլսաբաց մտնելով եկեղեցի՝ քըչ-փչոց ու, քսքսոց չէր լսվում։ Ֆամաւորները հոգով ու մարմնով մխիթարվելով՝ հազար բերան «օրհնանք» էին թափում սիրեցեալ վարժապետի զլսին, արեին, հոգուն....

60 Հոգի մի ձայնով, մի եղանակով, մի դիրքով,  
միատեսակ ահ ու երկիւղով ժամերով շարունակ մընջալով  
ուսումնաբանումը՝ առանց բան հասկանալու՝ որոնց ձայնե  
քը միախառնվելով՝ կազմվում էր զալմաղալի մի կատարեալ  
ամբողջութիւն։ Վարժապետը հոգեպէս միսիթարվելով  
ու նրանց մէջ բոլթա տալով, չիբուխ քաշելով, բար-  
ձրածայն երգում էր, որն աւելի նման էր գոմշի տրլի-  
գոցին և կատարելապէս իշխում էր բոլոր գոռում-գո-  
չոցին...

Անցու գարձ անզողները լսելով այդ խուլ զվարոցը՝  
ուրախանում, խնդում եւ կմկմում էին. «Փառք շատ  
ըլի, այ Աստօծ, գարդահիդ կանաչ ու կարմրով լիքը,  
որ էս չտես խալխին էս օրին հասցըիը... Վարժապետ,

հեր օրջնած, գլուխդ ոնց ա դիմանում էր զալմաղաւիս: Օրջնուես դու էլ, քու եկած ճամբէն էլ...»

Սյոպէս, ամենքն էլ վարժապետի գլխի պնդութեան վրայ զարմանում էին. բայց մինը չը կար՝ որ ասէր—«ափսոս ձեզ և մանկական գլուխներ...»

## Ժ.

### ՀՈՉԱԿ.

Ուսումնարանական «կարդ ու կանոնը» հաստատելով, միննոյն ժամանակ աշխատելով ճանաչուիլ հաստարակութիւնից, մեր վարժապետը իր շնորհքն ու հունարը ամեն բանի մէջ երեցնում, ամենի սիրտը շահում, ամենքի հետ վարդում էր ոչ որպէս մարդ, այլ որպէս պատկառելի խալիֆայ:

Տէրտէրի ազդեցութիւնը թէ և աւելի էր ժողովրդի վրայ և նա ներկայանում էր որպէս վարդապետական հաւատապատում հաւատացելոց, սակայն՝ վարժապետն էլ ձգտում էր նը անից երկրորդը լինել՝ գոնէ արտաքուստ այնպէս ձեւանալ:

Վարժապետը հռչակաւոր անուն ստանալու համար զանազան հնարքների էր դիմում. նա օրէօր սպասում էր, որ ամբոխը իրեն գովելով՝ հասցնելու է մինչեւ ամբերը և ինքը փայլելու է նրա առջեւ՝ լոյս առած բիւրեղի նման... Այս ձգտումները հետզհետէ բորբոքվում էին նրա մէջ. նա իր երեսի քողը արդէն պատառել էր և ամեն կերպ միջոցների դիմել: Խեղճ ու չը-

քաւոր մարդկանց վրա նա բարկանում էր՝ պատճառելով, որ իրանց տղաքը ծոյլ են, պակասաւոր են և թէ ինքը վերին աստիճանի աշխատում է նրանց ուղղել: Նրա ալսպիսի վարժունքը տարած—տրաբած գիւղացու հետ էր լինում:—Իշխանների մօտ նա աղուէսութեան էր դիմում—մէկին՝ ինամի, միւսին՝ կնքաւոր, երրորդին սանահալր, չորրորդին՝ քեռի և ալլն—անուանելով:

Կանսաքը՝ որոնք շատ անգամ իրանց տղերանց ձնուքը բանած մօտեցել էին վարժապետին, խնդրել, աղաչել, հարց ու փորձ արել և այս կամ այն բանի մասին բացատրութիւն պահանջել նրանից, աւելի լաւ էին ուսումնասիրել ու հասկացել նրա կախարդագիտական արժանիքը և այս պատճառով էլ վարժապետի անունն ու համբաւը տարածել էին ուրիշ գիւղերում անգամ: Նրանք—մինը՝ միւսին, միւսը՝ երրորդին, երրորդը՝ չորրորդին և այսպէս շարունակ սաել—խօսելով՝ վարժապետի անունը իր կախարդագիտութիւնների հետ բարձրացըել էին մինչեւ մուհամմադի եօթներրորդ երկինքը... Երեք ամսուայ ընթացքում վարժապետիս անունը շատ մեծացաւ, նրա հոչակը ծաւալվեց հեռու տեղերում: «Էդ գէղին Աստօծ տալիս ա, մենք ի՞նչ անենք:» Սյոպէս էին վերաբերվում ուրիշները գէպի Նամշուլգան:

Կանսաքը թողնելով իրանց գիւղական կախարդներին, գարընկեցներին ու գրբացներին՝ ոտարութիկ ճանապարհ էին ընկնում գէպի Նամշուլգայ: «Ո՞ւր էք գնում:» Ընդարձակ պատժութիւնից լետոյ կասէին—«գնում ենք վարժապետի ոտի տակն ընկնենք, ճար ու իլլաջ ու գենք...»

Եւ արդարեւ, վարժապետը սիրով կատարում էր

կսկծաչորուած կանանց խնդիրը։ Միամիտ մարդիկը գեռ չէին հասկանում վարժապետի կախարդական պարապ- մունքը, չէին էլ կարող իմանալ այդ՝ ըստ որում — կա- նայքը այդպիսի դեպքերում տղամարդկանցը բան չէին ասում. վերջիններս այնպէս էին կարծում թէ՝ վարժապե- տին դիմոլները իրենց տղայոց կարդալու համար բան պէտք է խնդրեն։

«Աղջի նանի, աքիր, հօքիր, մօքիր — ձեզանից ով որ ինչ դարդ ու պատուհաս էլ ունի, եկէք, եկէք, վարժապետը էն սհամբին կը պըրծացնի։» Տեղի կանայքը այսպիսի լորդորներով օտարականների միտքը կապում էին վարժապետի հմտութիւնների հետ։ Յորդորախօս կա- ցանց գլխաւորը Փաթին էր, որը նոյնպէս փորձառու և երբեմն իր «կապ ու կշկուռներով» յարտնի էր ամենքին. բայց այժմ ճրագի առաջին կրակը լոյս չէր տալիս..

Վարժապետի կախարդական արարքները ծածուկ չէին տէր-Նուկասիցը և յաճախ սորա միջնորդութեամբ էր բանն սկսվում։

«Որդի, խրատում էր տէր հայրը, չարոց բան չ'ա- նես — հոգուդ մեղք ա։ Միշտ բարոց գործիր, որ Աս- տուած քեզ օրհնի։ Չարոց գիր անողների հոգին դժոխ- քը կ'ընկնի։ Վայ ինձ... սատանաները շատ կը չարչա- չարեն նրան...»

— Հշտէ, եսիկ ագ փանը աղէկ գինամ. հարիկս, գուն էրխէին կեցիր։ Սուրփ գիրքը կը տէ. «զոր ինչ գոր- ծես յանուն Միածնի և նովաւ օրհնեալն գրոց — կատա- րեսցէ։»

«Եդ ես էլ շատ լաւ գիտեմ, բարի վարժապետ, ամա ուր ա էն հաւատը՝ որ ասածդ կատարուի. ուր ա էն աջը, բոնի էդ խաչը...»

Սակայն՝ վարժապետը այդ մասնում աւելի վար- պետ էր. նա ոչ միայն Եփրեմ — վերդի, նարեկ, Կիպրիա- նոս և այլ աղօթագրեր ուներ, այլ և մի հին, քրքրուած ձեռագիր, որին նա բոլորովին գաղտուկ էր պահում՝ հաստ քաթանի մէջ փաթաթած։ Վարժապետի կախար- դագիտական բոլոր ուժը այդ ձեռագիրն էր. դրանով անումէր թլիսմաններ, աղօթագրեր, լուսնագրեր, խաչ- գրեր....

Հիւանդների ազգ-անունը իմանալով՝ վարժապետը հաշիւ էր կայացնում «այբ — բէնի» միջոցով և որպէս թէ գորանով նա իմանում էր հիւանդի ծննդեան օրը, աստղը, անցեալն ու ապագան և ըստ այնմ գուշակում։ Խալիֆայիս ասածը՝ ասած, խրատը՝ խրատ, գրածը՝ գր- բած էր համարվում իրեն երկրպագուների կողմից։ Թուենք մի քանի օրինակներ։

Գիւղերում հիւանդի գլխին երեկոյ-առաւոտ նարե- կից մի քանի բժշկական գլուխներ կարդացնել տալը սովորութիւն է, նպատակն էլ շատ հասկանալի։ Բայց աղօթքը ամեն հիւանդի չէր բժշկում։ Աչքով տուա- ծին՝ աչքարօթք, խաչից բռնուածին՝ խունկ ու մօմ- մատաղ, տուր դիպածներին, գիւահարներին, գէլը տվողներին և այլ զանազան հիւանդուներին էլ ուրիշ փրկարար զօրութիւն պէտք էր։ Որ և է կարիք ունեցողը դիմում էր տէրտէրին. նա իր բարի խորհուրդը տալուց յետոյ՝ իր տեղը վարժապետին էր ուղարկում։ Վերջինիս առաջին և երկրորդ փորձերը յաջողակ անցան թէ չէ՝ այնուհետև խաբարն ընկաւ գիւղի ըռեխը, թէ «վար- ժապետի ոտը խէրով ա, ում տունը մտնում — նրանց հիւանդը լաւանում ա։»

Օրինակ. տաւարածները յաճախ տաւար էին կոր-

ցնում անտառումը. կորած տաւարի՝ տէրը վախենալով թէ՝ գուցէ գալլերի կերտակուր կը դառնայ կորուսար, վռազում էին. «գայլ կապ» անել տալ: Այս սովորութիւնը ամեն գիւղում էլ ընդունուած է և կան զանազան տեսակ գայլկապի աղօթքներ: Վարժապետի «գայլաղօթքը» բոլորովին ալլ էր ու զօրաւոր: Նախ Թաթոսանց Գիգոլի կորուստի համար նա գայլկապ արեց: Գիգոլը գնաց որոնելու և վերադառնալով այսպէս խօսեց. «Տղէրք, իրեք սոված գէլ վէր ընկած տեսայ կորած կովի կողքին: Նրանց բերանը կապ էր: Անիծածները շան պէս կալանչում էին, չէին կարում կովին մօտենալ: Կովը նրանց մէջ տեղը նստած արխէին արոճ էր անում: Որ ինձ տեսան՝ ժնդժնդացնիլով վախան...»

Այս պատմութիւնը գարմացրեց լսողներին:

«Ադա նվ էր գիլկապ արել:»

— Վարժապետը. նրա հէրը լիս դառնայ...»

Այսուհետեւ կապն վարժապետի սոչիցը հազար ու մի գովասանքով: Վարժապետի աղօթքը յալտնի չէ, ըստորում՝ նա ոչ ոքի չէր սովորեցնում իր գիտցած բանը՝ այն մտքով, որ եթէ ուրիշները սովորեն՝ իր աղօթքը էլ զօրութիւն չի ունենայ: Նա պահանջումէր մազից հիւսած թէլ և կմկմալով երեք տեղից կապում, շուտ շուտ երեսին խաչակնքում ու պատութրում. «Երփ գըտաք նէ՝ ան սհամբը կապուկը արձկեցէք, վասն զի գաղաներ մեղք են, գայլերուն փերան կապուկ կու մնայ ու կըսատկտին...»

Անտառուտ երկիրներում, ուր գայլերը խմբով են արշաւում, գայլկապ ասածդ մեծ նշանակութիւն ունի

տեղացւոց համար: Վարժապետը գեռ սկզբից կը կնակի պատիւների մէջ գլորվեց՝ գայլկապի շնորհով:

Օրինակ. սովորութիւն կար, երբ ձկնորսները ուղում էին գնալ Խրամ գետը ձուկ որսալու, տէրտէրակնոջիցը՝ Արամի մօրիցը մի կտոր հաց էին ստանում. «տէրտէրակին, ձեռդ խէրով ա, մի ճոթ հաց տուր:» Առանց այդ զսմաթի հացն ստանալը նրանց չէր յաջողվում ձուկ որսալ: Վարժապետը, որ շատ յետամուտ էր ժողովրդի բոլոր սովորութիւններին՝ լսեց և ալդ. «անպէս կէնիմ, ասաց նա, որ ձկունք կուրացեալ դամբն կու լեցուին. վասն զի՝ աղօթքը կը կուրցնէնոցա աչկունքը և հեշ չեն վախնու:» Ածուխ բերել տուեց ու ինչ որ փնթփնթաց և մի քանի անգամ ածուխի վրա թքելով՝ տուեց սիրահար ձկնորսին... Միւս օրը ձկնորսները վերադառնալով, աչքդ բարին տեսնի, կապն ուտ, օրագուլ, կար մը բախայ և մուշք ակներով խոնչէն լիքը դրին ուսումնարանի դրանը և ասացին. «վարժապետ, առ, էս էլ քու աղօթքի հախը.» Եթէ ձկնորսների գործը անլաջող էր անցնում, նա ալդ վերաբերում էր լուսնի ու չար աստղերի անկանօն ընթացքին...

Ձկնորսների օրինակին հետեւեցին և որսորդները:

Այլ առակ: Անմաքուր պահպաննելուց երեխանց մարմնի մորթու երեսը քէրքէշակալում էր. սորան մկնատամ անունն են տալիս գիւղերում: Այնտեղ, մեր հերոսին յանձնուած գիւղում գիտունները զանազան դէղեր էին գործ դնում մկնատամը ոչնչացնելու համար. բայց վարժապետի դէղն ու աղօթքը փիրէ փիրն եղաւ: Նա թանաք էր քսում քէրքէշակալած տեղին՝ աղօթք մը նշալով ու պատուիրելով. «Եշտէ ութ աւուր մէջ կողջանայ. կը թողուք անպէս, ինչպէս զրած եմ:»

Ծնողները խեղճ երեխաներին ճղղացնելով — բղղացնելով վարժապետի մօտ էին թրւում: Նա մի քանիսի կարմրեկ թշերը, միւսերի ճակատն ու քիթը սևացրել էր...

Դարձեալ առակ —: Երազ տեսնողները դիմում էին վարժապետին. նա երազի ինչ լինելը իմանալուց յետոյ՝ լուսնահաջուով բանալով Ն Փ Ր Ե մ-Վ Ե Ր Գ Ի Ն՝ կարգացածին համեմատ մեկնում էր:

«Վարժապետ ջան, աչքիս վերի կոպը խաղում ա. մի տես ի՞նչ ա ասում գիրը»

— Ըշտէ քիչ մը նեղութիւն, ըմմա ետքը բարութիւն. զգոյշ կեցէք փորձանքէն ու չարէն...

Պառաւ կինը մեկնութեան համեմատ տրամադրուած՝ տանըցոնց էլ պատուիրում էր, որ զգուշանան, մինչև փորձանքն անցնի:

«Առաջներիս տարին չորային կըլի՞, թէ անձրւային. առատութիւնը դաշտի՞ ա, թէ սարի. լուսինը անձրւի՞ ա, թէ չորայնի...» Այս գուշակութիւնները նա մի առ մի բացատրում էր ժողովրդին:

Այսպէս, վարժապետը կամաց-կամաց իր գիտութեան տուպրակը բաց անելով գիւղացոց առջե՝ մտաւ նըրանց գամարը: Խնքը ձեւանում էր՝ որպէս թէ իր բոլոր ծառայութիւնները ձրի է բաժանում, բայց կարեք ունեցողն ամենայն ուրախութեամբ վարձատրում էր նրան իր ունեցածից, որ հետեւալ գլխումն այդ կը տեսնենք: Եւ արդարեւ, ինչպէս չը վարձադրէին նրան. մէկի ճանապարհն էր յաջողեցնում, միւսի չը երք հարսին պաղաւորելու համար թլիսման էր գրում, ուրիշներին էլ ուրիշ կերպ լաւութիւն էր անում...

Նըշակայ գիւղացիները տեղացիներիցն աւելի էին վարձատրում նրան: Ով կարդալու հասած երեխայ ու-

նէր՝ բերում էր նրա մօտ. ով գարդ ու կրակ ունէր՝ դիմում էր նրան... Եւ ամենքն էլ հազար տեսակ օրհնանք էին ուղարկում դէպի խալիֆալի հօր գերեզմանը:

Վարժապետի գործառնութեան այս լայն շըջանում աշակերտաց մէջ մի տեսակ ազար գոյացաւ: Նրանք քնած միջոցներին յանկարծ վայր էին թռչում, վայր ի վերոյ ձէն հանում, ծկլթում: Բոլորն էլ այս ցաւին էին տիրացել: Մալրերից շատերը դիմում էին վարժատին այս անիմանալի ցաւի առաջն առնելու համար հոգ տանել: «Վարժապետ ջան, հենց որ ծկլթում առ ծուլ ըլում տեղիցը, ասում է մալրը, խաչակնքում եմ, քնում ա. ամա եղնա էլի խանչախորով ա գալիս, վեր թռչում: Սա ի՞նչ բան ա. մի իլլաջ արա...»

— Ադիկալուսնէն կուզայ, լուսինը երփոր չար աստղին քովը կըլլա, ադոր համար չուշուխները կը չարչըկուխն: «Բա ի՞նչի՞ տաւարածները ըգէնց չեն:»

— Ըշտէ, տարին ադպէս է: Դըքին զօրութիւնն ալ տղոց խէնթութիւն կուտայ: Հէջ, փան մը չկայ. կը մեծնան, կը մոռնան...

Վարժապետիս կարծիքով, երեխալքը կորկի պէս ցանվում, եղեգնու պէս բնում, բողկի պէս մեծանում են, պոծաւ, գնաց...

«Ախր հալվում — մաշվում են տղէրքը:»

— Ըշտէ, վնասն ի՞նչ. աս աւուր կը հալին, ան աւուր կը մեծնան, տէ... մէծ կըլլան...»

## ԺԱ.

### ՎԱՐՉՈՍՏՐՈՒԹԻՒՆ

«Կարգաւորին տուածը հոգու վարձք ա:» Ահա այն մշտական խօսքը, որ լսում ենք գիւղացու բերանից: Բայց վարժապետին տուրք տալու մասին գիւղացին այլ կերպ է դատում. «աղբէր, վարժապետին պատիւ տուր, որ տղիդ լաւ հետեւի. նա զարիք ա, տուրքը մի խնայիր, որ մի կտոր հացի տիբանալ. նա գիտուն ա, տուրքդ շատացրու, որ հետաքներդ գլխի քցի քեզ ու ամեն վախտ սանաթներդ գրի ու կարգալ. նա աշխարհիք տակ ու գլխիցը խաբար ա, տուր, որ դարդիդ ու հիւանդիդ դարման ըլի....»

Վարժապետին վարձատրելու նկատմամբ այսպէս առատաձեռն են գիւղացիք: Եւ արգարեւ, մարդիկ առատաձեռն են, երբ կարիքը ունեն: Կարիքը թոխմախ է, որի ծանր զարգից ցալտում են հնազանդութեան կալծեր և մարդս նեղուած՝ ոչինչ չէ խնայում հոգալու այն: Անհոգութիւնից որդին ընկել է մահուան անկողնու մէջ՝ գիւղացու սիրտը տրոփում, կսկծում է... ելք չը կալ, ի՞նչ անէ նա. սե օրի համար պահած՝ իր հոգեպահուստն անգամ ձեռքին բռնած՝ նա ամենայն յօժարութեամբ դէմ է անում նրան, ով ճար ու իլլաջ կ'անէր անյուսալի հիւանդին: Ահա, այսպէս էր կապուած գիւղացին ոչ միայն վարժապետի, այլ և բոլոր կախարդների հետ: Այս մասնի մէջ վարժապետն աւելի շատ էր վարձատրվում, և եթէ հիւանդը չէր էլ առողջանում, տէրն այլ ևս իր տուրքի վրա չը մտածելով — «ճակատի գիրը տարաւ հիւանդիս» — տուրմ և միկտում էր: Մի-

թէ այս գրութեան մէջ չեն և ալժմ մեր գիւղացիները: Փողովրդից համակրուած վարժապետի ձեռքը կտրող է շատ բան գործել և շատ բարի նպատակ յառաջ տանել ու ամեն կերպ վարձատրուել, մանաւանդ նա՝ ով ջերմեռանդ է ոչ միայն դաստիարակութեան դործում, այլ և ճարպիկ է գտնվում ուրիշ, կողմնակի գործերի մէջ, անկախ առաջինից: Օվանէս վարժապետի գործունէութեան ընթացքը ճիշտ այս օրինակն էր ներկայացնուած. նա խիստ ջերմեռանդ էր, ճարպիկ և միշտ կանգնած միամիտ, ամեն սուտի հաւատցող ժողովրդի մէջ: Նրա սուր փայլումներն ու կախարդ վարմուքը ասես թէ կուրացրել էին միամիտների աչքը... Բայց տէրը մի արասցէ, այդ միամիտները եթէ վարժապետի կեանքի մէջ մի միսալմունք, մի անբարոյական դէպք նկատէին, այն ժամանակ վայ նրան...

Սև կողմից մեր հերոսը գեռ պարզերես էր: Նա իր ծառալութիւնները վարձատրել տալու համար ուղղակի պահանջ չէր անում, միայն խօսքերով գլխի էր քցում. «ըշտէ աղիկ հեշտ փան մը չէ, ըշտէ աշենք կրնամ երկու աւուր մէջ գիր մ'անել չոչուխիդ. ըշտէ գուն չես հետեւի, երխէին կու մնաս, մինչեւ օր փանը կու լմննալ, ապա կու գաս, գլուխս կու ցաւցնես...» Հէնց այս խորհրդաւոր խօսքերի մէջն էին լցացած նրա ընչասիրական գաղտնիքը: Ալժմ միթէ այսպէս չեն վարվում ժողովրդի հետ աղահ քոխվաները, թերուս և ինքնակոչ փաստաբանները, վաշխառուներն ու տղուկները....

Վարժապետի խորհրդաւոր խօսքերի իմաստը անհասկանալի չէր մնում: Ամեն ընտանիք իր տղակի ձեռ-

քով նրա համար ուղարկում էր տաք հաց, պանիր, իւզ, ձու, հաւ, զայմախ, մածնասեր, նախշուն գուլպաներ, զալուխներ, ձեռնազլուխներ, խոնչաներով կերակուր և այլ այսպիսի կենսական պիտուք: Տօնական օրերում աշակերտները աւելի ճոխ և լաւ պատրաստութիւնով էին հանդիպում վարժապետին: Աշակերտների հասուն քոյրերն ու հարսները գոյն գոյն թէլերով նաշխուն զալուխներ էին կարում, գոյնգոյն յուլունքներով զարդարում, միջին էլ մի ազիզ նուէրք գնում և ուղարկում վարժապետին: Զատկական ձուն զանազան նկարներով նաշխուն էին, ճիշտ վարժապետի արած թլիսմանների ծուռ ու մուռ գծերի նման, ամա յուլունքից գործած բնի մէջ դնելով ուղարկում էին նրան՝ շնորհաւորում զատիկը: Արամի մօր կարողութիւնը չէր պատում այդպիսի նուէրքներով հաճոյանալ վարժապետին, այս պատճառով էլ վերջինս նրա շորերը և ձեռն ու ոտն էր լուանում, մաքրում: Այս էլ քիչ բան չէր: Շատերն էին ուզում այդ ծառալութիւնը մատուցանել վարժապետին. սակայն՝ նա միայն տէրտէրակնոջ վրաէ էր վստահ: Այս դէպքում խալիֆան արդար էր. նա գիտէր որ՝ սրան ու նրան հաւատալով՝ ի զուր խօսակցութեան առարկայ պէտք է դառնայ գիւղի մէջ և զանազան կասկածներ լարուցանէ իր գէմ: Հէնց ալժմ էլ այսպէս պէտք է վարուէ գիւղական վարժապետը:

Նկատողութեան արժանի էր վարժապետի սենեակը: Կախաններով սերգել ու պահունի խաղող, շարաններով տանձ ու խնձոր պատիցը կախած էին: Թարեքի վրայ, աջ ու ձափ կողմում, շարած էին գինով ու օղիով լի թունդիներ: Տախտի ծալրին, խոնչաների վրայ, տապակած հաւեր, տախտի տակին կարտոփ ու սոխ էր

թափած: Դուք ու մ զանազան տեսակ կերակուրներով լի ամաններն էին գրած, հացն ու նազուքը իրար վրայ գարսած: Այս ամենը ուտառող, խմող էր կանչում և վարժապետ պարոնն էլ չէր իմանում ի՞նչ ուտի, ինչից նիւթ առնի: Նա առանց ուտելու էլ կուշտ էր: Ապրեն վարժապետի սիրդաշները տէրտէրն ու Օտէփը, որ ամեն օր իրանց այցելութեամբ թէ միսիթարում էին օտարականին և թէ կշտացնում իրենց որկորը...

Մի օր այդ երկու անկոչ հիւրերը կուշտ ուտել— խմելուց լետոյ՝ աւելի քաղցրացան իրար հետ և ունեցան հետևեալ խորհուրդը:

«Պարոն Օսէփ, ասաց տէրտէրը, էս լաւ բան չի, վարժապետի ունեցածը մենք միշտ ուտում ենք ու....»

— է՛հ, տէրտէր, խօսքը կտրեց Օսէփը, ուտելու բան ա, կ'ուտուի՝ բա ի՞նչ կ'ըլի:

«Զէ, որդի՛, խալիսին կանչենք, ասենք, խօսենք, որ հաւ ու ճուտ տալով վարժապետը բան չի դառնայ, մի քանի շահի փող չի ունենալ. վճռենք, որ աշակերտագլուխ ամսական մի քանի շահի փող տան, որ սա էլ խեղճ ա, փողի տէր գառնայ: Աւետարանը ասում ա. «մշակն արժանի է վարձոյ իւրում:» Վարձ ասածդ փողն ա, հալալ քրտնքի հախն ա:»

— Տէրտէր ջան, խօսքդ շաքար ա, ամա որ փող վճռենք, էս պատիւները էլի կը բերեն:

«Ի հարկ է, հաստատամտութեամբ պատասխանեց տէր հայրը. վարժապետ ասածդ անպատիւ չի մնալ: Միայն դու էս սաա, ոնց անենք, որ լաւ ըլի:»

— Ես իմ կարճ խելքովս էսպէս կը վճռեմ, վրաբերեց Օսէփը. ունեռը ամսական քստն կոպէկ տալ,

միջակը՝ տասը, աղքատն ու եթիմը՝ մուհտա: Ի՞նչ  
կ'ասես:

«Եաւ... ուրիշ գեղի երեխաներն ինչ տան:»

— Նրանք էլ մեզ պես. իթ. նրանք հայ չեն:

Այս խօսքը Օսէփը շեշտակի արտասանեց:

«Օրհնեալ լինես, որդի, շատ լաւ ես վճռել: Ես էլ  
չենց էղակէս պէտք ա ասէի: Կարգադրենք, եղնա վար-  
ժապետը ումնից կուղի՝ ստանայ, ումնից չէ՝ մեզ ինչ: Մենք  
մեր պարտքիցը պոծած կ'ըլենք: Օսէփ, լաւ  
իմացի, որ էս ուսումնարանի մեղք ու վարձքը մեզա-  
նից կը հարցնուի էն դունքի ուղարկան գումարը: Հունքի՝ սարաբը տռաշ  
ես եմ, եղնա՝ գու...»

— Ո՞վ ա ինչ ասում, տէրտէր ջան, էնպէս բան  
անենք, որ էս մարդի օթախումը մեր կերած-խմածն  
էլ հալալ ըլի: Վաթսունից աւել աշակերտներ կան, որ  
հեսար անենք, վարժապետը ամսական տասը մանէթից  
աւել փող կը ստանայ...

«Օրհնեալ լինես. ես խալխի հետ կը խօսեմ, դու  
էլ ինձ օդնի:»

— Բաշուստա: Մի աբասին ու երկու շահին ինչ ա-  
ամենքն էլ կը տան: Ամա ում գլխումը փէլին ա,  
նրան հազար ասա...

«Ե՞՞Ն, օրհնուած, վրաբերեց տէրտէրը, քարոզ բա-  
շա գիրմազ, եազմուը դաշա գիրմազ (ինչպէս անձեւը  
քարի մէջ չի մտնիլ, այնպէս էլ խրատը լիմար գլխի  
մէջ): Մենք կիրակի օրը վերջացնենք. ինչ կասես:»

— Հէնց ոնց որ կամքդ ա:

Տէրտէրի ու Օսէփի հաստատամտութիւնը մեզ յայտ-  
նի է. նրանք իրանց խօսքը ստել չէին կարող. նրանք

այդ խօսքի մէջ տեսնում էին վարժապետի վիճակի  
ապահովութիւնը, որ խիստ մօտ էր իրանց սրտին:

Զորս օրից յետոյ յարգելի խալիֆան ոչ թէ միայն  
պատիւներ ու կանանցից ծածկաբար ոսկի-արծաթ էր  
ստանում, այլ և որոշեալ թոշակադրամը: Նրա պա-  
հանջը այդ մասին շատ խիստ չէր: Նրա վարմունքն ու  
հեռատեսութիւնը կախարդական էր դրամ ժողովելիս...

«Ըշտէ փարա ալ չունէի, ունեցայ ու կ'ունենամ...  
Ըմմա, քիչ մը համփերութիւն պէտք կու գալ, որ փա-  
րայիս հինգը տասն ըլլալ: Գէնա գործենք ու աշենք  
փանին...» Ամեն առաւօտ կնճռոտ դէմքը լուանալուց  
յետոյ՝ այսպէս էր մտմտում վարժապետս և չիրուխը  
փստացնելով դէս ուսումնարան քայլում:

— Վայ... նանի... եկաւ... Ալծուկի պէս մկկում էր  
հեռուից նրան տեսնող աշակերտը և պատէպատ առա-  
ջակտուկ վազում..

## ԺԲ:

Դ Ա Հ Ի Ճ

Միստ քեզ, ոսկորը մեզ:

Ոտի թմփթմփոցը մօտեցաւ:

«Նը՛ռռ—վը՛ռռ—դը՛ռռ...»

— Եկաւ, եկաւ...

«Նը՛ռռ, չը՛ռռ—ըը՛ռռ...»

Թը՛լիկ!!..

«Վայ... նանի ջան...»

Եը՛լիկ! զը՛լիկ!!..

«Աստօծ ջան... նանի... ել անիլ չեմ... վայ  
դլուխը»...

— Դէ ֆարտլամիշ, չը իսկ!!..

«Վայ քիթը... մագերը... նա...նի...»

— Դէ, չաթլամիշ, շան—օրթի... չը իսկ—թը իսկ!!..

«Քու անմին մատնա.. քու չարը տա..ն....Եմ»...

Բայց որտեղ: Ոչ նանն էր օգնում, ոչ ազին և ոչ  
մինը: Նանն ասում էր. «ֆարժապետ ջան, միուր քեզ,  
ուսկորը մեզ:» Այս խօսքն էլ մի կողմից էր ֆարժապե-  
տին քարացրել, սիրտը ապառաժ, զգացմունքը լեռ քար  
շինել: Լաց, կոկիծ, աղաչանք և ոչ մի աղետ չէր մեղ-  
մացնում վարժապետի կատաղութիւնը: Աղի արցունքը  
կրակի պէս տաք, որ գլորվում էր մանուկի կարմրած  
աչիկներից, աղեկտուր շարժումներ՝ սպանդանոցում  
վայը գլորած արջառի նման, բօթում էին վարժապետի  
ապառաժ կրծքին գութը շարժելու համար, բայց նա՝  
ինչպէս դահիճ մահապարտի զլիքին, սրած սուրը ձեռ-  
քին, չէր խղճահարվում և ոչ մի բանաւոր գրաւական  
չէր շարժում նրա գութը. աչ և ձախ դըք'իս, թըք'իս,  
չըք'իս, մազաքարշութիւն, ապակագարգութիւն, ճի-  
պոտահարութիւն—ում, երբ, ինչք համար—ոչ ոք չը  
գիտէր: Եւ այս բարբարոսութեան բոլոր պատճառը ոչ  
մեղ ինչ էթէ ոչ մանկական սրտին սիրելի մի ան-  
այլ ինչ էթէ ոչ մանկական սրտին սիրելի մի ան-  
այլ շարժումն, լեզուին հաճոյական մի խօսք, թեթև  
անզգութիւն և կամ խըթին դասի բերան չը գիտե-  
նալը: Այս էր մանկան բոլոր մեղքը:

Վարժապետիս կարծիքով, ապատակազար գու-  
թիւնը աշակերտին խելք ու շնորհք էր տալիս: Քու  
թակով աշակերտին ճղղացնելն ու բղդացնելը որպէս  
թէ սրում էր նրա միտքը, մեծացնում նրա ընդունա-

կութիւնը, և մանկութեան ժամանակից ընտելացնում  
նրան ամեն կերպ մարմնական նեղութեանց: Այս էր  
վարժապետիս հոգեբանական քունչ ու պուճախը:  
Աւազ. մի և նոյն համոզմունքին էր և ժողովուրդը:

Վարժապետի ներկայութիւնը աշակերտաց մահու  
շափ երկիւղի մէջ էր ձգում. նրանց կուրծքը զրկում  
էր՝ ինչպէս բռնուած ճնճղուկի: Վարժապետի ամենա-  
մեղմ դիրքը լուսւթիւնն էր: Նրա լուսւ ճիշոցին, երբ  
կերպարանքը բնական գոյնով, շարժումները բնագդման  
կանօնաւոր հետեւանք էր, երբ նրա սրտի ու մտքի խա-  
ղաղութիւնը նկատելի էր, աշակերտները ամեն կերպ  
իրանց սանձում—աշխատում էին չը շարժել նրա ար-  
դար բարկութիւնը և չը խռովիլ նրա հոգին: Արհա-  
մարհելի էր նա՝ ով դաստիարակչի կատաղութեան մա-  
զաչափ պատճառը կը լինէր՝ քիթը կամ գլուխը քորելով:

Առհասարակ քաղցը խօսքը վարժապետի մանկա-  
վարժութեանը դէմ էր: «Եշ, իշուն գլուխ, չաթլամիշ,  
ֆաթլամիշ, գուրորվիք, շան օրթի, հէլվան, արջին տրո-  
գուկ» և այլ այսպիսի անարդ խօսքերը քաջ դաստիա-  
րակչի բերանի աղ ու համն էին, ապա որոնց հետեւում  
էր իր բնութեան բոլոր փոփոխութիւնը — աչքերի  
անբնական սեեռումն, անկանօն շարժումն, կնճիռ և  
ատամանց կրծտումն, ձեռքերի ու ամբողջ մարմնի գող-  
դողոց, ցնցումներ, այլայլումն և թշուառ վայրկեան....  
Նա կայծակի արագութեամբ հասնում էր ու չըք'իս,  
թըք'իս, էլ չէր հարցնում մէջք, գլուխ, ձեռք... Ում  
նմանացնենք արդեօք նրան. ինչպէս հրաբխալին լեառը  
տրաքվելով գուրս է թողնում ալին և ապա հանգիստ,  
այնպէս էլ վարժապետից, նրա բազուկներից այնքան  
ուժ պէտք է դուրս գար, որ վերջապէս թլուէր և

ինքը, և ձեռքերը... Ամբողջ քառորդ ժամում նա իր հաշիւը չէր վերջացնում: Բարկութեան տեղի տվող աշակերտից սկսում և ապա աստիճանաբար՝ այս ծայրից այն ծայրը—այն ծայրից այս ծայրը բռնցքահարելով ու ճիպոտազարդելով գնում-գալիս էր: Այս կատաղութեան միջոցին ընդհանուրին «տուր» տալը լաւ էր, քան մասնաւորին: Ենթադրենք 60 աշակերտ. եթէ ամեն մէկին չորս անգամ զարգէր, զարգերի թիւը կը հասնէր 240-ի: Յանցաւոր կարծուածը կը դիմանար արդեօք այդ բուռն կիկնումներին, եթէ դահիճը բոլորին էլ մասնակից չանէր:

Երեխանները, որ արտասուքը նոր էին սրբել իրենց աշերից և որոնց սիրաը գեռ տրոփում էր, կարդալու ձայնները յանկարծ փոխվում էին նորէն լացի, գոռոցքի, բառաչումների, տնքոցի, ճշոցի, ծկլթոցի և ուսումնարան ասածդ ներկայացնում էր մի կատարեալ սուդ ու շիվանոտ տեղի...

Չիբուխի կոթը բաւականին հաստ էր՝ գիլամասը ի ծառից. միայն նա էր դիմանում և առանց կոտրվելու ծառայում էր դահիճ գործիքի պաշտօնին: Միւս ճիպուտները կոտրտվում—ծլանդ ծլանդ էին լինում աշակերտներին հարուածելու ժամանակ: Մազերը, ու, երեխանց մազերը, ականջները կրակի մէջ էին ընկել անգութի ձեռքիցը: Նա մազերը փունջ-փունջ ճպուում էր ու դէսու դէն շպոտում—ճպուելու միջոցին տրաքարաքելով դուրս էին դալիս արմատից, ինչպէս զօրեղ քամու առաջին դարաւոր կաղնի ծառերը: Աշակերտների ականջներն ու ներքի բլթակները կարմրել, փափկել, ուռել ու մարմինք էին դառել: Արամի, Մարգարի, Արտէմի, Ղազարի և ուրիշների

ականջները բլթակից պատովել էին ուժգին քաշելուց և, վէրքիցն արիւնը մշտապէս կաթկաթում էր...

Լացակն երեխաններից շատերը մահու չափ կսկիծը տանելով՝ ներսից էին մխկտում, հեկեկում և ձայնը դուրս չէին թողնում: Նրանք անշարժ, արձան կտրած, ահահար ու դողահար գարձեալ կարդում էին, կարդում և էլի գերքը թըջելով կարդում...

Ում քիթը արնում էր, նա՝ վարժապետի հրամանով շէմքում դրած ջրովը լուացվում էր. միանգամից ուժիննը երեխաններ քիթը բռնած դուրս էին գալիս մաքրուելու: Արիւնը շռուում էր նրանց քթիցը: Թարս հարուածներից ոմանց ատամն էր կոտրում—արիւնով քերանը լցվում: Շատերն ահիցը լեզուններն էին կծոտում, պառշները ծամծմում:

Հարուածների տակ ով պինդ էր գոռում, նրան կրկնապատիկն էր հատուցանում. ով լուռ տանում և միայն գառան նման տնքալով էր բաւականանում, նա մի քանի հարուած պակաս էր ստանում: Ահա վարժապետի բարեխիղճ կողմն ու գերազոյն գութը: Ինչպէս տանըցիք, նոյնպէս և աշակերտները այսքանը միայն լաւ իմացան, որ «առանց թակվիլու կարդալ չի ըլիլ»: Աշակերտներից շատերն ուզում էին փախչել և մի քանիսը փորձեր էլ արեցին, բայց անլաջող անցաւ. «Զօ, լեզիդ կու փադուիմ, ասումէր վարժապետը, ուր կրնաս փախնուլ: Դժոխքին առջև ալ քովդ եմ. անսարին վրան, աս ջրին մէջն ալ ջոխին հազիր ա...»

Արամը դաս է ասում, ծնգչոք. «Տէր հովուեցէ զիս և ինձ ինչ ոչ պակասեցի՞»:

— Ըշտէ, չաթլամիշ, հասկցիր:

Արամը կրկնում է նոյն ձայնով:

— Իէ, շան օրթի, առափէս ըսէ...., «և ինձ ինչ ոչ պակասեցի...» և ըլխի... Հարուածից երեխան ըլշ-կլուեց. նա ուզեց ձայն-քաշը տեղը բերել թէ ոչ հարուածը մի անդամ էլ կրկնուեց: «Ըշտէ, ըսէ, նօ, ըսէ...» Բայց որտեղից ասի. անպիտան տէր «Հովուեցէ» և տողը կորել էր Արամի աչքիցը և նա կզկաց... Վարժապետը այս կէտում չիբխակոթի պաշտպանութեանը դիմեց. բայց Արամը չուզզուեց. ապա հանգուցեալ մատաքարշութիւնը հանդէս եկաւ.... Արամը հեկեկաց ու վայր ընկաւ: Սոսկալի վայրինան: Միւս երեխաներն էլ չէին նայում՝ թէ ինչպէս չարագործը իր անպաշտպան որսը առ կենդանոյն է կլանում...

Արամի դասն այդպէս վերջացաւ: Այժմ Մարգարը պէտք է դաս ասէր, ապա միւսը, մէկէլը....

Վայն եկել էր, տարել խեղճ Ղազարին. նա կակազ լեզու ունենալով՝ չէր կարողանում միանգամից և ուղիղ արտասանել բառերը.» Ըշտէ, ձօ, Ղազար ես, շան օրթի ես, ըսէ դասդ.»

— Մի նախ—նախանձ—անձիիր—իր...

«Ձօ, չաթլամիշ» և մէկ ապտակ նուիրեց նրան, որի լեզուի շենքը աւելի խախտուեց և նա ուզեց նոյնը կրկնել, չը կարողացաւ ու կզկում էր...

Ցաւալի էր Ղազարի վիճակը. բնութիւնը նրան պատճել էր լեզուի կողմից, անգութն էլ միւս կողմիցն էր մսնատում. նրա լեզուի կակազումը շատ անգամ երեխանց ծիծաղը շարժում էր՝ դուրսը, բայց թէ ծիծաղողը լի-

նէր աշակերտ և վարժապետը լսէր՝ ու մահ կը տար նրան: Այս մի փոքր մխիթարական էր Ղազարի համար:

Միրզանց Օսէփը մեծ յոյս ունէր՝ որ իր մինուճար Ղազարը զիր կարգալով ժառանգելու է միրզա (զրագիր) պատի անունը. նա Ղազարի լեզուի ուղղելն ու կըթութիւնը յանձնել էր վարժապետի հովանաւոր խնամքին:

«Ամենքին ալ չիբխին կոթը կը դրստէ. գուն էրի խէին կեցիր, Օսէփ ազա: Ըմմա եսիկ ուրիշ հետաքններ ալ գինամ. անսնք ալ կէնեմ ու Ղազարին լեզուն աղէկ կը շտկեմ.»

Վարժապետը ասեղով ծակծկեց Ղազարի լեզուն՝ շտկելու համար—ազօթք մըմնջալով: Լեզուի երեսից արիւնը ծծուկ—ծծուկ գուրս էր քցում և երկար ժամանակ ոզորմելին թթու և կծու չէր կարողանում ուտել: Այս արարքը անուանվում էր լեզուամուխ՝ վարժապետի կախարդագիտական մասնին համեմատ, որպէս թէ լեզուին մուխ էր տալիս, որ պնդի, ինչպէս դարբնոցում երկաթի գործիքներին զոթ են տալիս:

«Սոլոմոն, Թաւիթ...» Այսպէս գոռալով օգնութեան էր կանչում նա իր մեծահասակ աշակերտներին, երբ ինքը կատաղած, բերանը փրփուրու փուլիք բըռնած, ամբողջ մարմնով գողալով, տախտակի վրայ վայր էր ընկնում:

Սոլոմոնն ու Թաւիթը 19 տարեկան տղակը էին և գիտէին՝ թէ իրենց կանչելու պատճառն ու նպատակն ինչ է. իսկուն հասնում էին ու վարժապետի ձեռք ու ոտքը պինդ բռնում, որ չը դողդողալ և այդպէս բռնած երկար պահում էին: Նա հեռում էր՝ ինչ-

պէս 10 փուլթ բեռան տակիցը նոր ազատուած մշակ. նրա ճակատիցն ու քթի ծակերիցը դոլորշին դուրս էր մղվում... Այս սոսկալի դրութեան մէջ նա այլ ևս չէր նայում տեսնելու թէ՝ ովէ է կարգում, ով աչքերը «շուրտուպրան» անում...

Ի՞նչ դրութիւն է, ի՞նչ դպրոցական կեանք ու կըրթութիւն, ընթերցող, դու ուսումնասիրիք: Տայց մենք այժմ անցնենք մասնաւոր տանջանքներին՝ ընդհանուրից ձեռք քաշելով:

Վարժապետը ինքն իրանից էլ նոր պատիժներ էր հնարում և փորձեր անում:

Յիշոց տվող աշակերտի համար նա պատրաստել էր հօնի ծառի ճղներից մի կտոր փալտ, ծալրերը հաւասար կտրած. այդ կարճեկ փալտը դէմ էր տալիս յանցաւորի բերանի մէջ—մի ծալրը վերին, միւս ծալրը ներքին ծնօտին, այնպէս, որ բերանը բաց էր մնում և որպէս զի պատիժը հասած լինի իր ծալրագոյն կատարելութեան, նա մէկ մատնոցաշափ մոխիր էլ ցանում էր բերանի խոռոչի մէջ... Արտասունքը խառնուելով փոլինք ասուած թքաջը ծորի հետ՝ ներքին ծնօտի վրայից մեղրածորի պէս վալր էր թափում... Այս տանջանքի մէջ երեխան ժամերով կանդնած մնում էր՝ մինչև որ բարի վարժապետը կը ներէր նրա յանցանքը:

Մի այլ յանցաւորի վարժապետը չոքացնում էր, բայց ոչ սովորական կարգով: Չոքայնելու համար որոշած տեղը քարի մանրուածք էր վէր ածել: Երեխային չոքացնում էր այն սրերի վրա. ապա տալիս էր նրա ձեռքը մի ծանը առարկայ՝ որ բարձր բռնած պահէ:

Պատժակիր աշակերտը ուժից ընկնելով՝ կողքի վրա գլորվում էր: «Ներել—այդ կախուած էր դահճի կամքից:

Ուրիշ յանցաւորի նախ մատների ծայրերը, ապա լեզուն ծակծկում էր ասեղով: Ինքանի խոռոչը լցվում էր արիւնով, որի մի մասը կուլ էր ընկնում, միւսը՝ դուրս ծորում...

Երեխան աչքերը խփելով «նանի ջան, նանի ջան» ասելուց յետոյ՝ լեզուն կախ էր քցում ու միայն զբլղացնում բողազումը: «Հանէ լեզուդ, շան օրթի»— գոռում էր վարժապետը: Նա գողգողացնելով հանում էր և յանկարծ սաեղի սուր հարուածները ստանալով՝ կուլ էր քցում լեզուն և նորէն հանում, մինչև որ բարի վարժապետը բաւականութիւն էր զգում այդ տաժանելի տանջանքից...

Մողգի ասուած խրատը աւելի զարհուրելի էր երեխանց համար: Մեծ աշակերտները նստում էին պառկեցրած յանցաւորի ոտքերին ու թիկունքին, որ չը շարժուի: Վարժապետը ճիպոտը յանձնում էր ուժով երեխանցից մէկին և առաջուց նշանակում էր թէ՝ քանի անգամ պէտք է զարգել երեխայի բաց մսին: Եթէ զարգողը կամաց էր վրաբերում զարգը, դահճապետը նախ նոյն իսկ նրան էր մի քանի փորձացոյց անում: Ընթերցող, արդէն երեակայում ես թէ՝ Ի՞նչ կը լինէր այդ ըոսէում զարգողի ու վայր ընկածի սիրտը: Գործը վերջացնելուց յետոյ՝ վարժապետը տանից բերել էր տալիս իւղ կամ օղի և մինով կամ միւսով զմբառմ էր ծեծուած տեղերը, որ շուտ առողջանալ: Վիրաւորուած երեխան ման գալ հազիւ էր կարողանում, այժմ պէտք է նստէր քարին, դասը մըմնջար... Մայրերը առանձնապէս խնամք էին տանում երեխանց վէրքերի առող-

ջութեան վրա—առանց ուշացնելու ուսումնարանից:

«Կանգառ» հաւաք շշներով փշարուսն էլ ամենամեծ թշնամին էր երեխանց: Այդ բոյսը այս կողմերում առատ էր բանում: Նրա սուր-սուր ատամնաւոր տերեները՝ ի մի ժողովելով և կազմելով փշափունջ, վարժապետը սրանով ծեծում էր երեխանց ոտքերի տակն ու ձեռքերի մէջը: Այդ բոյսի փշերը գրեթէ չի զանազանվում ոգնու փշերից:

Ամենազարհուրելի էր «ոտնակախուկ» պատիժը: Անպիտան ուսումնարանի կողքին, խոր բագումը, մի տանձենի ծառ կար, որ իր կնդակագլխովը սպում էր անձեղների համար հիմնած սպանդանոցի վրա: Այդ ծառի ներքին հաստ ճղներից վարժապետը կապում էր ջուխտակած մազէ թոկը ու մեղաւոր համարվածի ոտքերը բարձրից չըմեխում, այնպէս, որ երեխան հազիւթէ գլխով դիմհար էր տալիս գետնին: Նա անքնական դիրք ստանալով՝ արիւնը աչքերը լցվում էր, գոյնը նետվում, տնքում և միայն տնքում էր...

Ազատութեան ըոպէն ուրախալի էր. սակայն՝ հետեանքը դառը: Խեղճ պատժակիրը թմրած ուղեղով, շաղուած աչքերով, թոյլ քայլերով, լնգլնգալէ՝ գնում նստառմ էր անիծած քարին:

Այս բոլոր չարչարանքը յայտնի էր ծնողաց և յաճախ մօր ներկայութեամբ դատապարտվում էր որդին: Ուսման սիրահար մացը որդու տնալին չարութիւնները մատնում էր և ինքը քամու պէս դուրս ծլկում... Ում երեխան շատ էր պատժվում, ծնողը կարծում էր թէ՝ վարժապետը նրան շատ է հետեւում. «Վարժապետի աջ կուռը շնորհիք, ձախը՝ խրատ ա. երեխս երկուսին էլ պէտք ա տիրանալ:»

Հալբաթ որ էդէնց ա, Զավօ ջան: Ես էլ հիմի Դադարիս կուռը բռնած տարայ ուսումնարան, նրա տան չարութիւնը վարժապետին գլխի քցեցի, որ խրատի— ասում էր Սոէփի կինը:

«Բա խի՞ էր եղացել:»

— Խոնդկել էր: Ականջի եարին մի թիքա եղ քսեցի ու խափելով տարայ...

«Եղնամ...»

— Էլ գիտեմ ոչ, զէ էնա եղի օրը կը քցի երեխիս..

«Հա, վրաբերեց ոկզբնախօսը, վարժապետը նրան կ'ասի՝ էս քեզ խրատ, էլ չը ցանես կտվահատ: Աղջի՛, որ ահ ու երկիւղը չըլի, դրանք ուսումնարան կը գընան:

— Դէ ով ա ինչ ասում:

«Ասելու էլ թնչ բան կա:»

## ԺՊ.

### Ա Ն Կ Ո Ւ Մ Ն

«Հէջ փան մը չկայ, երխէին կեցէք.» այս էր վարժապետի մշտական խօսքը, որով նա վարատում էր ամեն կսկիծ ու կասկած: Նա կապկառում, կաշառում ու գրառում էր այն մտքի աչքերը, որոնք, շատ թէ քիչ, կարող էին թափանցել իր գործունէութեան խորքերը և թեթև հասկացողութիւն կազմել դառը հետեւանքի մասին: Վարժապետը «Յայսմաւուրքի» աշակերտների մէջ մի տեսակ զաղափար էր տարածել, որ ով

որ իրան վնաս կը տայ և արգելք կը լինի իր ազգօգուտ գործի ընթացքին, նա այնպիսի չար հոգու տունը սատանաներով, դեերով ու քաչքերով կը լցնի, նրա տան լաջողութիւնը կը կապի: Ել ով կը համարձակուէր նրա վրա վատ բան խօսել: Մինը վախելով, միւսը լարգելով, երբորդը պատուելով, չորրդը վարձատրելով, բացել էին նրա առջև մի լայնարձակ ասպարէզ, որ կարօտ էր հմուտ ալգեպանի: Բաղդն այն էր, որ վարժապետից «Հաշիւ ու համար» պահանջող էլ չը կար: Բաւական էր, որ աշակերտներից հասունները հետզհետէ «խոնարհեցո, ապրեցո, համբարձի» փոխերը եկեղեցում բերան ասում էին: Կեցցէ վարժապետը, որ ամենայն արթնութեամբ հսկում էր իրան ստանձնած գործին. այլ և կեցցեն բռունցքներ և դահիճ գործիքներ, որոնք անխոնջ կերպով ծառայում էին նպատակին...

Մտնում ես ուսումնարան և աշակերտների մասին մի որ և է բան նկատում. վարժապետը պատասխանում է «ըշտէ գիրք կարդալն կը հալէ ու կը մաշէ մանչուկին. վասն զի՞ կարդցող մանչերը նորէն կը ծընանին գրեանց օրհնեալ մարիկէն: Սա ալ դիւրին փոն մը չէ: Ովք աս խրատիս տակէն դուրս կ'ելլեն, անոնք լու մարդիկ կու մեծնան, եսիկ ալ, դուն ալ անոր ոտիկն ու ձեռիկը կինանք, կու համփուրինք... ըմմաշատ քիչւոր մանչեր կը հասնեն ադ օրին:—Աս դուռը նեղ է և անձուկ, կըսէ մեր տէր Յիսուս, բազումք են կոչեցեալք և սակաւք ընտրեալք...»

Դուք Բնչպէս կը վարուէիք, բարի ուսուցիչ, եթէ ձեզ յանձնէինք Արամի, Մարգարի, Ղազարի և այլ սրանց նման մանկութեամբ վարգացած, աշխոյթ ու խաղասէր երեխաներ: Դուք սկզբից շատ լու ծանօթացաք

արդէն նրանց զարգացման, գիտութեան և մանկական անմեղ ձգտումների հետ: Դուք տեսաք արդէն թէ՝ նրանք տանիցն ու դաշտիցը, այգուցն ու անտառիցը, ձորերիցն ու նախրիցը որքան տեղեկութիւններ, այլ և քանի պունդլեր, հեքիաթներ, առածներ, խաղեր, երգեր, սովորութիւններ և նախապաշարմունք տարան իրանց հետ ուսումնարան, թէ և ծուռ ու մուռ, հատ ու կտոր, որ պէտք է ուսումնարանը մաքրէր, զտէր և այդ ունեցածի վրա էլ շատ բան աւելացնելով՝ դուրս բերէր հասարակութեան օգտակար մարդիկ:

Օվանէս վարժապետը նոյնպէս երևակալում էր՝ որ մանուկները ապագայում լաւ հանձարներ պէտք է դուրս գան—պոէտներ, մովրովներ, չինովնիկ, տէրտէրներ, քոխվաներ, վարպետներ... բայց մինչ այդ երևակայեալ պարուների լոկ անուանց հետ ծանօթացնելը՝ մեր երեխալքը մարմնական և մտաւոր կարողութիւնից ընկան:

Ուսումնարանը իր մի քանի ամսեալ գոյութեամբ խանգարեց երեխանց առողջութիւնը և ձգեց նրանց անդառնալի կորսատեան մէջ: Երեխանց աշխոյթը մշմեղեց, թարմ ուժից ընկան, ձգտումները թլացան ու անհետացան. կայտառ աչք, սիրուն դէմք, վայելուչ հասակ, առողջ կազմուածք, մանկան խրոխտ ձայն, գեղեցիկ ընդունակութիւն—բոլորը, բոլորը զոհվեցին, փշացան... Դեզնած երեխների վրայ բժեր ու գծեր են նկատվում. երկու մեծ խորշերում աշիկներն են կուլ զնացել, յօնքերի կնճիռը կախուել, այտերի բարակ ոսկեները ցից—ցից մնացել, քթերի ծալրերը նուազել, կարմըել. նրանց շրթունքը ակամալից են շարժվում, ձայնը իբր կարասից գուրս մղվում... Փալիտ, ծիծաղ, զրոյց, խօսք և

մայրական լեզուի քաղցր թոթովանք չը կար այնտեղ:  
Սուր, շիվան, լաց և զրաբառ խրթին ալբբենարան շատ  
կար այնտեղ, որի խօսքը զնդանի պէս ծանրանում էր  
մանկան որտի վրա.

Նա տարտարոս էր՝ ոչ ռասումնարան,  
Սպանդանոց էր եւ ոչ կրբարան.  
Սակայն մոր ներկանիք աղօտ լուսով—  
Ո՞ւմ է պայտական, երե ոչ՝ նորան:  
Քանիք դար այդպէս ազգը պահպանուեց,  
Քանիք ջարզարանի մանուկը կրեց.  
Բայց քէ չը զործէր խայթան, բանան,  
Մեզ այսօր կը մնար մի ռասումնարան...

### ԺԴՌ

ԳՈՄ ԵՒ ԶԲՈՅՑ

Թամամ իրեք ամիս ա,  
մեր աջքերը լախս ա:

Աշնան վերջի ցրտերն սկսվեցին: Սառը քամին հիւ-  
սիսից սրսուռ ու պախրի փոլինք էր բերում: Ամեն  
շնչաւոր պատսպարուեց տաք բներում: Տէրտէրանց մա-  
րաքի ժամանակն անցաւ. նա էլ չէր կարող ուսումնա-  
րան լինել. քամին վսկսում էր նրա մէջ...

Զմեռը զիւզում գոմի օդէն աւելի տաք է և ձեռն-  
տու բնակութեան համար, քան հաստափոր տներն  
ու նեղիկ մարաքները: Հէնց այս պատճառով տէրտէրն  
ու Միրզանց Օսէփը միասին խորհրդակցելով՝ ուսում-  
նարանը տեղափոխեցին Խաչատրանց գոմը: Աշակեր-

տաց նստելաքարերը մարաքումը շարած մնացին, որ  
գարունքագէմ գարձեալ այնտեղ տեղափոխեն շարժա-  
կան ուսումնարանը: Խաչատրանց գոմը այնքան մեծ  
էր և գետնափոր, որ մտնողի վրա սարսափ էր բերում իր  
քունջ ու ոլուճախներովը: Նա մի աղբածակ ունէր.  
տանիքի հողը քանդել՝ մի երգիկ էլ նոր էին բացել  
աշակերտաց նստելու հանդէս, որ աւելի լոյս թափան-  
ցէր: Վաժապետը իրեն յատուկ տեղն էր նստում, աղ-  
բածակի դիմացը: Ալգտեղ կրակ էին վառում, որի  
թանձր ծուխը մոլորդելով գոմի մէջ՝ աւելցուքը դուրս  
էր մզվում երդիկովն ու աղբածակովը: Աշակերտներին  
պատուիրած էր, որ ամեն առաւօտ տներիցը մի մի  
կռնատակ փայտ հասցնեն ուսումնարան, այնպէս, որ  
կարելի լինէր ոչ միայն գոմը, այլ և վարժապետի կա-  
ցարանը տաքացնել:

Գոմ-ուսումնարանը տաքացնելու համար այնքան  
միջոց ու աշխատանք չէր հարկաւոր, առանց այդ էլ  
նա տաք էր. մի կողմից երեխանց ու անասունների շըն-  
շառութիւնը, միւս կողմից տաւարի ազքից ժողո-  
ված կիտուկը, որին աէքը օրական մի-երկու անգամ  
խառնումէր և կորի բորբոքումից գոլորշի էր բարձրա-  
նում, տաքացնում էին գոմը:

Գոմի մի անկիւնում անքառներ էին կազմում  
ախոսիցը, միւսում 60-ից աւելի աշակերտներ ծլլաշ-  
րուկ նստում էին ախոսագերանների վրա..

Դեկտեմբեր ամիսն էր:

Մի օր երկու աշակերտ հրամանազանց գտնուեցին՝  
իրենց հետ վառելափայտ չո բերելով ուսումնարան:  
Ապրժապետը նրանց մի քանի արտակներ ուտեցնելուց

յետոյ՝ հրամայեց. «ըշտէ քալէք, անտառէն փայտ շալկէք ու բերէք»:

Սողոմոնն ու Մկրտիչը, սարի այս զաւակները, թոկը վերցրին և ձեռքերը փչելով, ցրտից վնդվնդալով, գնացին դէպի մեծ-Թափ անուն սարի գագաթը, որ կէս վերստաչափ հեռու էր գիւղիցը: Նրանք երկու շալակ փայտ հաւաքեցին, կապուկ արին ու մի մամոռտած քարի վրայ նստելով սկսեցին զրոյց անել.

«Սողոման ջան, լսել են, ասաց Մկրտիչը, Միլզանց Օսէփը մեր Վարժապետին շատ ա հաւանել, աղջկը նրան ա տալիս:»

— Խեղճ աղջկի, ինչքան քեօթակներ կուտի, հա...

«Ադամ, դրանում հաւատ չը կար: Ում ինչ մսես, նա կանի: Ասում են՝ վարժապետն աղաչանք ա անում, որ էն աղջիկն իրան տան:»

— Ղորժ, խեղտվելով վրաբերեց Սողոմոնը. դա ոչ իր մուրազին հասնի, հա: (Այս անէծքը ինքն իրան դուրս պլոծաւ խօսողի բերանիցը:)

«Նա որ էս գէղումը կնիկ ուզի, շարունակեց Մկրտիչը, մեզ անդանակ կը մորթի, բալա ջան, անկրակ կը խրովի: Արի, հազիր էստեղ ենք, էս թոկովը խեղտուենք, պուծնենք, էլ ուսումնարան չը գնանք...»

— Բա մեզ մեր ձեռովը խեղտե՞նք. բա մեր հէրն ու մէրը գան ու մեզ խեղտուած գտնե՞ն. բա մեղքը չե՞նք...

Սողոմոնը լացակումեց. Մկրտիչը աչքերն ուղղեց դէպի քամու առաջ տարուքերվող ծառերի կատարները:

Էլ քնչ անենք, ասաց Մկրտիչը. ուր էլ փախչում ենք, բռնում են ու թակիլով տանում՝ քցում էն քանդուածը, թէ հէնց պէտք ա կարդաք: Բա մեր գլուխը

էդ կոօի վրա ծախսած ա. բա մենք մի էծի չափ էլ չկանք. էծին որ ձեռն են տալիս՝ փախչում ա, ծտին մտիկ են անում՝ թուշում ա, խոզին ձեռն են քսում՝ ճղում ա. Հազիր մենք հացակեր ենք ու էդ անիրաւը մեզ սպանեց ախր... վրէս էլ սաղ տեղ չի մնացել, ջանըս զողում ա, զադէն, սիրաս լրտքում... Երնակ էն օրը, որ «պտտան-գեօլի» գլխի գոշին տաւար էինք պահում ես ու գու, մթտդ ա, զադէն, էն սիրուն օրերը...

Սողոմոնը պատասխան չը տուեց. Նրա սիրուը ճըլէլք ընկած երեխալի սիրտ էր դարձել. նա չէր խօսում, կարծես և լսում էլ չէր...

«Սողոման, դէ ասա է՛... ախր էս ցրտին էս փէտը ոնց շալակենք. ախր իմ մէջքը ցաւում ա...»

— Դէ քնչ անենք, կմկմաց նա. մեռնենք էլ, պէտք ա տանենք:

«Եղնա որ մի սհաթ էլ ուշ տեղ հասնենք, գիտաս ինչ կանի. քինթ ու պոռւնդներս արինլուիկ կանի—ըշտա եղացել էք—կ'ասի:» Մկրտիչն ասաց ու տեղիցը կանգնեց: Յանկարծ մինը ծառերի տակիցը դուրս եկաւ: Սողոմոնն էլ ծլունգ էլաւ տեղիցը և երկուսն էլ մնացին շշկած, կանգնած: Եկողն իրանց ընկերն էր-Վարդանը:

«Ադամ, վարժապետն ինձ զարկեց՝ որ ձեզ կանչեմ. քնչ էլաք, ախր կատաղել ա...»

— Ղորժ, Վարդան ջան:

«Իմ արել. ինձ էլ ձեր խաթէր մի սիլլա տուեց, որ թէզ գամ, ձեզ գտնեմ ու կանչեմ: Տեսնում չէք, թուշիս մինը կարմրած ա: Դէ գնանք:»

— Զէ, աղբէր, ես գալ չեմ, ասաց Մկրտիչը:

— Ես էլ, վերաբերեց Սողոմոնը:

«Ո՞ւր կը փախչէք, որ բռնեն՝ յետո՞յ:»

— Մեզ էլ օքմին չի կարայ բռնի, խօսեց Մկրտիչը,  
մի օր մի տեղ, մի օր ուրիշ տեղ տապ կը կենանք:  
Հալքաթ Սստօծ մեզ մի կտոր հաց կը տալ—կ'ուտենք:  
Որ կը տեսնանք ճար՝ ու իլլաջ չը կայ՝ Ազգուլազայ  
ուսների կշտին նօքար կը մտնենք ու մեր գլուխը կը պա-  
հենք.... Դու դալ չե՞ս, Վարդան ջան, դու մեր դաստ-  
ընկերն ես, դու էլ արի....

«Գեղ մատաղ, ես որ մէնակ եղ դառնամ, ինձ կը  
սպանի, ես էլ գամ—ազատուեմ. ամա խափէք ոչ, վա-  
խէք ոչ...»

— Ես թոկերն էլ հետներս տանենք, կը ծախենք,  
ասաց Սողոմոնը:

— Ուսումնարանն էլ իրանց ըլի, Աստծու հոնքը  
կրակն էլ, վրաբերեց Մկրտիչը:

Նրանք ընկան անտառի խորքը, անյալտացան. և  
մի սրտաշարժ երգ, որ ապա դիմացի ձորակից մեղմիկ  
լսվում էր, վերապահեց նրանց ուսանողական դառն օ-  
պերի յիշատակը.

«Թամամ իրեք ամիս ա,  
Մեր ազքերը յալիս ա.  
Անջաղ պրամանը յալիցը,  
Կորչենք մենք ևս մնալիցը.  
հա հա հա...»

Անքեր, ձնքեր, բարով ձեզ,  
Ե՞րբ էք տեսել մեզ ևսին.  
Ճամբաս տուեք՝ անց կենանք,  
Ծոցեր արեք՝ տափ կենանք.  
հա հա հա...»

## ԺԵ

### Մ Օ Ր Ա Մ Ր Մ Ո Ւ Ն Զ Ը

Արել ճաշատեղը հասու:

Վարժապետը սպասեց, սպասեց, տեսաւ որ ան-  
տառ գնացող երեխայքը յետ չը դարձան, Արամին ու  
Արտէմին էլ ուղարկեց նրանց յետելից, որ շուտով գըտ-  
նեն ու կանչեն:

Կէս օրից յետոյ՝ կորած երեխաների մալրերը դի-  
մեցին գէպի տէրտէրակնոյ տունը Արամիցը տեղեկա-  
նալու թէ ուր են իրենց երեխայքը: Բայց Արամն էլ  
տանը չէր:

«Տէրտէրակին ջան, խօսեց Սողոմոնի մալրը, իրե-  
կունը որ Արամը տուն գայ՝ հարցրն, իմացի, թէ մեր  
երեխէքն ուր են: Ախր երեքով ոնց կը կորչեն:»

— Լամ կ'ըլի, ա՛ կնանիք, դուք արխէին մնացէք.  
Ես կ'իմանամ:

«Աղջի ջան, ասումեն՝ վարժապետը կնիկ ա ուղում,  
իմացել է՞ք»— խօսքը փոխեց Մկրտչի մալրը:

— Ե՛հ, ձեր դարդը թողել էք, նրա կնիկ ուղելու  
վրա խօսում: Թագաւորի բարեբար երեխէքը կորել են,  
գիշերս գէլերոց կ'ըլեն... Վարժապետը ջառին կնիկ ու-  
ղի— չհանդամին...

«Ա՞յլ, ազչի, ջահել ա, աչքը մուրազի՝ մեղք ա»—  
ասաց Մկրտչի մալրը:

— Զէ, մէջ ընկաւ տէրտէրակինը, Խանումը դը-  
րուստ ասեց. դուք ձեր երեխանց տեղն իմացէք, տա-  
րէք ուսումնարան. Էս ա ձեզ պէտքը: Վարժապետը  
մեր խօսքովը ոչ նստում ա, ոչ վեր կենում...

«Հա, տէրտէրակին ջան. իրիկունը ես մեր մարդին զարկեմ իմանալ»—ասաց Սողոմոնի մալը: Եւ մի փոքր էլ աջ ու ձախ խօսելուց յետով՝ վսկալով դուրս եկան:

Տէրտէրակինը մնաց մէնակ: Կարիքն ու չքաւորութիւնը նրան ստիպում էին գիշեր—ցերեկ աշխատելու: Երբեմն թէև նա էր առաջին տեղը բռնում կանանց մէջ ու իր փառքովն ու պատվովը պարծենում, բայց ալդ ամենը հանգուցեալ տէրտէրը իր հետ գերեզման տարաւ՝ թողնելով իր տան համար մի յոյս—Արամին:

Տէրտէրակինը բուրդ էր մանում, մանած անում, ոստեր շարում, կծիկ կազմում ու տիրոջը յանձնում: Այս էր նրա այժմեան պարապմունքը: Բուրդն էլ իրանը չէր, նա հարեւաններիցն էր ստանում, գրվանքէն տասը կոպէկով մանում ու մանածը կշռի թաթին դարսում: Ստացած փողը տէրտէրակինը չէր շռայլում. նրանով Արամի համար շորեր ու գրքեր էր գնում և տան միւս պակասութիւնները հոգում: Այսպէս էր ծխում նա իր մարդի օջաղը՝ յոյս դնելով 14-տարեկան Արամի վրա, որ մի օր մեծ մարդ պէտք է դառնար, հօր տեղը ժառանգէր...

Ամբողջ օրը չոր կապերտի վրա նստած, գլուխը կախ քցած, աչքերը պժոտելով, կամաց դունդունալով, նա պտտեց ճախարակը՝ մանեց, մանեց և մէկել յանկարծ գլուխը բարձրացնելով, տեսաւ որ արևի շողքը երդկիցը դուրս է թռել—հաւթառոցն է:

Ճախարակի դռուոցը, լիսեռի վզզոցը, իլիկի բռուոցը և մշմեղած օջաղի առջև կկած կատուի մոմուոցը միախառնվելով՝ կատարեալ համերգ էին կազմում խռովեալ տան մէջ: Մի աչքը շէմքին, մինը դործին ուղղած,

տէրտէրակինը սպասեց, սպասեց՝ տեսաւ որ դուռը բաց անող չը կալ, Արամն էլ չ'եկաւ: Նա մնաց մտատանջութեան մէջ՝ կասկածելով թէ դուցէ իր որդին էլ է կորել և կամ ստնակա խուկ պատիժն է ստացել: Այս ժմբութեան մէջ տան համերգը նրան յիշեցրեց իր մեղեգին. նա օջաղի կրակափալտերը շարժեց, քինթ-քնթի գրեց, լոյս ուղեց ու սկսեց—

Օրս սեւ ա, շորս սեւ ա,  
Միտքս խաւար՝ սկրտս սե ա.  
Ես աշխարհում անտէր եմ ես,  
Սստօծ, ինձ խի՞ թողիր էսպէս...  
Աչքիս լոյսը թռաւ, խաւըեց,  
Չունքի բաղդը զլխիս խփեց.  
Վաղուց ա՛ որ լիզուս սեւ ա,  
Տունս սեւ ա, կեանքս սե ա...  
Ամա սե չի, սե չի օրըս,  
Շատ շատ ապրի իմ Արամըս.  
Սստօծ, քեզ եմ կանչում սրտով,  
Պահիր որդուս լոյս արևով....

Դուռը նուճոաց: Տան համերգը ընդհատուեց: Բը-նազդումը կատուին ստիլեց շէմքի կողմը պուրշկել և աղիողորմ մլաւոցով հասկացնել մտնողին իր քաղցածութիւնը: Մալըն աշխատեց լացաչքը ծածկել: Մտնողն իր ձեռքի գրքերը մի կողմ շպտուելով՝ բացականչեց.

«Վայ... նանի ջան... մեռա...»

— Ի՞նչ ա, Արամ ջան, գոռաց նանը տեղիցը վեր թռչելով: Արամը վէր ընկաւ նրա տեղը՝ կապերտի վրա:  
«Վայ... կողքելը ս...»

Նանն ընկաւ Արամի վրա, համբուրեց նրա ճակա-

տը, ձեռք քսեց երեսին. ապա մեղբամոմի պէս հալուած, Արամի թաթը ծոցը գնելով խօսեց.

«Ի՞նչ ա, քեզ մատադ, ի՞նչդ ա ցաւում:»

— Ամեն տեղու էլ ցաւում ա: Արամը հեկեկանքի մէջ խեղալումէր...

«Որդի ջան, Աստօծ ջան, ախր Բնչ ա էլել: Ի՞նչ անեմ, չար աչքը տրաքի. քեզ ով աչքով տուեց, իմ բալա...»

— Վարժապետը... նա... ասում էր... դուք էն փախողներին խի չի գտաք...:

Մայրը կըակին բզեց՝ որ լոլս տայ ու տեսնի Արամի պատկերը: Նրա երեսի քնքշիկ մորթը կալած էր սոկորից, գեղնած, աշեքը կուլ գնացած. կալտառութեան նշան չը կար, քիթը արիւնով լերդակալած, մազերը էնճճուած, շորերի փէշերքն արիւն-շաղախ... Հեկեկանքը հետզհետէ սաստկանում էր, շնչառապառում Արամին: Այս ամենը մարքը մի քանի ակնթարթում նկատելով, քիչ մնաց ուշաթափուէր.

«Արամ, Արամ ջան. էդ Բնչ ա քու հալը... Ասա, բալաս, ես մեռայ... Ո՞վ արեց, խի արեց...»

Արամն սթափուեց կոկծաչոր մօր խօսքերից:

«Ի՞նչ ես լաց ըլուամ. թամամ մի սհամֆ վարժապետը ինձ ու Արտէմին թակեց, սպանեց...»

— Ինչով, բայս ջան:

«Զիրխի կոժնվ, էն ճիպոտներնվ, քացնվ, ոտնատակ տալնվ, ականջնիս ու մազերնիս քաշելնվ, սպանիլնվ...»

— Բան չը կայ, բայս ջան, ծեծը շնորհը ա:

«Վայ... անտէր ըլլի... մէջքս կապիտ փիցէին ա...»

Մայրը փոքը ինչ սրտապնդուեց, որ վարժապետի արարմունքն է: Բայց Արամի կսկիծն ու միսկոտոցը նո-

րէն խառնեցին նրա սրտի կրակը: Այս առաջին անգամ չըր, որ Արամը լալով ու լալաչքով տուն էր եկել ուսումնաբանիցը ու գանգտառուել, որն անցել էր՝ երեխայական խաղի պէս: Բայց այս անգամ Արամն ու Արտէմը շատ էին ծեծուել, փախչող երեխանցը անտառում չը գտնելու և ուշանալու պատճառով:

«Նանի՛, լալաչքով կմկմաց Արամը, մեռնում եմ, օգնի է՛...»

— Որդի, Ինչ անեմ, ճրագ էլ չը կայ՝ թէ վառեմ... Ա՛յ, Աստօծ, գարգահող ուր ա...»

Վերջին խոռքը գեռ չ'աւարտած, երբ մալը ու որդի կըար գրկած կոկծում էին մինի մէջ, Քիքունց Մարտիրոսը ներս մտաւ ու «բարի երեկոյ» տաելու տեղ՝ գոռաց.

«Աքի՛, Արամը ոնց ա, ոնց. Արտէմիս պէս ա, թէ բարաթէ:»

— Ազբէր, ջանս գողում ա: Ճրագ չը կայ՝ որ տեսնեմ, իմանամ:

Մարտիրոսը գուրս վազեց և իսկոյն մի վառ ճրագ ձեռքին ներս մտաւ: Արամի շորերը հանեցին: Ել առողջ տեղ չը կար. բոլոր ջանը ճիպոտ-ճիպոտ կոտտած էր: Երբոր մտրը ջուխտ ձեռքով գլխին զարկեց, երբոր Մարտիրոսն էլ էր սրտնեղութիւնը արտայալաց, Արամի սիրուը տեղի փուլ եկաւ. «Ճար արէք, ցաւում ա...»

— Բան չը կայ, Արամ ջան, մեր Արտէմն էլ քուօրին ա՝ ջանը կապտած, արագ քսեցի, մըմնջոցը կըտրեց ու քնեց. գու էլ հմի լաւ կ'ըլես:»

Այս գուրգուրանքից յետոյ Արամի ծեծուած տեղերն արագ քսեցին ու շփեցին բոլոր ջանը. Նրա արիւ-

նոտ քիթն ու պռունգն էլ լուացան, մաքրեցին։ Այնուհետև հիւանդին ալարկեցրին գձուձ տեղաշորի մէջ և նա տնքում էր։

Մարտիրոսը յորդոր խօսելուց յետոյ ուզեց դուրս գնալ։

«Աղբէր ջան, մի քիչ էլ կաց»—ասաց տէրտէրակինը՝ որդու գլխին կութնած։

— Աքի՞ր ջան, բան չը կայ, լաւ կ'ըլի։ Մեր Արտէմին էլ ա էդ օրին. հարսդ մէնակ վախում էր, գնամ։ — «Բարի գիշեր» ասաց ու դուրս գնաց։

«Զան, Արամ ջան» որդու տնքոցը միախակ լսելով, մըմնջաց նա. «Էն անիրաւը բա խզմտանք չունէր. ոնց զիմիշ արեց քեզ, կուռը ոնց զօրաց քեզ վրա. բա նազիտում չի, որ իմ ճարը դու ես։ Կարմիր օրս սև արած՝ նստել եմ քու ուժուղին. քեզ էլ որ մի բան պատահի (իմ մտքինը սարին ու քոլին ընկնի), էն վախուը ես ինչ կանեմ։ Նաշխնւն բալա, տնքալ մի՛, քեզ էլ ուսումնարան չեմ դարկիլ, մինչև լաւ չը լսւանաս։ Ախր դու մեծ մարդ պէտք ա գառնաս, էս հանգած օջաղը ծխես, հօրդ թողած գրքերն ու գաւթարները բաց անես, կարգնաս...»

Արամն զգաց մօր քաղցր համբոյլմերը։ Սակայն՝ նա տնքում էր. նրա երևակայութեան մէջ գեռ խաղում էր վարժապետի զժնդակ պատկերը, ձեռքին ճիպոտ բռնած և որպէս թէ գեռ իրեն ծեծում, ոտնահարում էր... Ահարեկուած Արամը յանկարծ ծկլթում էր՝ ընդմիջելով տնքոցը. «Էլ չեմ անի, քեզ մատաղ, մեղս Աստծու»—ասելով։ Մայը խաչակնքում էր նրա վրա՝ կարծելով թէ Արամը չարերից կոխվում է և ասում էր. «Ես եմ, քեզ մատաղ, ես եմ. դու քի՞...»

Առաւոտեան Մարտիրոսը դալլաք 0վագիմի հետ տուն մտաւ ու Արամի ձեւից արիւն առան՝ երակը կտրելով, որ ջարդուած արիւնը դուրս դար, առողջանար։ Արտէմի, Մարտիրոսի որդու, մէջքիցն էլ դալլաքը կոտոշ էր կայցը ել ու արիւն դուրս քաշել, դարձեալ նոյն նպատակով։ Բայց թէ մինը և թէ միւսը գձուձ անկողնուցը չ'ազատուեցին. նրանց աչքերից քունը փախաւ, ցաւը ծանրացաւ. մոլլա ու զբբաց, խաչեր ու սրբեր, մոմ ու մատաղներ՝ անիրաւ գարձան, օգնական չեղան...»

«Հէջ, փան մը չ'կայ. էրիսէին մնացէք. եսիկ թըլլիսմանով ու զըին զօրութիւնով կ'ազատիմ...»

## Ժա՛ռ.

Ն Շ Ա Ն Ա Դ Ր Ո Ւ Ի Թ Ի Ւ Ն

Մենք թնդնենք հիւանդներին, թնդնենք ուսումնարանի շրջանից փախչող երեխաներին, թնդնենք, «Ո՞նչ ազգականները նրանց հոգակինները նախաց պահեն, գանք հրապարակին։

«Գէղին որ մօտենաս, առաջ երեխիցը խաբար առ։» Ի՞նչ մաքով, ինչի՞ համար էլ այս ասած է, այդ էլ թողնենք, չը բացարենք, քանի որ իմաստը աստղի պէս փայլում է։ Մեզ այդ առածքը հարկաւորվեց նախասել, ըստ որում՝ վարժապետի նշանադրութեան մա-

սին յալտարարեցին փախչող ու կորչող երեխաները \* այն միջոցին, երբ անտառում իրար հետ խօսում էին: Եւ ահա նրանց իմացածը, հարսի խարար տուածը, կանանց խօսեցածը չեն ստվում:

Ազբաւորները՝ որ միրզանց Օսէփի աղջկանը մի մատը մեղք էին շինել, սրա ու նրա բերանին քում, նրան նշանում ու պսակում, ահա, ասում եմ, չէ սրտ-փում:

Այս լուրը սկզբում շինծու էր: Հարսներից մէկն էր մօգնել ու, որպէս լուր, հաղորդել սրան ու նրան, ապա լոնդհանքացաւ, մօգնողը մէջ տեղը կորաւ և ձայնը հասնելով Օսէփի կնոջը—Մագթաղին, նա էլ վարժապետին մօտ-մօտ արեց, իր մարդին—Օսէփին համոցեց ու բանը գլուխ եկաւ: Օտար երկրում գործողը եթէ մի սրտակից բարեկամ չունենալ, շատ փորձանքների կարող է հանդիպել. այս խորհուրդը զգալի էր վարժապետին, որն իրեն ձեռնատու էր համարում Օսէփի պէս բարեկամ ունենալը և նրան որդի կոչելը: Ուրիշներին էլ միտք ունեին վարժապետին երբ և իցէ իրինց փէսալ շինել... բայց բաղթանակը մինը տարաւ: Փեսայ—որքան քաղցր խօսք է, այն էլ վարժապետի պէս մէկին անուանելը:

Նշանադրութեան պալմանը բերանացի խօսուած ու վերջացած էր հէնց այն օրը, երբ ուսումնարանը տեղափոխին գոմը. իսկ հանդէսը մարդամիջով կատարուեց,

\* ) Երկու օրից յետոյ նրանք գտնուեցին Ազբուլաղում որոնք ուսում ընտանիքների մէջ նօք եար էին մտել՝ իւրաքանչեւրը տարեկան քսան մանէթով: Ծնողները նրանց հանեցին այնտեղից և ուղարկեցին իրանց տաւարը պահելու:

նշանն օրհնուեց և երկու բարեկամութեան կապը հաստատուեց այն օրը, երբ երեք աշակերտներ անտառում էին: Եւ ահա նրանց իմացածը, հարսի խարար տուածը, կանանց խօսեցածը չեն ստվում:

Զմբան թեթև ուրախութիւններն սկսուել էին: Միլքանց Օսէփը իր անունին վայել պատրաստութիւնները տեսել, պղծել և հէնց եղեկոյեան մի ուրիշի հարսանիք խափանելով, իր աղջկայ նշանադրութեան հանդէսն էր մէջ քցել ու գիւղի իշխաններին տուն արել. Հանդիսականների մէջ լուսութիւնը իշխում էր. ամենքն էլ սպասում էին խնամ խօս առուած զրոյցի սկսվելուն և վերջացնելուն: Այս կէտում աղջկատէրն ու տղատէրը պէտք է խօսէին. բայց տղատէր չը կար: Որովհետեւ վարժապետը տէր-Ղուկասին հալը էր բռնել, ուստի Օսէփն ու տէրտէրը սկսեցին—

«Ա խնամի ջան, եկել եմ, եկել:»

— Ո՞ւր ես եկել:

«Աղջիկդ ուզեմ:»

— Աղջիկ չունեմ:

«Ես տեսել եմ:»

— Ո՞րտեղ ես տեսել:

«Խան-բաղումը:»

— Մօտին ի՞նչ կար:

«Սէլով սեղան, ոսով ոչխար:»

— Ձեռին ի՞նչ կար:

«Վարդի փունջ կար:»

— Հազին ի՞նչ կար:

«Խան ու զումաշ:»

— Խ՞նչ էր անում։  
«Տաղ էր ասում։»  
— Ի՞նչ էր ասում։  
«Բաղումս խաղող,  
«Խաղողը քաղող,  
«Եարս ո՞լտեղ ա։»  
«Ես էր ասում։»  
— Տղեգ ո՞վ ա։  
«Ոսկի գանձ ա....»

Ամենքն էլ միաբերան գոռացին. «Ոսկի գանձ ա....» Այս վկայութիւնը տալուց յետոյ՝ տէրտէրը մի մատանի դրեց Օսէփի մատօ՝ փոխանակ աղջկայ, ապա օրհնութեան աղօժքը վերջացնելով, ամենքն էլ նորէն ձայն հանեցին. «Աստօծ շնչաւոր անի՞...» Սուվըէն փոեցին ու մօտ բերին գինի, օղի, հաց...

Տունը դրմբում էր ձայներից. օրհնանք էր՝ որ ժափում էին փեսացուի ու հարսնացուի գլխին։

«Որդիկ, ասաց տէրտէրը, Աստօծ սաղ պահի փէտացուին ու իր, վարդի նման, աննման հարսնացուին. մի բարձի ծերանան, առջնէլը տղայ ըլի. տան դուռը բաց՝ արևել շողքը միջին ըլի. ծլեն, ծաղկեն, ճռոռնաքեն, ճղքճղքնոտեն, ճռճռոտեն—դառնան մի մի ասլաններ՝ մենք էլ նրանց թեկ տակին....»

Սեղանաւորները գոռացին. ամէն... Վարժապետը՝ որ օրական թագաւորի պէս թախտին բազմել ու խորհրդաւոր դիրք էր ըսնել և անդադար չիր ուխն էր փստացնում, շնորհակալութիւն էր յալտնում գլխի շարժումով։

Ալդ տաք միջոցին Միրզանց Օսէփը գինով լի բա-

ժակը ձեռքն առաւ և իր անբաւ գոհունակութիւնը յայտնելուց յետոյ՝ սկսեց լորդորականը—

«Ս. խալիսը, ամենքդ էլ գիտէք, որ վարժապետը զարիք մարդ ա—չոր քարին կրակ արած, մեզ բութաքոնած։ Հմիկանց եղեւ սա իմ տղէն ա։ Փեսա—տղա, դիմ մին ա։ Ես իմ ուղղուր սրտովը դրան բաշխում եմ մեր ներքի բազատեղը՝ բաղ քցելու համար, կալատեղայ դուզը՝ կալ շինելու համար, մէկ լուծ եղը՝ բանացնել տալու համար, չալո կովը՝ կթելու համար։ Էս բաժինքից դուրս ա, իմացէք...\*)

— Աստուած օրհնեցէ, վրաբերեց տէրտէրը, որին հետևեց բաղմութեան կողմից խօսքս—«Չեն ու շեն կենա...»

«Տէրտէր ջան, մէջ ընկաւ երկրորդը՝ գինով լի բաժակը ձեռքին, մեր վարժապետն ա, մեր երեխանցը մարդ ա շինում, ուզում ա տուն ու տեղ դառնալ էս գէղումը։ Ես էլ դրան բաշխում եմ մի տան տեղ, որ տուն շինի, միջին նստի, մեզ համար աշխատի...»

— Օրհնեալ լինիս...

«Տէրտէր ջան, օխնեալ ի տէր։»

— Աստուած օրհնեցէ։

«Ես էլ մեր վարժապետ աղբօրը բաշխում եմ տան

\*) Հայաստանի գիւղերում սովորութիւն կայ, որ երբ մէկի տաւարն ազար է ընկնում կոտորվում։ ամենքն էլ իրենց կարողութեան չափ, նրան օգնում են՝ կրկն հարըստացնելու մարզով՝ ո՛րը էրինջ, ո՛րը արջառ, ո՛րը գոմշաձագ և այլն բաշխելով։ Նրանի՛թէ այս սովորութիւնը ունենային և քաղաքացիները... Գիւղացիները որբ ընտանիքից հարկ ու բէդառ չեն պահանջում։

փետը, քարը, տախտակը, միայն թէ մեր երեխանցը  
վրա կենայ:

«Նատ ազրեն երեխըքը...»

«Ես էլ մէկ էրինջ բաշխեցի, տէրտէր, որ չալօ  
կովին ընկեր գառնալ, վարժապետի տղէն կաթնափու-  
փով մեծանայ...»

«Որհնուե՞ քու ծնունդը...»

«Ես էլ վարժապետի արե—սադաղալ իրեք ծնի  
ոչխար տուի, որ դամազլուզ գառնալ...»

Եւ այսպէս, ամեն մէկը մի մի բան նուիրեց. նպա-  
տակը յայտնի է: Վարժապետը զլուխը կախ քցած՝ մա-  
տիտով գրում էր ազգանուններն ու խոստմունքները,  
որ հետեւ օրից սկսէր ժողովել տալ: Հենց որ կան չը  
պոծան, վարժապետին հարստացըին սրտաբուզին նուէր-  
ներով, սրամիտներից մէկը նկատեց տէր հօրը.

«Տէրտէր ջան, բա դու ի՞նչ ես տալիս:»

Մինչեւ տէրտէրի պատասխանելը՝ Յսէփը վերաբերեց.  
«Տէրտէրը մի անդին քար ա տալիս, որ ոչ կը հատ-  
նի, ոչ էլ կը պակսի:»

Որդիկ, խօսեց տէրտէրը՝ ծոցիցը մի թուղթ հա-  
նելով, ես էլ իմ տուրքն եմ տալիս. ձերը՝ մարմնաւոր,  
իմը՝ հոգեւոր: Քանի կենդանի եմ, ես իմ յօժար կամօքս  
զլում եմ մեր հոգեւոր էշխանութեանը՝ որ մեր վարժա-  
պետին տէրտէր շինեն ու ինձ օգնական տան:  
Կապէսով սրա ոտք մենք աւելի կը կապենք էս զեղի  
հետ: Այսուհետև սա կըլի համ հալր, համ վարժապետ  
միշտ հանապազ: Ես թուղթը վարժապետն ինքն ա  
գրել, կարգում եմ, իմացէք ու խնդրեմ դուք էլ ձեռք  
գնէք, որ ասածո հշմարտամայ:

Անսպասելի խօսքից յետոյ լոռութիւնը տիրեց. տէր-  
ուելը կարդաց.

«Հոգէվոր, կոնսիստօրն Տիխեաց,

Ի հասարակութեանէ Շամշուլդայ  
Լալով խնդիր

Դերացեալ է մերն քահանալ գամի, առնել զիրն  
օգնագան զմեր, վարժաբէդն նորընձալ. վասն զի երկու-  
քին գարեն, հոգէր, զմեր ժողովուրդս զամէնէսէան: և  
որէնէսցէն զձէզ, և զմեզ, ազօթեցէն առ աստուած  
և վարժաբէդն է հմուտ ընթերցանէլ, զաւէտարանս քը-  
րիստոսի և, սազմօս Դաւթի և նարէկ և զամէնայն զօր,  
ինչ հրամեցերն և ստորագրեմք:»

— Նատ լաւա, զովեցին ամեն կոզմից և հաւանութիւն  
տուին: Նախ տէրտէրը ստորագրեց բոլորի առաջ, ապա  
երկու զրագէտներ նեղութիւն կրեցին բոլորի ազգանունը  
ստորագրել:

Դուք, ընթերցող, գիտէք որ վարժապետը իր գի-  
տութեամբ զերադառմ էր ամենքից. եթէ նա այդպէս  
էր իր համար խնդիր զրում, հալու միւս զրագէտները  
ի՞նչպէս կը զրէին: Քսան տարի չէ անցել այն  
ժամանակից, երբ մարդիկ գիտէին սերտ կարդալ,  
զրել—ամենեւին, բացի վանականներից, որոնք զրում  
էին խրթին և անիմաստ բովանդակութեամբ: Դեռ մեր  
ժամանակումն էլ կան տիրացուներ, որոնք ժամանու-  
ցաւթիւնը ծալրէ ի ծալր անգիր գիտեն, կարդալ ու  
գրել չը գիտեն:

«Ձեզ մատազ, ամեն բան պոծանք, խաղ ասէք:  
Տնաշշն, հարսանիք ա, նշանդրէք խօ չէ, կերէք, խը-  
մեցէք:» Այսպէս խօսեց Յսէփը, երբոր տէրտէրը ստորա-  
գրականը վերջացրեց, ծալեց ու ծոցը գրեց:

Գալուստանց Վիտիսը մէկ մուխամբաս սկսեց՝ լորդորներից խրախուսված.

— Սարեր, ձորեր ես մանեկալ՝ քեզ պէս խանում  
հէջ չը տեսալ.

Գէղեր, շէներ ես անց կացալ քեզ պէս խաթուն  
էլ չը տեսալ,  
Կարմիր ըռանգ, նաշխուն աչքեր, լուսին սլատկեր—  
Նիմշատ բոյը՝ որ դու ունես, քեզ պէս մարջան էլ չը-  
տեսալ...

«Ապրես, ապրես, Վիտիս, մի դրա վերջի տունն  
ասա, վերջի... խնդրեց Սահակ տպերը։ Երգիչն սկսեց—  
— Աչքդ քցի դու ինձ վրա էս ճակատիս աստղը  
մի տես,

Գէ ճպճպա, դէ ճըճը, էս իմ ջիւան ջանը դու տես,  
Թէ հալալ եմ, արդար սրտով, մաքուր խղճով—  
Ախ, էդ վախտը աչքս բլաւ՝ չունքի ուահմդ շատ  
չը տեսալ...

Ամեն կողմից բացականչութիւններ.

«Ուստա՛ Ասհրի, դու էլ մի դաստանա ասա,  
ասաց Օսէփը. քու դաստանին գոված ա:» Ասհրին մի  
առաջարկի էր սպասում. մի քանի անգամ հազար ու  
ձայնը վեր քաշեց—

Ազալ դնստ, եազար դնստ,  
Փէջամբար.....

«Տօ ի՞նչ ես ասում, ընդհատեց տէրտէրը, հայե-  
րէնը գլխիցդ կտրվել ա, որ թուրքի պոչիցը կպար. հայ  
ես, հայերէն ասա, էլի...»

— Շատ լաւ, տէրտէր ջան, էլ ի՞ն ես բարկանում:  
Գէ լսեցէք, զրոջ պէտք ա ասեմ:

— Սկիզբն Աստօծ նստեց աթոռին,  
Բանն առաւ ձեռը՝ փչեց մեր երկրին.  
Մալրը շունչ առաւ՝ կենդանիք ծնեց,  
Երկիրը Ադամալ դրախտին նմանեց...

Երկինքը տեսաւ փուչ երկրի փառքը,  
Ուռաւ, տրաքեց, հանեց էս շարքը.  
«Կրակ ու կէծակ կը թափեմ վրէդ,  
Կ'ընկնես անգունդը, ի՞նչ կ'ըլի չարէդ:»

Երկիրը իսօսեց. «Ճառեր ծաղիկներ,  
Իմ կարմիր վարդեր զարդիդ հաւասար.  
Ես ունեմ սարեր ու մեծ-մեծ ջրեր,  
Ասա, ի՞նչ ունես դու սրանց մագեար...»

— Գէ ձէնդ կտրի, գոռաց երկինքը,  
Ուրացածը, ընկած սատանի գիրկը.  
Ես եմ Աստծու անմահ գարգեահը,  
Քու գարդակ մարմնի հոգէառ մահը...»

Մահից վախեցան խախուտ մարդիկը,  
Երեսը դարձրին դէպի երկինքը.  
«Մեղմ քեզ» ասին, իմացան կարգը,  
Մաքրուեց, սրբուեց մեր վարքը...»

Ասհրու խազը ժողովրդի տրամադրութիւնը փոխեց.  
ամենքն էլ մեղս եկան. տէրտէրը աւելորդ համարեց եր-  
կար նստել ու ձայն հանեց.

«Ուստա՛ Գրիգոր, սամի՛...»

— Զէ, տէրտէր ջան, ծամի՛... Այս կլնշանակէր՝ գեռ-  
ուզում են ուտել-խմել, գեռ չեն կշտացել:

«Տնաշէն, փոր ա, խօ հնը չի, ասաց տէրտէրը,

գէ որ էդինց ա, որդիկ, թողէք վարժապետը մի տաղ  
ասի, մինչև որ սամին թան ծանելուց ընկնի:»

Ամենքն էլ հաւանութիւն տուին: Վարժապետը  
լուռ ու մունջ նստած՝ անդադար ծխում էր, երգելու  
աշխոյժ չունէր: Նա իր դիրքն աւելի բարձր էր պահում.  
Եթէ նա տեղայի լինէր, ի հարկէ, իւրաւունք չունէր  
ներկայ գտնուելու իր նշանագրութեան հանդիսին. ալդ  
ծնողի կամ մեծ եղբօր գործն էր: Վերջապէս՝ նա զուզեց  
խնդրողների պիտը կոտրել: Ղազարը, նրա աշակերտը,  
դիմացի սիւնի տակին կանգնած, ձեռքերը գոշին դրած,  
լուռ ու մունջ սպասում էր և վարժապետի երեսին  
մերթ նայում, մերթ ժպտում էր—իմանալով որ նա այ-  
ժը մասն է, էլ էնքան չի ծեծիլ: «Զօ, Ղազար,  
քեզի կըսեմ, եկ քովս, ձեն պահէ. ես կուզեմ երգ մ’  
երգել, դուն ալ սովորի:» Վարժապետը հրամայեց ու ձայ-  
նը զլեց—

Ուրախալի՛ և ցնծալի՛,  
Բոլոր նստեալ Թս սեղանի՛,  
Տօն ախմբեմք մեք զարժանի՛,  
Տա վալելի մեզ պանծալի՛...»

Վերջին ուրախ բացականչին ադադաղն էլ երգեց և  
իմաց արեց ալդ պարոններին, որ ժամանակ է արդէն  
ննջելու:

### ԺԷ

ԽՕՍՔԻ ՏԵՂ ԳՈՐԾ. ՔՈՑՐ ՈՒ ԵՂԲԱՑՐ ՄԻԱՅԻՆ.  
ՍԻՐՈՅ ՈՒԺ

Լուսացաւ: Եղանակը պարզ էր: Հիւսիսից թեթև  
քամի էր փչում: Ցըտին գիմանող, եփնջում փաթա-  
թուած մի քանի երիտասարդներ գիւղամիջից դէպի

գոմ—ուսումնարանն էին նայում: Նրանց ուշքը զրաւել  
էր վարժապետը, որը չիւսուխը փստայնելով իսկոյն ան-  
ցաւ նրանց մօտից: Նա բոլորովին փոխուած էր երեսում:  
Խեղճը անցնելիս գլուխը բարձր ու քաշ էր անում, մին  
ձախ, մին աջ խլշուում: Նա ալժմ աւելի համարձակ  
ու վստահ էր թվում տեսնողներին:

— Խի չը պէտք ա ուրախ ըլի: Նա հազար տղի  
աչքի թերթերունքը խուզեց, հազարի աչքն էլ հանեց,  
Սոէփի աղջկայ վրա նշանուեց: Էս երկու օրից եղն էլ  
աչքած լվ իւստ անելով կը պսակուի: Սոէփին ինչ ունի.  
մի տղալ, մի աղջիկ: Խնքը անհուն ցեցի տէր ա, կէսը  
տղինն ա՝ կէսը աղջկանը: Մրան էլ ինչ խօսք: Հիմի-  
կանց եղեւ վարժապետը պէտք ա կարողութեան միջին  
լվլվալ, թէզ էլ տէրտէր կը դառնալ, ում մարդատեղ  
կը դնի: Մի տեղ որ քոխվէն ու մովրովը տէրտէրի ոտն  
ըլեն, մեզ նման մարդը պճեղն էլ չի ըլի: Հիմի քեզ  
եմ ասում, բա էս բաղդի միջի մարդը ինքն իրան չի  
խօսալ, մռմռալ... էլ ով կարալ նրան ասի՝ աչքիդ վե-  
րուը սև ունք կալ...

«Սալի՛ ջան, բա հիմի նա էս գեղըցի ա. որ պսա-  
կուի՛ կնիկը իրանց երկիրը չը պէտք ա տանի՛. բա դրան  
հէրն ու մէր, քիր ու աղբէր չի՛ ունենալ:»

— Դա իրանց երկիրից փախած ա երեսում, վրա-  
բերեց մէկը:

— Լաւ մարդը իր հօր օրհնած օջաղը կը թողնի,  
չոլէչոլ կընկնի՛-ասաց միւսը:

— Խելքս չի կտրում, թէ դա էլ իրանց երկիրը գը-  
նալ, խօսեց Սալին: Ալ ոնց: Մրանից մէկ շաբաթ ա-  
ռաջ, կիրակի իրիկնալահին վարժապետը մեր օդումն  
էր: Ուրիշ մարդիկ էլ կալին էնտեղ: Ես էլ պուճախումը

նստել, լսում էի նրան:—Ասումէլ՝ մեր երկիրը էս երկրի նման չի: Վորթ ա, ընդեղ ամեն բան բոլ ա, ամեն բարութէնով լիքը, ամա ինչ անես՝ որ չորս կողմդ թուրքեր են. թուրքերն ու քուրդերը կ'ասես խօսք ըլեն կապած իրար հետ, որ հայերին ամեն վախտ էլ լացացնեն: Եդ անիրաւները, ասում էր, մի անմեղ բան մահանայ են անում ու խեղճ հայերիցը շտրափներ խլում, նրանց ունեցած ապրանքը տանում, տաւարն ու ոչխարը քըռում...

«Բա ընտեղ դատաստան չկայ, խօսքը կտրեց մինը:

—Ո՞նց չկայ: Ամեն տեղ էլ դատաստան կայ: Ամա մի մարդ որ դատաստանի ճամբէն չը գիտենայ, ով առես՝ որ նրան սուտ չը հանի: Ընդեղ խօ հային սուտ դուրս բերելը, ասում էր, Հաղ ու պար ա: Քեասիր մարդը մին, էրկու, իրեք տալիս ա ու չի ուզում քոյթիցն աւելի մեծ մարդ տեսնի: Մեծութիւնը խօ մարդի բոյին ու բուսաթը չի, նրա խղճմտանքն ու բարի հոգին ա: Երնակ էն մարդին՝ որ քեասիրութեան ծովումը լող տալով, խեղճ օրեր տանելով ա հարստացել, չինովնիկ ու աղա դ առել. նրա ուահմը շատ կ'ըլի քեասիրի համար: Ամա ամեն հարուստ, ամեն աղա խօ մի զայդի չեն. մինը իրա ճակատի հալալ քրտինքովն ա մարդ դառել, մէկէլը՝ միամիտներին խաբելով, մէկսէլը հօր ան պապական օջաղի անունով: Նա՝ որ իր կ եանքումը ոչ քեասիր ա ըլել, ոչ պարտքակոխ, ինչ կ'իմանայ անճար քեասիրի դարդը. դարդը չի դիտալ՝ դարմանն՝ էլ չի տալ: Ես զայդի անխղճմտանք մարդիկ ամեն տեղ էլ կան մեղանից էլ հարիրը—հազարը: Վարժապետը տեսել ա, որ գրանց միջին ապրիլը դժոխքի կալրակարասի նման ա, թողել ա իրանց իրկիրն ու սարէսար ընկել, գլուխը

հազար քարի տալով գտել մեր գեղը: Հիմի գա էս գեղիցն էլ ուր կը գնայ, փշով էլ որ թակես: Ի՞նչ տեսել չի՝ էստեղ տեսնում ա, ինչ կերել չի՝ էստեղ ուտում ա, ինչ հազել չի՝ ըստեղ հազնում ա. ով ա էսքան պատուի մէջ, ձեզ եմ հարցնում:

—Ոչ ով, կմկմաց մի ուրիշը. թող մեր ոտները ջուր անի՝ խմի, որ մենք դրան պահեցինք մեր գեղումը:

«Աղբէր շարունակեց Սալին, մեր ոտը խի ջուր անի՝ խմի. պէտքական մարդին ով չի պահիլ. ասենք՝ մենք չը պահէինք, մի ուրիշը խօ կը պահէր: Վայ էն մարդին, էն օղուշաղին, որ ոչ գիր գիտի, ոչ փէշակ, ու էն քուրդերի երկրիցը մեր կողմը գալով՝ բանի պէտքը չեն գալիս, գոնէ գուռն են ընկնում, աղքատութիւն անում: Ամա սրանք էլի բաղդաւոր են, շունչ են պահում: Հազար վայ նրանց, որ քրդի որի ու թրի տակիցը չեն կտրում ազատուիլ, անհաջորդ են ըլում... Էսպէս զարիքներին որ մենք չը պահենք, բա Աստուած մեր գլխին քարով չի տալ: Տղէրք, ձեզ մատադ, դուք ջնէլ էք, ձեր պապական ճամբիցը դուրս չը գաք. ուահմ ու խղճմտանք շատ ունեցէք...» Այս խօսքից յետոյ Սալին գլխաքարը հեռացաւ. կանգնողները դեռ շարունակեցին վայր ի վերոյ խօսել, ասել, ծիծաղել. նրանց համար ոչխարը սարն անց էր կենում:

Կարճիկ Վարդանը որ միայն լսում էր խօսողներին, տեսաւ որ անօգուտ բաների վրալ շատ խօսելով գուր ժամանակ են կորցնում, տեսաւ որ թուրքի անունը տալով ոչ իրա փորը կը կշտանալ և ոչ էլ ու գող աղքատի պարզած ձեռքը կը լցուի, բարկացած խօսեց.

«Ա՛ տղէրք, ձեր բանն ու գործը թողել, և կոաչաչի էք տալի: Բա չէք գիտում, որ լաւ մարդը հայի

մէջ էլ կալ, թուրքի մէջ էլ։ Հինգ մատս բարեքար ե՞ն,  
թէ մինը կարճ ա՞ մինը երկար։ Ով որ ըդէնց իրան  
ըանը կը ժողովի, սրան ու նրան կը բամբասի, թուրքի  
ու քուրդի վրայ կը խօսի, նա ատելական չի։ Առաջ ձեր  
պատռած փէշին կրկատան ճարեցէք, եղնա թուրքին  
բամբասեցէք, է՛ Բա չէք լսել, որ ոչխարին իրան ոտիցը  
կախ արին, էծին իրան։ Կանգնել էք ցրտումը, փոլինք-  
ներդ գնում ա, ցուրտ կուլ տալով վարժապետի վրա  
էք խօսում... էս սհաթին քոխին կը կանչեմ, ձեր  
արար մունքը կ'ասեմ, աչքներդ կը հանի։ Գնացէք,  
ձեր գոմի թրիքը քերեցէք, գուրս-տուէք, ձեր տաւարին  
թիմար արէք, թէզ։»

Տղերքը քոխին անունը որ լսեցին՝ սփարթնեցին։  
մէկն ասաց. «Վարդան ապեր, էլ ի՞նչ ես չարանում.  
ով քեզ հուջախ արեց, ալուճուր մարդ ես՝ սիրոդ նեղ  
ա։ Ամա չէ՝ քու խօսքն էլ ա զորի, ուրիշի վրայ խօ-  
սելը լաւ բան չի։ Տղերք, Վարդան պակերը շաքար կե-  
րաւ, գնանք, զուր ենք կանգնել, շատ խօսելուցը օգուտ  
ը կայ։»

Նըանք ցրուեցին։ Վարդանը գեռ չէր լուել. «Աղբէր,  
էս շահեներին սիշտք ա ռնդզի տանք, ռնդզի, որ խել-  
քի գան. գեռ չեն իմանում՝ թէ խաղ ասիլով գոմ քի-  
րելը, շվշագնիլով ձիանունցը թիմար անիլը ինչ լազախ-  
ունի. էս հավէսը որ ունենան՝ մի տչքաճպոց պարապ կը  
կենան» — ասելով ինքն էլ գէպի իրանց գոմը գնաց։

Հէնց այս միջոցին վարժապետն էլ ուսումնարանի  
սոխախկումը կանգնել, չէր ուզում ներս մտնի, ասես  
թէ մի բան կանչում էր նըան. «Նշան օրհնութիւնս

ալ կատարուեց ու բաղդը ինձի առաջըցուց։ Եսիկ տե-  
սալ մեր երկիր մարդիկ գէշ կապիլին, կու չարչըուին,  
թորգեցի մեր տուն—տեղ, առ Աստուած ապաւինեալ՝  
աստէն ու անդէն շրջեցի, ուզելով ու մըելով ճամփա-  
ելալ, քաղցէն լլկեցալ, ծարաւէն պապակեցալ՝ թէ օր  
մալ եսիկ լսու մարդ կ'եղնիմ... Հիմիկ փառք ըլլալ տի-  
րոջը՝ ոյ աս գեղին արժանցուց, ծարաւս կորաւ, քաղցու-  
յագեցաւ, մէլմալ թէզ կին կ'ունենամ — կեցութիւնու տ-  
ղէկ կ'եղնի։ Առ ժողվեծ ժողովրդին խստցոծ ապանքն  
ու մալը, քահանալ կ'եղնիմ, մանչեր կ'ունենամ. տէ... ան  
ատէն Քրիստոսի ըստծին պէս՝ կեր, արք, անձն իմ և  
ուրախ լեր...»

Նա այս մտածմունքով նալեց զիւղամիջին, տեսաւ  
որ մարդ չի երևում, թորգեց ուսումնարանն ու քալլերը  
գէպի իր անոր տունն ուզեց, ըստ որում՝ ալժմ ուշքի  
կէսն ալնտեղ էր...

Մենք ալժմ վարժապետին ճանապարհին թողնենք,  
գնանք Մարդարատի մօտ։

Սրեր բոլորվել, մէկ չի դարսու բարձրացել էր,  
բայց ձմքան արեւը ի՞նչ զօրութիւն կ'ունենալ։ Տանից  
դուրս եկողը շտապում էր էլ շուտ տուն դառնալու։  
Տաքարիւն երիտասարդները ցրտից չեն վախում։ Ծլծւան  
ազբիւր գնացող կանալքը միախն շատ ցուրտ էին կուլ  
տալիս, ըստ որում՝ կուժ լցնելը նոքաթով էր։ Մագթազն  
էլ առաւօտեան կուժն ուսեց, չուրը գնաց. անտարա-  
կոլս, նա ամենքից շատ կը մնար աղբըումը, իր աղջկալ  
նշանադրութեան մասին աչքալուսէք շատ կը լսէր կա-  
նանցից, հարսներից, աղջիկներից։ Նորա մարդը՝ Յուժփը

Դեռ գինու թմրեցնող ազդեցութիւնից չեր ազատուել,  
տանը հանգիստ խորմփում էր: Հաւերը կրկզալով նորա  
տեղաշորի վրա ման էին գալիս, նա չեր զգում, սթափ-  
վում: Միայն Աազարն ու Մարգարիտը միջի օթախումը  
զարթուն էին. նրանց խօսք ու զրոյցը ոչ ով չեր լսում.

«Մարգարիտ ջան, ասում էր եղբայրը, \*) խի՞ ես ը-  
տէնց. քեզ ով ա բան արել:»

Պատախան չկար:

«Աղջի, բա խի՞ ես լացակումած...»

— Նոր չեմ լացակլինած: Սաղ գիշերս ով ա քնել,  
ում աչքը կպել..

«Որ քեզ նշան դըին, նրա խաթէ՞ր:»

— Բա նոր ես լսում իմ ձէն՞ը. էդ ինչ թաւուր  
ազբէր ես: Գնա, էն կոօին ասա, որ իրան տուած  
նշանը յետ առնի, տանի՞ թէ չեր...

«Թէ չէ՝ ինչ կ'անես:

— Թուկը վեր կ'ունեմ, կը խեղտուեմ, ոնց որ մինն  
ու երկուսը ազատուել, պուծել են:

«Ոնց թէ կը խեղտուես. խի՞... Դու որ խեղտուես՝  
ես էլ՝ գիտե՞ս..»

— Բա ինչ են զոռով էն կոօին տալիս ինձ. պա-  
ռաւել, քաւթառել եմ: Տասնուշինդ տարիս նոր աթա-  
մամում. խի՞ են թիու ծէրին գնում, շպտում: Ես  
խօ մի բուռն ազբ չեմ... գնա, բալա ջան, նանին ասա,  
շան կը գնամ, գէլի կը գնամ, էդ կոօին չեմ գնալ..

«Ոնց ասեմ. վարժապետը կ'իմանալ, աչքս կը հանի:»

— Բա իմ աչքին լիս կը տանի. որ ընկնեմ ճանկը,  
գիտամ, որ կը մնանատի. հը...

«Լաց մի՞ ըլի, աքիր ջան, լաց մի՞ ըլի. ես էլ ու-

\* Դարկէ, Աազարը կակազելով էր խօսում:

սումնարան չեմ գնալ: Ես քու կշտին կը կենամ ու չեմ  
թողնի, որ քեզ նրան տան: Լաց մի՞ ըլի, զագէն:»

— Ախը լացս գալիս ա, ոնց չլաց ըլեմ. հը...

«Աչքերդ սրբի՛, քեզ մատազ, սուս կաց, քու կամքն  
ա, ով կարայ քեզ զոռով մարդի տալ: Նա, գիտան, Մարգա-  
րիտ, էլ մեզանում սաղ տեղ չի թողել, սեացրել, փիցէիս ա  
շինել. հառամ ըլի դրա գիրն էլ, կարդացնիլն էլ. դու  
որ նրան չես ուզում՝ ես սկի չեմ ուզիլ: Դու արխէին  
կաց. ես նանին կ'ասեմ:»

— Ասամ, ազբէր ջան, դու իմ կռանը կաց. դու  
տղայ ես՝ խօսա, ես աղջիկ եմ՝ ամանչում եմ...

Աազարի աչքերիցը արտասուքի կաթիլներ զլոր-  
վեցին: Նա կռացաւ դէպալի նոտած քոլը, համբուրեց  
ճակատիցն ու ասաց.

«Ես քու կռանն եմ, աքիր ջան, վախիլ մի?...»

Քոլը գրկեց փոքրիկին և այնպէս լուռ մնացին՝  
առանց իրար երեսի նայելու:

~~~~~

Մէկ ըովէ չանցաւ՝ թմրած Մարգարիտը մի շիք-  
թոց լսեց: Մինը մեծ տանիցը անցնելով՝ լուռ ու մունջ  
ներս մտաւ նրանց մօտ: Մարգարիտը կարծեց թէ՝ մօր  
ոտի թմրոցն է այն, ձեռքը եղբօր մէջքեցը ըլ հեռա-  
ցրեց, մանողին էլ չը նալեց: Աազարը յանկարծ գլուխը  
բարձրացրեց, վարժապետի սև ստուերը որ աչքովն ըն-  
կաւ՝ ջանը սրսաւց, տեղիցը ծլունգ էլաւ, լեզուն կպաւ  
ու գէպի գրքերի հաբգէն վազեց: «Զօ, փաթիլամիշ,  
աստեղ ինչ կը շինես. աս նմուտին քալէ ուսումնա-  
րան:» Ալս սպառնող ձայնը Մարգարիտն հասկացրեց,  
որ սխալ է իր ենթազբութիւնը, որ հայրը գեռ խուզ-

փոցի մէջ է, մալրն էլ աղբքումը. վեր թռաւ ու դէպի անկիւն քաշուեց: Ղազարը հարգէն ձեռքին, շեմքումը կանգնեց. վարժապետը վրա վագեց—«դուքս, չաթլամիշ, լեղիդ կը պատռեմ»—ասաց՝ բոռնցքը վրա բերեց: Ղազարը ճշաց, դուքս ընկաւ:

—Ի՞նչ ես ուզում իմ աղբօրիցը, անմատօծ...

«Մարգարիտո, դու մի վախնուր»—ձայն հանեց անդութքը ու իր զոհի դիմացը կանգնեց: Զոհը մնաց շնւարած:

«Մարգարիտ ջան, եսիկ քոնն եմ, դունիկ իմը.. քալէ քովս»—ասաց նա և ուզեց մի քալլ յառաջել:

—Ո՞ւր ես գալիս. ես Ղազարն եմ, որ վախեմ: Դուքս գնա մեր տանիցը, թէ չէ՝ տեսնում ես էս եղանը: Քեզ ով ա դրկել ըստեղ. քեզ ով ա կանչել, անաքուռ. էրեգ մին՝ սօր էրկու, ինչ ես գլխիդ վրա տուն պուծել. ամանջում չես: Դուքս կորի, ինձ լզապատառ մի անիի..

«Հոգիս, Մարգարիտ, իմ աստեղ ըլլալը մարիկդ ալ գիյնա. դու մի վախնուր. եսիկ...»

—Սուտ ես ասում, մէրս ջուրն ա գնացել, նա քեզ չի տեսել. որ տեսնար էլ՝ քեզ իմ կուշտը չէր զարկիլ: Մեր գեղաւմը տղէն աղջկայ կուշտը եր կը գնայ: Կորի, քեզանից վախում եմ... ասաց աղջիկն ու ուզեց պատէպատ դուքս ընկնել:

«Իմ Ղարիկն ես, Մարգարիտ, իմ մարիկն ես, մի վախնուր. դունիկ ալ, աս տունն ալ իմն էք: Ասկէն եփե մեզ իրարմէն ով կրնայ բաժնուր: Եսիկ կ'եղնիմ երեց, դունիկ երիցկին... պահ մը կաց, մի քալէ, քիչ մը դուրցենք... Հիմիկ Ղարիկդ կը՝ զարթնու, մարիկդ

ալ ջրէն կուղայ, ան տուն ալ չենք կրնալ խօսիլ, մի քալէ»—ասելով Մարգարտի առաջը կտրեց:

—Հեռացի ինձանից, ձեռդ քեզ քաշի. իմ անունը մի կոտրիլ... Ես կը խեղառուեմ, քեզ չեմ ուզի. Լաւ իմացի:

«Ո՞ւս, հոգին, ձէնիկդ կտրէ. Ղարիկդ կը զարթնու— ասելով ձեռքը ուղեց մօտեցնել:

—Նանի ջան, նանի...

Մեծ տան գոռուը ճռաւաց:

—Նանի ջան, կրկին գոռաց Մարգարիտը, ինձ ազատի... ու եղանը ձեռքն առաւ սպաշտանվելու համար:

Վարժապետը կորցրեց իր վստահութիւնը՝ դուրս ծլկեց: Մարգարիտը դուռը յետեկցը փակեց ասելով. «Գնալդ ըլի, գալդ չըլի, այ կոօ. ոչ մեծանաս, ոչ խիթարուես, բէմնւրազ ըլես...»

Ղազարը քրոջը երբ անպաշտպան թողեց ու մեծ տունն ընկաւ, հօրը միքանի անգամ բոթ-բոթեց, տեսաւ չի զարթնում, վագեց գէպի աղբիւրը, մօրը յալունեց վարժապետի գալն ու ինքը երկիւղից ուսումնարան գնաց: Մալլը շտապեց: Մեծ տան գոռուը հէնց ճռաւացըց, աղջկայ «Նանի ջան, նանի» բացականչը լսեց ու կուժն ուսիցը շտապով ցած գնելուց յետով՝ տեսաւ փէսին շէմքումը.

«Փէսայ, ուսումնարանը առաւօտանց թողել, էս տեղ ինչ ես անում. աներդ էլ զարթուն չի, որ հետը խօսեն...»

—Հէչ, մարիկ, ես ալ աս նմուտիս եկայ. Ղարիկս կու քնէ, դուն ալ աստեղ չէիր, ըշտէ կ'ուզէի գուրս քալել..

«Դնա՛, որդի, ամօժէ՛: Քու արարմունքը խալ-իր կը տեսնան, մեզ կը ճռշեն: Փէսէն հարսնացուի հետ բան չ'ունի չուանց պսակի գիշերը: Աստուած ձեղ էլ արժանացնի էն օրին, որդի, եղնա քու ամանաթը քեզ կը տանք ու էն սուրբ կրտսէն քեղ հետ:»

Վարժապետը սուից գլուխ գոզում էր. նա խօսելու էլ լեզու չ'ունէր: «Աղէկ է խօսքդ, մարիկ. ըմմա եսիկ հարիկին կ'ուզէի. մէ՛ ուզեմ նէ՝ իմ զրին զօրութիւնով աղջկանդ քովս կու տանիմ. ըմմա ադիկ հառամամամ եղնի»—ասելով գուրս զնաց:

— Խեղճ մարդը, յետևից խօսեց զոքանչը, աշխարհիս ոչ կարգն ա իմանում, ոչ օրէնքը: Էլ չի գիտում՝ թէ նշանած տղէն օրը ցերեկով չի կարող զանքաչանց գնալ: Ով որ գնայ էլ՝ ախր մի մատը մեզը կը դառնայ... Այսպէս գժգոհէլով նա գէոլի իր աղջկալ օթախը թէ քուեց:

## ԺԵՂՆ

### ՄԱՐԴԱՐՑԻՆ ԱԶԲՈԼՈՒՄԸՔ

Նշանադրութիւնից մէկ օր անցաւ:

— Սադ ըլէք, անդադար կմկմում էր Սոէփը աչքալուսէք ասողներին, էս ուրախ օրը ձեր գլխովն էլ անց կենալ. ձեր որդիքն էլ ծալկեն ու հասնեն իրանց մուրազին:

Կանանց աչքալուսէքը աւելի հետաքրքիր էր: «Մազդաղ աքիր, ասում էին գրացիները, փէսիդ ստը բարով ըլի, սրդին տարնի, սիրտը սիրնի, խօսքը քեամա-

լով. շուքը գրանը՝ բարձը կուանը՝ սադ աշխարքը առնի էս խաբարը, ուրախանալ ու ասի—երկուսն էլ ծերանան, Սիմօն ծերուսնի գառնան:»

— Դու էլ, ձեր որդիքն էլ, ա կնանիք. ձեր խօսքերը ինձ հէնց ուրախացնում են, որ ոսու գետին չի առնում. հէնց գիտեմ՝ Աստծու գարդահը բաց ա, ձեզ լսում ա Հալբաթ որ իմ աղջիկը տանը չէր մնալ, քանի իգիթ տղէրք աղանչաք էին անում, ամա ճակատի գիրը տարաւ:

Այս ասելով Մազդազը սար ու ձոր էր տեսնում վարժապետի ու ուրիշ տղերանց մէջ: Նա երբ տեսնում էր աղջկալ լացը, ալդ վերաբերում էր սւրիշ պատճառների. «Ամեն աղջիկ էլ որ նշանուի՝ պէտք ա լաց ըլի. Էն սէրը, որ աղջիկն աւսի իր հօր օջաղի վրա՝ խեղճին լացացնում ա, ով ա մեղաւոր: Մի մարդ որ մի տարի մէկի տանը կենում ա, հեռանալիս որ լաց չի ըլում՝ աչքը խօ ջրակալում ա. ուր մնաց էն՝ որ մեր աղջիկը քը օջաղի տուաջին ծնուել, մեծացել են, հազար խօսք ու խրատ են սովորել, հազար փորձանքից ազատուել—բա յաւիտեան գուրս զնալիս լաց չեն ըլի!»

Հալըն էլ այս կարծիքին էր. «աղջկալ ադաթն ա լաց կըլի: Ով որ լաց ըլի՝ նրա երեսին ինչ նամուս կըլի: Թող, ա կնիկ, թող էնդգար լաց ըլի, որ կշտանալ: Ասած ա աղջիկը աչքերը կապած զուշ ա, հէրն ու մէրը ում ուզենան՝ կը տան: Ա կնիկ, միտք ա, որ դու էլ էիր լաց ըլում...»

Մինչգեռ օրն այսպէս անցնում էր, գիւղի հասուն աղջիկներն էլ իրար իմաց արին, խօսք կապեցին ու եղան Մարգարտին աչքալուսէք: Նրանք իմբուած ներս

մտան, տեսան որ մեծ տան անկիւնումը մայրը փսփը-  
սում է: Աղջիկներից մէկը՝ Սառան ձէն ածեց. «Մօ-  
քիր, աչքդ լուս, ուր ա Մարգարիտը:» Մագթաղը նը-  
րանց օրհնեց. «Բարով դուք էլ իմ աղջկայ բաղդին ար-  
ժանանաք. ձեզանից մեծերին հնազանդ ըլէք. նամու-  
սով պառաւէք: Մարգարիտը միջի օթախումն է, գնա-  
ցէք, նրա սիրտն էլ ուրախացրէք:»

Աղջիկները իրար դիպան, քսքսացին ու կրկչալով  
ներս ընկան միջնաօժախիր՝ յեաևից գուռը պինդ փա-  
կելով: Մարգարիտը միայնակ նստած նաշխուն գուրլա էր  
անում, ընկերուհիներին տեսնելով՝ իր գունդունոցը կտրեց:

«Մարգարիտ ջան, աչքդ լուս. մի բարձի ծերա-  
նաք, խնդաք ու խիթարուէք:»

—Եհ. էրնակ ձեր սրտին, որ ըտէնց ուրախ էք,  
հազիւ թէ կմկմաց Մարգարիտը՝ աչքերն աղալելով:

«Աղջի, բա դու ուրախ շես. վրաբերեց Մարի-  
ամը. քու նշանուիլը մեզ ուրախացրել ա, քեզ լայտ-  
ցրէլ. իսի՞ չես դու էլ մեզ օրհնում:»

—Դուք էլ խընդաք, խիթարուէք:

«Եանի լաց ըլիլը ինչ ամօթ ա: Մարդ որ իրան  
հօրն ու մօրիցը բաժանուելիս լաց ըլի, ամօթ ա: Աղ-  
ջի, Մարգարիտ, սուտ են տում, սիրտդ ուրախ սլահի,  
ուրախ ուրախ էլ լայ ըլի: Ամա էս մթնումը մի մնալ, լուս  
աշխարհք դուրս արի, թէ չէ՝ ըստնդդ մթնակեր կ'ըլի:»

—Զէ, Սառա ջան, ես արեի ու լուսնի շողքը էս  
պուճուր հերթկովը պէտք ա տեսնեմ. որ ուզում եմ  
դուրս գնալ, ջանս փշադպում ա:

Լսողներին այս խօսքերը ծանը թուաց. ամենքն  
էլ ուղղակի նայեցին Մարգարիտ լճացած աչքերին:  
Սառան դարձետ խօսքով արեց.

«Աղջիկներք, ինչ էք սուս կացել. ձեր ասիլ — խօ-  
սիլ հէնց էս էր: Մենք որ պէտք ա հարսանիքի վախ-  
տը թագուհու չորս կոզմին նստենք՝ թախտի վրա, որ  
պէտք ա հալաւ օրհնէքին թագուհու քամակին շարուած  
ըլենք, — ժամումը՝ սեղանի առաջին, որ հարսանիքի մը-  
սացուն մորթելիս պէտք ա Մարգարիտին խաղով ու  
տաղով գուղենք, զարդարենք, հմի մեր ուրախութիւնը  
հէնց էս պէտք ա ըլի՞: Զէ, զադէն, ես ամենքիցդ էլ  
ուրախ եմ... Մարգարիտ չան, իսի ես աղաքարի պէս  
հալվում. քեզ ուզող տղին աշխարհիս աչքն ա, էքուց  
էլօր էլ տէրտէր կը դառնայ, դու էլ տէրտէրակին՝ սուփ-  
րի ձէրին նստած: Սրանից էլ լաւ բաղդը:»

—Իմ ազիզ քոլիեր, ի վերջու մամտաց Մարգարիտը,  
Աստուած էս բաղդը ոչովիդ չը տայ: Հէնց էս ասեցէք  
թէ՝ դուք նրանից վախում չէք:...

«Ես վախում եմ» — խօսեց Հերիքը:

«Ես էլ...»

— Տեսաք. որ դուք վախում էք, բա ես չեմ վա-  
խույ: Աստօծ օրհնի մեր գեղի տղերանցը. իրար հետ  
մեծացել, իրար խասիաթ, իրար լաւ ու վատ գիտանք.  
իմ հէրն ու մէրը նրանց թողացին՝ ինձ էդ կոօին տուին: Աղջկերք, ես չեմ դիմանալ... Եւ այս վերջին խօսքում  
նրա սիրաը փուլ եկաւ, հեկեկաց ու աշկարայ արտա-  
սուեց: Աղջկերքը մնացին շուար, սիրտ չէին անում  
խօսել: Սառան որ ուզում էր ամենքն էլ ուրախ լինեն,  
խօսքն ուղղեց Մարգարիտին.

«Ինչ ես հօրն ու մօրդ եախիցը կպչում, ասաց  
նա, դու քու լաւն ու վատը ինչ զիտաս: Քեզ նշանել  
են՝ պէտք ա «Հնաղանդ եմ» տաես ու ձէնդ փորդ  
քցես. իմացար:»

—Սառա, ի՞նչ ես ասում. բա աղջկանը նշան դը-  
նելիս նրա սրտիցը ջուր չեն խմիլ. բա չեն հարցնիլ  
թէ՝ գու էս ու էն մարդին կուզե՞ս թէ չէ: Հմի էս  
լաւա, որ իեղճը աչքերիցը լուլա—լուլա արտասունք ա-  
թափում: Միրզանց Օսէփը շատ տղայ ու աղջիկ ունի  
հա, սրան էլ կորցնի...»

Հերիքի բողոքը դուր եկաւ ամենքի սրտին. տմենքն  
էլ լեզու ածեցին Սառալի դէմ: Մարգարիտը ասես թէ  
սիրտ առաւ, հեկեկանքը դադարեց.

«Լաւ, ասաց վերջապէս Սառան, ես սուտ՝ դուք  
դրուստ. հմի պէտք ա ըգենց սուդ անէք. աղչի, ձեր  
տղէն ու աղջիկը մեռել են, ես նրանց թաղեմ...»

—Վո՞յ. քըքըուես դու, Սառա, վրաբերեց Մարի-  
ամը. մեզ՝ անմարդ՝ աղջիկ ու տղայ տուիր ու մեռցրի՞ր...

«Բա ի՞նչ էք սե սուզը մտնում: Ես Մարգարիտին  
ուզում եմ ուրախացնեմ. մի խաղ կ'ասեմ՝ դուք էլ ձեն  
պահեցէք:»

—Աղչի ջան, էս Սառան մեռլի վրա էլ գնա, սըզ-  
ուրներին կ'ուրախացնի: Ասա, ասա, հենց խնդաս:

«Ընդում էլ, խիթարուեմ էլ»—ասաց նա ու սկսեց  
բարակ ձայնով.

«Կարմիր ասենք, կարմիր կապե՞նք,  
«Մարգարիտի սիրոց շահե՞նք.  
«Կարմիր թագը գլխին տեսնե՞նք,  
Էդ մուրազին մենք էլ հասնե՞նք.»

Աղջկանց շրթունքին ժպիտ խաղաց. իրար քսքըս-  
վեցին ու քչիչացին: Մարիամն ասաց. «Աղչի, Մար-  
գարիտ, լսում ես սրա խօսքը:»—Զէ, նա անտարբեր  
էր, լսում չէր: Այժմ էլ չեղիքն սկսեց աւելի քաղցը—

«Աղչի, կանգնե՞նք Մարգարտի մօտ,  
«Կապե՞նք վզի՞ն կարմիր նարնտ.  
«Երբ ժամունը կարգը կարգան,  
«Խաչը որ ան միշտ օգնական...»

Երգչուհու խօսքն ու քաղցը եղանակը խոր ազդե-  
ցին Մարգարտի սրտին, և նա ըլ կարողանալով դիմա-  
նալ՝ ուզեց իր սրտինը երգով արտալայտել—

Աղչի, ինձ գուք բան միք ասի՞ւ,  
Իմ պսակը դուք միք օրհնի՞ւ.  
Ես արժան չեմ էն կոօին,  
Ափսոս եկէք իմ արմէն...»

—Աղչի, դուք իմ մօրն ասեցէք,  
Որ ըլ թողնի ինձ էս բաղդում.  
Ես վախում եմ—դուք ի՞նչ կ'ասէք,  
Ա՛յ, կը մեռնեմ նրա ձեռքնում...»

Մարգարիտը որ լոեց, մեծ տանիցը հօր ձայնը  
լսուեց: Ափսոս, ինչ վատ միջոցի ներս մտաւ հալը:  
Աղջիկները ամօթից իրարով դիպան ու կարծելով թէ  
Օսէփը իրանց ձայնը լսած կը լինի՝ շտապեցին դուրս  
գնալ:

«Մարգարիտ ջան, ես քոռանամ. մեր ձէնը հերդ  
լսած կ'ըլի: Դէ հմի մեր ըստեղ կենալն էլ անհարկ ա:  
Դարդ մի անիլ. էհ, նշանզըէքը աշխարհովի ա—մէնակ  
դու չես, էքուց էլօր էլ մեր գլխովը պէտք ա անց  
կենայ...»

—Զէ, արխէին կացէք. ձէնը էստեղից դժար ա դուրս  
գնում, հէրս լսած չի ըլիլ: Ի՞նչ ասեմ, Սառա ջան.  
թէ Աստուած իմն ա, սըտինս կը կատարի—ալսպէս ասաց  
Մարգարիտն ու բոլորն էլ կանգնեցին:

«Ել դարդ չ'անես, Մարգարիտ ջան, ասաց Սառան։  
մենք գնում ենք։»

—Դարդն Աստծու տուած ա, դադէն, կարող չեմ  
փախչիլ։

Նրանք կէնտ կէնտ համբուրվեցին Մարգարիտ հետ։

«Մնաս բարով, աղչի ջան։»

—Գնաք բարով, դադէն։...

## ԺԹ.

### ՀԱՐՍԱՆԻՔԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆԵՐ

Տէր Ղուկասի խորհրդով Օսէփն այնպէս վճռեց, որ  
նշանադրութեան միջոցին հանդիսականների արած բոլոր  
խոստմունքը հարսանիքից յետով ժողովուէր։ Հարսանիքից  
բոլոր ծախքերը Օսէփի վրա էր. նա մի քանի օրից յե-  
տոյ պէտք է հարսանիքը գլուխ բերէր. ուրեմն և շատ  
բան ունէր հոգալու. իր և վարժապետի անունին վա-  
լել պէտք է գործ ոկոէր։ Առանց արդ էլ հարսանիքի  
ծախքերը շատ-շատ են. «Հարսանիք են ասել, որ մար-  
դի սիրտ չը տրաքի։»

Մագթաղը ուրիշ օգնական կանանց հետ եօթն օր  
շարունակ պէտք է հարսանիքահաց թիւէր. ուրեմն և  
առաջուց պէտք է ունենար ջուալներով ալիւր։ Դեռ  
հացը չը թիւած՝ տաշտաղրէքի հանդէսն է լառաջ գա-  
լիս. իւրաքանչիւր տանից մի կին հրաւէրք ստանալով  
պէտք է գնար՝ տաշտի մէջ մի քանի բուռը ալիւր մա-  
զէր՝ օրհնելով։

«Մենք մաղենք տաշտի մէջը,  
Աստօծ մաղի հանդի մէջը,  
Ուրախանան չոր ու գէջը,  
Կանանչ մնան չփանց վերջը…»  
Էս տաշտաղրէք անողը—  
Թէ վարի գնայ՝ գութանին գուաթ,  
Թէ ցանքի գուրս գայ՝ սերմը շատ ու շատ,  
Ամեն ակոսին ցորենը առատ,  
Աստծու բարիքը տանիցս անհատ։

Ուրաքանչիւր կին մի այսպիսի օր հնանք տանիս  
պէտք է մաղը տաշտի ծէրին շարժէր ու 5-10 կոպէկ  
վայր գնէր թէփշում, որ ապա այդ կոպէկներից մի քանի  
ըուբլի է գոլանում։ Ֆողովուած փողը մտադացու է.  
Նրանով հարսանիքատէրը մի ոչչար կամ արջառ է գնում,  
մորթում ու միսը հաւասարապէս բաժանում գեղի  
բնակիչներին։ Սորանով որպէս թէ սուրբ հրեշտակները  
հալածում են դեւրին պսակվողներից ու միշտ օգնական  
նրանց։ Հենց այս կերպով Օսէփի տան տաշտա-  
լինում նրանց։ Հենց այս կերպով Օսէփի տան տաշտա-  
գրէքն էլ կատարուեց, վեց մանէթ ու փող ու միքանի  
գրէքն էլ կատարուեց, կանանց ճաշկերոլթին Մար-  
ջուխտ մոմ ժողովուեց։ Կանանց ճաշկերոլթին Մար-  
գարիտը չէր երեսում և ոչ էլ օգնում էր իր մօքը, որով  
աւելի ճշքալատառ էր անում նրան։

«Որդի, Մարգարիտ, ինչ ես լդապատառ ըլում.  
ախը էս քու ուրախութիւնն ա, քեզ օրչնում են, ինձ  
խիթաբում. խի չես գու էլ ուրախանում, խի չես էդ  
լափակոլու ամաններն էլ ա լփանում.. Ախը հմի էն  
վախտու ա, որ ուզում եմ աւլին էլ շոր հագցնեմ ու  
բանացնեմ...»

Բայց ում էր ասում. աղջիկը գլուխը ծալքատե-  
բայց ում էր ասում. նա ծանրացէլ էր, բայց դեռ կար-  
զիցը չէր հանում. նա ծանրացէլ էր, բայց դեռ կար-

ծում էր թէ իր «չեմ չեմ» ով խափանել կը տայ հարանիքը։ Մարգարիտը առաջին անգամն էր՝ որ մօր հետ շատ պարզ ու վստահ խօսեց այսպէս։

— Սև ըլի ձեր տաշտադրէքը, մթնացնի ձեր աչքերը, որ ինձ էլ չը տեսնաք. մահ ըլի ձեր ճաշը՝ փարժապետի բողաքիցը կազի՝ ան իմ, որ պոծնեմ ձեզանից։ Աշխարհքիս աղջկերանցը լաւ լաւ տղերք կան, ինձ համար չկայ—էդ կոօն ա։ Փառք Աստծու՝ էս գեղի տղերքը քաղքումն էլ գովական են. իրար հետ մեծացել ենք, իրար հաց ու ջուր տվել, երեխայ վախտներս իրար հետ խաղ արել, իրար օրհնել, վախտ վախտ կռուել ու անիծել… թէ տալն ադամթ ա, ինձ խի՞ չեք տալիս գեղիս տղերանցից մնին։ Ո՞վ ա կոօն, ո՞չ դուք էք ճանաչում, ո՞չ ես. Աստծու տուած պարզ լիզու էլ չունի. նրա ոչ խօսալն եմ իմանում, ոչ գիրը, ոչ բհիքը։ Զեմ ուզում, նանի, չէ, չէ…

«Աղջի, քեզանով ա, որ չես ուզում. ինչ ես ըռտիդ անում։ Հօրդ կ'ասեմ աչքիդ լիսը կը հանի։ Որ բան չես շինում, լիզուդ քեզանով արա է.. Աղջիկն ինչ, տղի վրա խօսալն ինչ. թիւհ..»

— Գեղի տղայ ըլի, թէ խօսամ—աչքս հանի։ Դրան թողէք՝ գնա իրանց երկրիցը աղջիկ ուզի. ես մեղք ե՞մ..

«Խալին էլ հէնց էդ են ուզում, մենք մեր նշանը լիս տանք՝ նրանք էն սհամթը իրանց աղջկերանցից տան։» Մայրը շատ էլ աղջկայ հետ գլուխ ըը դրեց և կարեորութիւն էլ չը տուեց նրա լաց լինելուն։

Տաշտադրէքը վերջացաւ և անմիջապէս սկսուեց հարսանքահաց թխելը։ Մագթաղը թաղի աղջիկներից երեքին կանչել տուեց, որ տանը աղջկայ մօտ մնան, որ նա սրտնեզութիւնից ինքն իրան չվնասէր։

Հարսանիքին հարկաւոր էր եօթը ձիաբեռը գինի։ Տանուտէր Օսէփը հէնց այսօր գնացել էր, որ Ռատեանի տեան գիւղից գինի առնի ու բերիլ տայ։ Նրա Սար պարզառը, Վարդիկ կովը մի քանի ոչխարների հետ որոշուած էին մսացուի համար, որ պէտք է հարսանքագիւղերը մորթութէին։ Իւղը, պանիքը, հաւը, ձուն, մեղրը, ձաւարը, լոքին, բրինձը և այլ պիտոյքները տանիցն էին։ Շորերի, կապերտների և այլ կողմնակի հոգացողութիւնները յանձնուած էին ուրիշներին։ «Լաւ պազուութիւնները յանձնուած էր իրանց ճաշակով կարում էին Մարգարտի թագի տակի շորերը, որոնց կտորները Աղբուլաղիցը գնեցին։ Վարժապետի համար նոր պէտք է բերել տային քաղքի—շուրբ։ Նա ինքն էր վճռել, որ ոսի շոր հագնի, որ օտարական լինելը չերեալ…

Տէր Ղուկասը պսակման յալտարարութիւնը վարժապետին քահանայացնելու խնդրագրի հետ ուղարկել էր մի մարդի ձեռքով վիճակի գործակալին ի տնօքէնութիւն։ Գնացող մարդը ալժմ լիս էր եկել՝ իր հետ բերել պսակի հրամանաթուղթը և մի նամակ։ Տանուտէր Օսէփը տանը չէր. սրա համար էլ տէրտէրը ըշտապ գնաց դէսի սւսումնարան՝ վարժապետին դուրս տապ գնաց դէսի սւսումնարան՝ վարժապետին Ականչեց, աչքալուսէք խօսեց ու միասին քաշլեցին Ականչեց մարտաքի սոխախկը, կարդացին նամակը՝ որ հելքանց մարտաքի սոխախկը, կարդացին նամակը՝ որ հետեալն էր.

«Բարեկըօն տէր Ղուկաս,

«Նամակ և խնդիրդ ստացի և առաքեցի դհրաման պսակելու վարժապետիդ յուսամ զի կատարեսցուք զիսնդիրս զառաջարկելիդ, համբաւդ զարդը գէջլ հասանէ զայլ ուրիշէ զիս, փութանակալի աշխադ կալնում գոչել զպատուական վարժարեդ աստը և ձեռնադրիալ ճամպատուական վարժարեդ աստը և ձեռնադրիալ ճամ-

փեսցուք յանուն հօր և որդոյ, զպսակն դոցա կատարիս ուրախութեամբ և օրնութեամբ ի քրիստոս, և ափսոսամ զի սակաւ է ձերդ ուղարկիալ աջահամփոյրն ինձ, առ այս ոչինչ փոլիթ ապա ուղղեցուք և հաշտեսցուք: 187... ի Յ-ն դեկտեմբերի:»

— Օխակ, հարիկս, բացականչեց վարժապետը, ադոր խօսքէն եսիկ շատ բան հասկըցայ:

«Ե հարկ է, շատ բան, որդի, էս ա՝ բանդ պոծած ա—պսակիդ հրամանը ծոցումն, ձեռնադրութեանդ թուղթը բռնումս, Աստուած երկուսին էլ արժանացնի: Մենք սպասինք անորդ գալուն, որ կարելի ա մի երկու օր ուշանայ: Հենց որ գինին կը քերի, զուռնա—դհոլը սաղաշալրհքին իմաց կ'անի քու հարսանքի խաբարը: Աստուած չար աչքից թափի, որդի:»

— Փառքի ըլլաս, տէր հար, ազօթք ըլլէ՝ որ հաւնանք ադ իդձին. հարիկս ու մարիկս գուն ես, եսիկ ալ քո հոգեոր զաւակը: Եսիկ դհա աւելի լաւ կու կարժցնեմ աղոցը, քեզ ծառալութիւն կ'էնեմ..

«Ենալէս արա՛, որդի, որ գանգատվող չըլի քու վրա. երեխանցը սաստի, ամա շատ մի ծեծիլ: Խեղճ որք Արամն ու Քիքունց Արտէմը վատ հալի մէջ են: Նրանց տէրելը էրեկ ինձ կանչեցին, որ խեղճերին հաղորդ տամ. դու էլ խօ վաղուց ա՝ նարեկ ես կարդում գըլ-խներին: Երեխանցը ամեն օր ծեծիլ, ծէպլինելով ուղղուի տալ չի լինիլ, չեն գիմանալ: Ես գիշեր—ցերեկ ազօթք եմ անում, որ էն հիւանդ երեխէրքը լաւանան. մահն Աստծունն ա, ճակատի գիրն ա, ամա պատճառը դու ես: Երեխանց գլուխը որ մի բան գայ՝ քեզ կը մեղադրեն: Պետրոսանց, Վարժանանց, Լանժանց, ու էն մէկէլ երեխէրքը որ փչացան՝ չի քու ահիցը, քու.

անչափ ծեծելուցը, որ խեղճերը մի գլուխ վախաւորվեցին: Ես, որդի, շատ եմ զգուշացրել քեզ, էլ եմ ասում. մի քիչ խաղաղութիր, ձեռդ թեթեացրու: Հիմի էլ երեխանցը որք հիւանդ են, որը ոտի վրա մաշված, որն էլ փախել են: Սա լաւ բան չի, ով ասես՝ քեզ կը մեղադրի: Ամեն մահ խօ ճակատի զրիցը չի...» Վարժապետը գլուխը կախ էր քցել. տէրտէրը մի փոքր էլ յանդիմանեց նրան և ապա խօսքը վերջացրեց. «Որդի, աշը կ'ըլի, մահը չի ըլլի. քու մի թիթե սիլլէն էլ երեխանցը բոլ ա: Վարիի տեղ ես, էնալէս արա՛ որ ամենքն էլ քեզ սիրեն: Դէ, հիմի գնա՛, երեխանցը դաս տուր, իրար ուտում են. երբոր մեր գործերը կը վերջացնենք, ես շատ խրատ ունեմ քեզ տալու: Տէրը քեզ հետո:»

— Տէրոջն արժան ըլլաս, հարիկս. խրատ ինձի լոնդունելի է—ասաց վարժապետն ու իրարից հեռացան:

## ¶

## Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Ա Ն Ք Ն Ե Ր

Արդէն իրիկնամահ էր: Տէրտէրը գէպի եկեղեցին գնաց: Ներքի թաղիցն էլ եփնչու մէջ վաթաթուած գալիս էին Սալին ու կարճիկ Վարդանը.

«Որհնիա ի տէր, տէրտէր ջան:»

— Աստուած օրհնեսցէ, որդիկ:

«Տէր հալը, մի երկու խօսք ունեմ քեզ ասելու, ասաց Սալին, վաղուց ա՝ ուղում եմ ասեմ, չես պատահում:»

— Որդիկ գնանք եկեղեցին, նստենք, ասա: Ես աժամի վախտ ա, յետոյ ժամ կ'ասեմ:

Եբոր հասան եկեղեցու գուռը՝ տէրտէրը զանգը չը հարեց. ներս մտան, նստեցին կանանց դասում՝ վերնատան տակ:

«Տէրտէր ջան, ասում են՝ վարժապետը էս երկու օրս պսակվում ա, հա:»

«Ղորժ, տէրտէր ջան, դըւստ ասա»—վրաբերեց Վարդանը:

— Վարժապետի պսակը էնքան մեծ բան չի, որդիկ, ինչքան նրա քահանայ դառնալը: Ես շատերիցն էլ տրտունջ եմ լսել, որ նրա լիզուն երեխէրքը դժար են հասկանում: Ես էլ զորժ ա, չունքի՝ դաս են տալիս խօսալով, որ խօսալը խաւար ըլի, հալբաժ: Երեխէրքը չեն հասկանալ ու շատ կը ծեծուեն: Ես մարդին նոր վարժապետ ընդունելիս, Սալի ջան, դու ասեցիր թէ՝ դրա լիզուիցը մեր տղէրքը բան չեն իմանալ: Ես էլ գիտէ՝ որ էդակս ա, ամա ինչ անես՝ հնար չկար. լեզուի վատութիւնը խո չէր քանդիլ ուսումնարանը: Լեզուն կը սովորվի, ամա ուսումնարանը թէզ չի շինուիլ: Միքանի հետ իրան էլ ասել եմ. «վարժապետ, լիզուդ դրստի, աշխատի մեզ նման խօսալ:» Խեղճը ինքն էլ բան չի ասում, ասած ընդունում ա:

«ԵՇ, տէրտէր, ոչխարը կարա՞լ էծի պէս մկկալ, ան էջը ոչխարի պէս»—սրախօսեց Վարդանը:

«Իմ մէրը մեռնի, որ ես բանը էն գլխիցը չը գիտենամ»—ասաց Սալին. «ամա չուխէս հին ա՝ խօսք չուանի չը դրիք, տէրտէր ջան...»

Որդիկ, լիզուն էլ էնքան ոչինչ, որն ինքը կը սովորի երեխանցից, որը երեխէրքը՝ իրանից: Դրա էստեղ

ըլիլը գեռ օխտը ամիս չը կալ. լոլո կալ՝ որ մի տարուց յետոյ մեզ նման խօսալ:

«Հաւատս չի գալիս, տէրտէր, ասաց Սալին. կաղնի ճիւղը ուռի նման չի լուրփիլ: Եբոր դրան վարժապետ էինք ձեռնադրում, ասել եմ, հմի էլ ասում եմ, որ դա՝ զնիթ ա՝ շատ բան գիտայ, ամա լիզուն լիզու չի: Տես, էս օխտն ամիս ա, դաս ա տալիս երեխանցը, անջալ մի քանիսն են փոխ ասում—որ առաջ էլ գիտէին. հիմի ոչ մի երեխայ գեռ տէտը չի պոծել, չի կարում էրկու խազ բան գրիլ: Իմ միտն ա՝ որ քու աշակերտները իրեք ամսումը տէտը պոծնում—ժամումը «Համբարձի» էին ասում: Ամա էդ մարդը, տէրտէր ջան, թէկուզ նեղանաս էլ, իմ խելքումը չի գալիս: Ասել ա՝ թէ մօնթ թակիլն ադախ ա, վախտն ու բէվախտը չը գիտի, տուր ու թմփոցով ա ուզում զալամին բգիլ տայ. զօռով բան չի ըլիլ, չի: Խաթէն խօ գլխիցս անպակաս ա, դրա ձեռովն էլ նոր խաթաբալի մէջ կընկնենք ու չենք պոծնիլ: Տեսնում ես, տէր հալր, որ ես իմ տղէն հանեցի. մուհտա տղալ չունեմ, որ էդ մարդը արինը խմի. ասենք՝ ուրիշի խելքը չի կտրում. բա ես էլ ախմախ եմ. բա էրկու տարի քաղքումը ուր եմ կացել: Նատ լաւ. Ես ամենը թողնենք ու մի սհախքու խօսքը գանք. դա որ տէրտէր գառնալ, էնքան ապրանքն էլ խալիսիցն ստանայ, ես էլ իմ խոստացածը տամ, եղնա էլ վարժապետութիւն կանի...»

«Իմ խելքը չի կտրում, ասաց Վարդանը. դրա գլխի ատկը որ վափկի, էլ ինչ գլուխը կը ցաւացնի:»

— Որդիկ, ինչ էք ասում. տէրտէր եմ շինում, որ մշատ վարժապետ մնալ. զնիթ ա, երեխանցը շատ բան չի սովորացրել, չունքի՝ մինչեւ օրս խամ էր: Մի երեք ամ-

սում երեխանցը անջաղ ճանաչեց, նրանք էլ իրան: Այսուհետեւ դրա պառուղը պէտք ա երևալ, կարգացնիլը խօ ակսո քաշելը չի՝ որ ծիր անես՝ պոծնես, շատ դբ-ժար ա:

«Եանի որ տէրտէր դառնայ, քեզ մատաղ, ու վարժապետութիւն չանի, Բնէս կարանք անհի!»

—Ի՞նչ. աչքի լուսը կը հանենք:

«Ո՞նց»—վրաբերից Սալին:

— Սենք առաջուց դրա ձեռացագիրը կառնենք, որ  
մինչև մահը տէր ըլի վարժապետութեանը. Կը հակա-  
ռակուի՝ գլխին կը տանք, մեր ձեռին չի: Տէրտէրն ա  
ժողովրդի ձեռին, թէ ժողովուրդը՝ տէրտէրի: Ո՞վ ա  
նւմ ձեռին մտիկ անում:

«Դէտ տէրտէրը ժողովրդի գլուխն ա»—ասաց Վարդանը:

«Տէրտէրի գլխին տալ չի ըլել, աջիդ մատաղ. նա  
մեր հոգեւոր հայրն ա. եա տէրտէրի գլխին տուած, եա  
մեր հոգու՝ դիի մին ա: Ել ի՞նչ ես մեզ արածացնում,  
մեր կերածը հաց ա՝ խօ խոտ չի: Մնացել ես էր-  
կու ջրի արանքումը, ել չես գիտում, մեզ ի՞նչ տսես.  
ամա մենք խօ քու խօսքիցը գուլս եկողը չենք: Տէր-  
տէր ջան, եդ ամենն ել թողնենք, ես մի ուրիշ բան  
տսեմ: Թող եդ մարդը իր մուրազին հասնի. մենք դրան  
տէրտէր չը շինենք: Պասկը մեր ձեռին չի, ամա տէր-  
տէր շինիլը մեր ձեռին ա: Մեր հոգեւոր տէրիցը էլ ա-  
հավան մի ուրիշ տիրացու ուզենք, որ համ տէրտէր  
դառնայ մեզ հմար, համ վարժապետ: Ի՞նչ կ'ասես, տէր-  
տէր, Վարդան աղբէր:»

Եսու ու իմ Աստօծը, գրուատ խօսք ա. Էդ մարդը  
անտէր օքմին ա, գլուխը սարին—քարին ա տուել, որ

զատ գառնալ, ամս մեր խարջը չի. ինձ որ լսէք, տէր-  
տէր ջան, ձեռը վեր կունէք»

— Արդիկ, դուք հենց գիտէք հոգեւոր տէրից ու-  
զածը սրանից ուսումնագէտ կ'ըլլի. ում բանն ա հատել,  
գայ էս գեղը, ումբը մաշի: Մենք վարժապետին  
ինչ փող ենք տալիս, որ բանը հասցնենք մեր հոգեւոր  
տէրին: Ես շատ վաղուց ամեն բան չափել ու ձևել եմ.  
Հենց գիտէք՝ ձեր ասածները ես չեմ հասկանում: Ինչ  
որ Աստուած տուել ա՝ նրանով որ զաբուլ կենանք —  
մեր օգուտն ա: Սա էլ մարդ ա՝ կամանց կամանց մեր  
վարքն ու բարքը, մեր ահֆալն ու հալլ կ'իմանալ. ալ,  
էս էրկու օրս կը պասկուի ու կը դառնալ մեր գեղցի:  
Են վախտը կարող ենք շատ պահանջներ անել, տեղն  
եկած վախտը վրէն բարկանալ. ամա հիմի՝ ճշմարիտ  
վախում եմ՝ թէ երկու խօսք ասեմ. ուսումնարանը կը  
թողնի — երեխանցը մուրագահան կ'անի: Դու որ ինձ  
լսես, Սալի՛ ջան, քու տղին էլի կ'ուղարկես ուսումնա-  
րան. որ բան չը սովորի՝ խօ երան խէրն ու շառը կի-  
մանալ, գըի ու ու սիպտակը կը ճանաչի — էս էլ մեծ  
քան ա: Հակառակը խօսելով ինչ պէտք ա դառնալ: Ես  
գիտեմ՝ որ Աստուած մեր գեղի հետ ա, մեր ամեն բանի  
վերջը խէրա, չունքի՝ Տէրը մեզ հետ ա, մենք նրա հետ

«Տէրին մատաղ, տէրտէր ջան, թող ըդէնց ըլլեւ. քու խելքը իմիցը շատ շատ ա»—տեղիցը կանգնելով ասաց Սալին:

«Մեր գլուխիը տէրտերի ոտն ա, Սայի ջան—վրա-  
քերեց Վարդանը. խօսք ա՝ ասում ենք, ամա էլի մեր  
խելքի բանը չի. չունքի՝ մենք ոչ գիրը գիտենք, «չ  
քհիրը. հալքաթ տէրտէրս բան ա գիտում, որ մեր խօս-  
քը ջուրն ա քցում:»

Նրանք էլ տեղիցը կանգնեցին, սուրբ սեղանին գլուխ տալով՝ խաչակնքեցին ու ուզեցին դուրս գալ:



Հենց այդ ըովէում գգիրը եկեղեցու շէմքումը կանգնեց ու հեռալով ձայն հանեց. «տէրտէր, աջիդ մատաղ, մի աղա ա եկել, քեզ կանչում ա. թէզ, արի զնանք:»

—Ո՞վ ա, ալ տղա, հայ ա՝ թէ վրացի:

«Ոչ հայ ըլիլը գիտամ, ոչ վրացի. ամա քոխվի հետ հայերէն էր խօսում:»

—Հետն ով կար:

«Երկու ձիաւոր՝ եարադ—ասքաբում մտած:»

—Էս ով պէտք ա ըլի, ասաց Սալին. կարելի ա պըխտաւն ա, ան նաչալնիկի մարդը: Մախլաս...»

—Շատ կարելի ա հենց եադ մարդ ա, ասաց Վարդանը. խեղճ խալխիցս կրակն ու պատուհասը չի պակասում, էլի:

—Որդիկ, թէ պըխտաւն ա, ինձ հետ ինչ դավա ունի. ես հոգեւոր՝ նա մարմնաւոր:

—Ա՛յ տղա, ինչ դարդի մարդ ա. ուշվուշը սարի ա թէ դաշտի:

«Ոէ մի հագած—կապած, մազով—բէղով, բոյով—բուսաթով, սև աչք—ունքանի, ջէկլ—ջիվան, ասող—խօսող, խելքով—քեամալով, սիրով—սրտով աղայ ա էլի. աչքը որ վրէս քցեց, ջանս սրտուց: Հագի շորելը կասես խաս ու զումաշ ըլեն. գեղը գալիս՝ որ էդ դարդի շոր ա հագնում, իրանց տանը բա ոնց կ'ըլի: Զաքմի ճտք երը չուանց ծնկները հասնում են: Աչքերին չէշ-

մակ ունէր, որ տուն հասաւ՝ վերկալաւ: Զէջմակի շուշէքը պլստրատին էին տալիս՝ գէլի աչքերի նման: Կողքիցը մի կաշուէ զաւուկի պէս բան էր կախ արել. մտքումս ասեցի՝ ինչ զդար փող կ'ըլի նրա միջին... Ամա կ'ասէիր դանանդա ծով ըլէր. սկի չէր խօսում: Երեսում էր, որ խեղճը շատ էր մռսել: Գնանք, տէրտէր ջան. ինձ միք յետացնի, քոխվէն գլուխս կը պուկի:»

—Սալի ջան, Վարդան, դուք էլ եկէք, տեսնենք,

ով ա էս ցրտին մեր գեղն եկել:

—Գղիր, հարցրեց Վարդանը, քոխվէն էլ ա եկել:

«Հա. դրանք են ճամփիցը յետ տուել: Թէզ, Վարդան ապեր, քոխվէն միրուքս կը փէտի:»

—Ե՛հ, եանի մեր գեղը լաւ մարդ չի դալ—տրտընջաց Սալին. ովքեր էլ գան՝ ուտելու կը գան, բան շինելու չեն գալ: Տէրտէրը եկեղեցու գուռը նորէն փակեց. գգիրը թռանւ...»



## Ի՞՛Յ.

ԽԱԼԻՖԱՆ ՄԱԶՀԵ ԿԱՄՈՒԲԶԻ ՎՐԱ

Զիւնը մաղում էր: Անտառի ծառերը սնքունակա. էլին: Զիաներին ջուր տալու ժամն էր: Օրը հետզհետէ տարաժամում էր:

Տանուտէր Օսէվը իր զբնիցը կաղէկադ դուրս եկաւ տէրտէրի առաջը: Դեռ հեռուկից ձայն տուեց Սալին. «Քոխվա Օսէվ, էդ ինչ մարդ ա, խէր ըլի:»

—Եկէք, հլա եկէք, կ'ասէմ: Եւ միասին գնացին գէպի Օսէվի սրահը:

—Տէրտէր ջան, աջիդ մատազ, սկսեց Օսէփը, բանս  
չը լաջողեց: Հէնց ճանապարհի կէսը հասայ՝ առաջս  
երեք ձիաւորներ գուրս եկան, երկուսը հասարակ մար-  
դիկ՝ եարազ ասբաքում մտած, մինը՝ աղա, մէկէլը ռաշիդ  
տղամարդ: Իմ ով ըլիլն իմացան ու ինձ ետ տուին:  
Աղէն լաւ մարդ երևաց աչքիս: Երբոր հասանք Դադէ-  
թալ տակը՝ հարցը: «Ով էք, ուր էք գալիս մեր գե-  
ղը, խէր ըլի:» Նա ասեց—խէր ա, գէղումը կ'իմանաք:  
Չուանց ըստեղ վարժապետի, տէրտէրի, ժամի ու ու-  
սումնարանի վրա էր հարց ու փորձ անում. ես քանի  
գովամ էի՝ նա աւելի էր հարցնում: Ամա խեղճ մար-  
դի ռանդ—մռանդը թուել էր, յըտիցը սառել, մա-  
հուդէ շորերը մսիցը կպել. վախտ վախտ ձիուցը վէր  
էր գալիս, ոտով գնում՝ որ քիչ տաքանալ: Նա քանի  
ինձ գեղի տեղն էր հարցնում, ես մօտիկ էի նշանց տա-  
լիս: Մի տկլոր—անմազ եփնջի ունէր՝ ուսին քցած,  
բաշլուղով գլուխը փաթաթած: Շատ չէր խօսում,  
միայն աչքը սարին—քոլին էր քցում, կ'ասես մի զատի  
էր մանդալիս. մի գեղատեղ ան գեղ որ տեսնում  
էր՝ հարցնում էր. «Էս ի՞նչ ա, ըստեղ ուսումնա-  
րան կոյ, քանի տուն ենունս էլ «հա» ու «չէ»—ն ա-  
սում էի: Ես հալին գեղը հասանք ու, չունքի մեր տու-  
նը խառնուած էր, նրանց տարայ ձեր օթախը, տէրտէր  
ջան, ձիանն էլ գոմը քաշեցի: Բուխարին վառեցի,  
կրակը թեժացը, թագա խալիչէք փուեցի տախտին ու  
«համեցէք» արի: Ոնց որ տեսնում եմ, դա մեր տեսած  
աղաներիցը չի, ուրիշ մարդ ա:

«Ինչի արազ չը տուիր, որդի Օսէփ, որ խմել էր,  
ջանը տաքայցիր:»

—Արազ, հազիր տաք ջուր բերինք, որ մռած ոտ-

ները լուսանանք, չը թողեց. սառը ջուր ուղեց, քսել  
տուեց ոտներին ու ձեռներին: Անտէր չաքմէքն ու թափ-  
մանները պահէլ չէին խեղճի ձեռն ու ոտը ցըտիցը: Դէ  
նա խօ մեզ նման չէր կարող դիմանալ:

«Որդի, հայերէն կարում ա խօսիլ:»

—Ի՞նչ ես ասում. խօսալիս մարգարիտ ա թափ-  
վում բերնիցը. քաղցը խօսում, խօսում ա, ճակատն ու  
աչքերը ծիծաղում՝ կ'ասես քու ընկերն ըլի, ամա որ մի  
բան քէֆումը չի գալիս, ունքերն ընէնց տոթում ա,  
ճակատը կնճռուսում, որ խօսողը զարզանդվում, փշա-  
քաղած սուս ա կենում: Ես էս թահը ճանաչեցի էս  
մարդին:—Ասում էր՝ ես թիֆլիս քաղաքումն եմ կենում,  
ամեն գեղ էլ, որ տեղ հայեր կան, պէտք ա գնամ: Զեմ  
իմանում թէ՝ նրա ինչն ա մնացել գեղերումը:

«Ոնց որ գու ես ասում, քոխվա Օսէփ, թէ եղ զայ-  
դի մարդ ա, մեզ վնաս չի տալ:

—Զէ, Սալի ջան, գա ուրիշ սալակաւորն երի  
նման չի երեսում, որ ուտիլ—խմիլու համար գալ—  
զնայ զեղերս:

«Մարդը հեշտ չի ճանաչվիլ, վրաբերեց Վարդանը,  
հլա լաւը միք ասիլ, վերջնա գովելի:»

—Ա՛յ տղա, Վարդան, ինսանը սֆաթիցը մալում  
կ'անի.

«Իրուստ ա, հաստատեց տէրտէրը,—քայլք ստից,  
գոյնք երեսաց լայտ առնեն զմարդիկս:»

—Ամա մենք եղանում ենք, տէրտէր ջան. առաջ  
զնանք, տեսնանք, եղնա բանը բան նշանց կը տայ ու  
մենք էլ կը ճանաչուենք էդ մարդին, ասաց տանուտէրն  
ու առաջ ընկաւ:

Զիւնը մատի հաստութեամբ ծածկեց գետնի երեսը: Արդէն ճրագ—վառոցն էր:

Նանապարհին մի քանի մարդիկ էլ տանուտէրին դիմեցին օտարական մեծաւորի ով լինելն իմանալու, բայց նա «եկէք, ձեր աչքովը տեսէք» ասելով նրանց էլ տարաւ:

Տէրտէրը չէր վստահանում իր օթախը մտնել. նա իր մորուքը սանրեց, շորերը մաքրեց, ուղղվեց ու խմբի առաջն ընկնելով՝ սիրտ արաւ՝ ներս մտաւ: Իոլորն էլ հետեւցին տէր հօրը՝ զլիսարկները վերցրած, անձանօթին գլուխ տալով՝ կանգնեցին շէմքից մօտիկ:

— Աղան զլիսիդ մատաղ, ասաց տանուտէրը. Էս ծերունին մեր տէրտէրն ա, գուք սրա տանն էք: Էս էլ (ցոյց տալով) իմ քեանդ—խուզէքն են: Հենց որ լսեցին թէ՝ մի բարի աղայ ա եկել գեղս—ամենքն էլ ուղեցին տեսութիւնդ:

«Շնորհակալ եմ. Լու տէրտէր էք ունեցել, իշխաններդ էլ խելօք են երեւում: Առաջ եկէք ինդրեմ, մի քաշուէք: Տէր հայր, համեցէք, գուք էլ նստեցէք:»

Օրհնեալ լինիս, որդի, սիրտ առաւ տէրտէրը. ծառաներդ հէնց բոլորեքեանք էլ խելօք են, մեծի լսող, ձեր գուլլուղին պատրաստ:

— Պատրաստ ենք, աղա շւան, պատրաստ ենք, կամաց ձալն հանեցին ամենքք:

«Սիրելիք, ասաց անձանօթը շարժվելավ, ևս ուրիշ աղաների նման զուլուղներ չեմ պահանջելու. իմ ուղած գուլլուղի համար գուք ոչ թէ միայն պատրաստ պէտք է կենաք, այլ և ուրախ: Այդ գուլլուղը գուք ձեզ կ'անէք ու իմ սիրու կը շահէք: Ես որ ձեր լաւը ուղեմ, գուք չէք ուղիլ: Ով իր վատը կ'ուզի: Բայց

եթէ մարդիկը այս բանը չեն հասկանալ, նրանց էլ ուրիշ կերպ կարելի է հասկացնել:» Վերջին միտքը խօսողը այնպէս կամաց ու արհամարհանքով արտասանեց, որ տանուտէրը մոռացաւ իր պատրաստած պատասխանը: Տէրտէրը շուտ վրաբերեց—

— Աղա որդի, «որ ոչ լուիցէ ունկամք՝ լուիցէ թիկամք.» Էս իմ ամենօրուայ խօսքն ու խբատն ա: Օրհնեալ լին՛ք, որ ուրիշ մեծաւորի նման հպարտ չէք, ոչ էլ աչքդ խալխսի ջրին ու ձեռին: Ամեն տեղ ժողովուրդը լաւ մարդին պէտք ա լսի: Իմ աչքին գուք շատ լաւ մարդ էք երեւում: Ասեցէք, ով էք, ինչ ա ձեր բան ու գործը, ասաց տէրտէրը ու ոտքը մի քայլ լաւաջ գրեց:

«Տէր հայր, այդ ամենը շուտով կ'իմանաք, միամիտ մնացէք: Տանուտէրը ինձ պատմել է, թէ դու ինչ պէս լաւ ես հովում քո ժողովուրդը և լաւ ուսումնարան ես հաստատել:»

— Աղան զան, մէջ ընկաւ Օսէփը, մեր տէրտէրը ուրիշների նման չի. սրա ամեն մի խօսքն էլ մեզ համար սուրբ ա, յոյս ա ու մեր աչքի լոյսն ա: Քանի ուժ ունէր, ինքը մեր երեխանցը կարգացրեց. Հիմի մեր գեղումը ով որ «այլ ըէն» գիտի՝ տէրտէրիս շնորհքն ա. ամա թնչանես՝ որ սա թէզ պառաւեց, լեզուն ա՝ որ խօսում ա—ուժ չը կայ: Փառաց կենալ ինքը. մի ուսումնագէտ տիրացու գտաւ ու ուսումնարան բաց արեց:— 60—70 երեխէրք կարգաւմ են էս գեղումը: Ով որ էսպէս ուսումնարան կ'ունենայ՝ նա պարծենալ:

Անձանօթը մի քանի վալրկեան լուռ մնաց ու տէր հօրը էլի խնդրեց. «Նսակիր աչ կողմիս, նստիր, մի քաշուիլ, մենք էլ քո տանն ենք:» Տէրտէրը նստեց:

«Վարժապետը լինչպէս մարդէ, շարունակեց անծառօթը. ո՞րտեղից է, երեխանցը լաւ է կարգացնում:»

—Աղա որդի, նա ըստամբօլի երկրիցն ա, լաւ մարդա. երեխանցից որն առաջա, որը՝ լետ: Խեղճը լաւ ա աշխատում. ի հարկէ իր գիտեցածից աւելի ինչ կարողէ սովորացնիլ: Ես ել մի—մին վերահասութիւն եմ անում: Եդ մարդի ոտք աւելի պինդ կապելու համար՝ տանուտէրի աղջկալ վրա նշան դրինք, ու շուտ կը պսակենք: Որդի աղա, թէ մեռնիլ չեմ՝ մի օր ել տէրտէր կը շինեմ իմ տեղը...

—Աղա ջան, խօսքը կտրեց տանուտէրը, մեր Վարժապետը անգին ա, ինչ ել որ տանք՝ հափուռը գէմ ա անում: Ասես ոչ՝ թէ փէսին գովում ա, աշխարհքը կը վկայի:

«Լաւ, տանուտէր, կանչիր, տեսնեմ:»

Տանուտէրը դուրս ծլկեց: Սալին՝ որ մինչև հիմա լում էր՝ մէջ ընկաւ.

—Աղա ջան, հիմի ել ես խօսամ: Եդ մարդին տէրտէրը անիլլաջ տեղը պահեց, թէ չէ՝ դա մեր փանդ չէր: Ոնց որ արանի եզր սարի եղան հետ լծան տակին չի կարող գիմանալ, ենսիւ ել եդ մարդը մեզ հետ: Ես խօսքը ես շատ վաղուց եմ ասել, ամա ինձ ասել են. «Սալին որ լաւին չամսնենք, վատին ել խթ ձեռնաթող անենք. լաւ բանի մայէն փիսն ա, մինչև փիսը անց չի կենալ՝ լաւը գլուխը չի բարձրացնիլ:» Ես ել սուս եմ կացել... խօսքս բամբասանք չի, աղա ջան, տէրտէրի առաջին եմ ասում:

—Որդի Սալի, շաքար ես ուտում, տաց տէրտէրը. տեսնում ես, լաւն ել մեր աղէն ա, սա կը գալ ու մեր գեղումը կը մնալ: Պէտք ա վատիցն սկսենք, որ լաւին հասնենք, թէ չէ՝ լաւին մանեկողը ջուխտ ոտով կը

խրուի ցիսի մէջը: Ով որ իրան տըխին տնազ կ'անի, նա փոկացու կաշի ել չի գտնիլ: Աստծու տուածից շնորհակալ կացէք, որդիկ, չունքի Նրա կամքն ա ամեն տեղ:

Աալին ասելու բան շատ ուներ, միայն ելի պահեց—մօտի կանգնողների երեսին նայելով:

—Հիմի, Սալին ջան, շարունակեց տէրտէրը, էս իմ աղա որդին, էս խելօք մարդը իմ ու քու մէջ թող խօսա: Ախը երբ էք տեսել, որ լաւ վարելահող ունեցողը շարչարուելով տակուռւ թամբը—ցաքի, ոզնի, ալաժահը ու փշնուռտի տակուներ դուրս տայքատինքը ծլլացնելով: Ե՞րբ էք տեսել, որ եզն ունեցողը գութանումը էշ լծի, ան թէ փաղատէր մարդին՝ խարջն ու բէգառը ժամանակին չը հասցնելու խաթէր՝ եսափուլը թակի ու ասի՝ թագաւորի խարջը տնւը, ծայցո, ձավայ... Սկի ոչ մի վախտ: Վայ խեղճ մարդին, վագլամի ծոյլ մարդին: Ով որ լաւը չունի, ով որ անձար ա մնացած, հալիկուն՝ նա գլուխը պէտք ա թէքի վատի առաջին ել: Զուրն ընկածի, խեղտվաղի փրկութիւնը մի ճիւղն ա, մի թուփ ա, մի քար, չունքի՝ ոտք ցամաքումը չի. Բնչ կ'ասես: Մեր հիմիկուան ժողովուրդը եդ օրումն ա, Աստուած էգպէս ա կամեցել: Մեր երեխէրքը հիմի ինչ ել սովորեն, իրանց բոլ ա, միայն թէ սովորեն. թող յետոյ նրանք իրանց որդոցը շատ կարգացնել տան: Հիմի մեր վարժապետը մեզ հերիք ա: Աստուածանից ինքը որ մեր թոռները մեզանից աւելի բաղդաւոր ըլեն, աւելի լաւ վարժապետ ունենան, ս. Ներսէսի ու մեր անգին պապերի օրին հասնեն:

Տէր հօր զբուցը ասես թէ մոռացնել էք տալիս անծանօթին իր լոգնած լինելը. նա ամենալին հաճու-

թեամբ լուսմ էր ծերտնում, առանց կտրելու նրա խօսքի թելը:

— Ամեն գեղ էլ, շարունակեց նա, նախանձվում ամեր վարժապետի վրայ: Նրան սիրտ տալն էլի մեր խերն ա: Խելօքին էլ որ շատ գիտ ասեն՝ կը գժուի: Դրուստ եմ ասում՝ թէ սուտ, աղա որդի, դու խօսի:

«Տէր հայր, բոլոցն ուղիղ ես ասում. միայն թէ՝ որ դուք ուղենաք, աւելի լաւ վարժապետ կունենաք: Ով որ ուսումն սիրում է, ով որ գիրք կարդալը ամեն բանից բարձր է համարում, նա պէտք է ոչինչ չը խընալի գիտութիւն ձեռք բերելու համար: Ծոյլ ժողովուրդը ոչ թէ միայն չուներ, այլ և զրկուած կը լինի աշխարհիս ամեն բարութիւնից. Նրա համար կեանքը, միիթարութիւնը, ուսման սուրբ խորհուրդները գոռշ չ'արժեն.»

— Զէ, աղա որդի, իմ ժողովորդը ոչ ծոյլ է, ոչ չուներ: Իմ որդիկը Քրիստոսի գառան նման են: Հաւալ կ'աշխատեն, հալալ կ'ուտեն: Սրանք իրանց խէլ ու շառն էլ լաւ են հասկանում: Որ էսպէս չը լինէր՝ ես ինչպէս կարող էի ուսումնարան բաց անել: Որ էսպէս չը լինէր՝ ինչի հազար տեղից վարժապետին աղջիկ էին տալիս. էս կը նշանակի՝ ուսումն սիրում են մերոնք: Էս գեղի մեծ մասը իրանց ազգ—անունը ձեռք քաշիւը գիտեն, գրի սե ու սիպտակը ճանաչում են, ամա ասենք գեռ պտուղ չեն տալիս, չունքի՝ պտուղ տալու համար ծաղիկ չ'ունեն: Մէնակ իմ որդիկը չեն լաւ, ամեն հայ գեղացի էլ լաւ ա, խոնարհ ա, լսող ա, նամուսով ա, հալալ ա... ամա ափսնս, որ օրինաւոր ուսումն տվող, իրատող, բանագլխի դնող չ'ունեն: Խեղճ որդիկս ինչ աղի, ինչ հարստի էլ բարեկամ են ճանաշել, նա

հարամի աղառել, իրանց ջանին ընկել, արնաքամ արել: Ես էլ միշտ կողքին կանգնած՝ աչքս վրէն, ականջը ձենու, ձեռս չանիս տակին դրած, սիրտ կտրատվելով մտիկ եմ արել, լեզուս փորս քցել... Աղա որդի, էն հարուստները, էն վաշխառուները, էն սալտկաւորները ինչեր ասիս՝ որ չե՞ն անում.»

Վերջին խօսքում տէր հօր աչքերը ջրակալեցին. նա գաւազանի վրայ գիմհար տուեց, զլուխը կախ քցեց: Անձանօթը նկատելով նրա սրտի ամբոխմունքը և ուզելով պարզել իր գալու պատճառը՝ խօսեց.

«Տէր հայր, այդ բոլոր ցաւերի ճարը ուսումնաբանն է: Ոչ մի զօրեղ միջոց չի կարող գիւղացուն այդ գրութիւնից հանել՝ բացի ուսումնարանից: Երբոր մեր երեխաները լաւ ուսում կ'առնեն, կը մեծանան, էլ չեն ընկնիլ վնասակար մարդկանց ձեռքը: Լաւ ուսում առնել—լաւ վարժապետ է հարկաւոր: Լաւ վարժապետը նժոյդ ձիու շատ նման է: Եւ այդպիսի վարժապետ պահպանելու համար առաջուց պէտք է փող պատրաստել: Այժմ աշխատանքը թանկացել է. որքան թանկ են ապրելու համար կենսական պիտոյքները: Ամեն գրագէտ չի կարող երեխայ կարդացնել՝ նպատակին համեմատ: Երեխայ կարդացնելը որքան հեշտ է թշվում իւրաքանչիւը գրագէտին, այնքան աւելի գժուար է ճշմարիտ ուսումն առաջի համար նրա կշիռը: Երեխան ապագայում երջանիկ կը լինի թէ անբաղդ, վարժապետի ընաւորութիւնն ու մտաւոր զարգացման աստիճանը այժմէն կը վկայեն: Վարժապետը ամենակաթոգին մայրը պէտք է լինի այն մատղաշի համար, որ գեռ կը թվելու, զարգանալու և աճելու կարօտ էր. նա կարող է այդ փոքրիկին արմատից չորացնել և կամ զօրացնել:

Որպէս զի մեր երեխաներն աւելի զօրանան ու աճեն,  
որպէս զի մեր երեխաները հիմնովին զուրկ չը մնան  
կը թութիւնից և թէ ամեն հայ գիւղ ունենայ իր հա-  
մար բարեկարգ ուսումնարան, ահաւասիկ ես եկել եմ...»

Տէլտէրը գաւազանի վրա դեռ լինուած՝ կուընթնած  
էր: Եէմքում կանգնածները անծանօթի զրոյցը լսելով՝  
զլուխները շարժում, իրար աչքով — ունքով էին անում:  
Խեղճ գիւղացիք երբ էին լսել ալգակո զրոյց: Հէնց որ  
խօսովը լոեց, դրսեից ոտի թմփթմփոց լսուեց: Ներս  
մտաւ տանուտէրը, մի քանի ուրիշ իշխաններ և վար-  
ժապետը:

— Աղա, ասաց տանուտէրը, ոա ա մեր վար-  
ժապետը — քու ծառան:

Վարժապետն ուզեց անծանօթի աջը համբուրել —  
մերժուեց:

« Ալստեղի վարժապետը դու ես: »  
— Այն, եսիկ եմ, ոտացդ հողը:

« Ի՞նչ տեղ ես ուսում առել: »  
— Եսիկ ուսումնարան չեմ եղած, մեր գեղի տէր  
հօր քով կարթըցած եմ տէտը, սաղմոս, ժամագիրք,  
նարեկ, աւետարան... մէլմ ալ որբ Մատիլդա... »

« Ե՞լ: »  
— Ել գեղին սանաթները կու կարժամ, կու գըեմ  
վարց ու ոսաց լեզուն ալ քիչ մը գինամ:

« Ո՞րտեղից ես սովորել գու վրաց ու ոսաց: »  
— Սխալքալաքէն երբ իջայ նէ դէսի Մանզիկ,

Հօն տէրտէրի քով մնացի, ժամ կ'ասէի. նա ալ զիս  
կը կերակրէր. անօր զաւակը աղէկ կու հասկընար աղ-

երկու լեզուին գիրը. նա զիս աղ երկուքը զլիսու կը  
ձգէր, ես անօր աւետարանէն կու սորվեցնէի: Ե՛չ, ետքը  
կարթըցի, կարթըցի ու քիչ մը բանու նման եղալ:

« Լաւ: Երեխանցը ոնց ես կարգացնում, ծեծելով  
թէ առանց ծեծի: »

— Աղաս, ինչ կը զուրցէք: Առանց ծեծի փան մը  
կ'եղնիք, կարեն դաս փերան ընել: Փորձով գինամ՝ ծե-  
ծը տղոյցը խէլ մը շնորհիք կուտալ:

« Քանի՞ տարեկան ես: »  
— Ըշտէ կ'եղնիմ եռառուն տարիքի:

« Ամուսնացած ես թէ ոչ: »  
— Ճէչ, պարտական ըլլամ՝ թէ սուտ խօսիմ:

« Ի՞նչքան ոսմիկ ես ստանում: »  
— Տէր հարս գինա, հարցուցէք:

— Արդի աղա, նրան օգնեց տէրտէրը, եղ մեր բանն  
ա, ինչ որ տալիս ենք՝ ստանում ա: Մենք աշակերտների  
ծնողաց կարողութեան վրա էլ աշակերտների ենք  
անական վեց, չորս, երկու շահի ու ձրի: Ամիսն էլ մի  
տասը մանէթ հաւաքպում ա: Մեր խելքը էսքան կըտ-  
րեց, էսպէս կարգագրեցնք:

Անծանօթն էլ ոչինչ չը խօսեց. երեք բոպէի չափ  
մտածման մէջ ընկաւ և կրկին զլուխը բարձրացնելով  
ասաց.

« Շատ լաւ էք կարգադրել. ամեն գործի սկիզբը  
դժուար է: Լաւ վարժապետ պէտք է պահէք, լաւ ոս-  
միկ տաք, որ նա էլ սրտով աշխատի, աչքը ուրիշի ջրին  
ու ձեռին չը պահի: Սլժմ ես ձեզ բոլորիդ էլ լայտ-  
նում եմ — տէզիցը կանգնելով — որ ես թէ մտան վե-  
րատեսուչ եմ բարձրագոյն չոգեսը իշխանութիւնից  
կարգած: Վարժապետէրի նշանակողը, հաստատողը, տեղ

տվողը, տեղից գուրս անողը ես եմ. այդ իրաւունքը ինձ  
է տուած: Վաս վարժապետին պէտք է գուրս անել,  
նրա տեղը ուսեալ մարդ նշանակել: Տանուտէր, առաւո-  
տեան ժողովրդին հրաւերի ուսումնարան և յայտնիր,  
որ «ուսումնարանների Վերատեսուչն եկել է և պէտք  
է աշակերտաց հարցաքննէ. չը մոռանաս:» Այժմ թողէք,  
որ մի փոքր հանգիստ առնեմ—շատ եմ լոգնած: Ամենքդ  
էլ ազատ էք:»

—Աչքիս վրա, աղա ջան, ասաց տանուտէրը:

—Գլուխ տուին, գուրս եկան:

Մինչ կես գիշերը գգիրը գիւղն ընկած, տնէտուն  
ման գալով, ձէն էր տալիս.

«Առաւօտն ոչ ով ուրիշ տեղ չը գնայ. մի մեծ ա-  
զայ ա եկել, բան ունի ասիլնւ. պէտք ա հաւաքուէք  
ուսումնարան: Ով որ չի գալ, քոխվէն նրա դատաս-  
տանը կ'անի՛: Լսեցէք, իմացէք...»

Խեղճ շներն էլ հանգիստ ու դադար չ'ունէին գըզ-  
ըի դագանակի հարուածներից:

—Ի՞նչ աղա պէտք ա ըլի, տէր Աստուած, մտմը-  
տում էին լսողները. էս ձին—ձմեռը ով ա գժվել մեր  
գեղը գայ, էս սարերի ցուրտը կուլ տայ: Սկի պլիստաւը՝  
ռաշիդ ձին տակին՝ հիմի սիրտ չի անում ման գայ, էդ  
ինչ աղայ ա՝ որ գլխիցը ձեռն ա վերկալել, թիփուցն  
ու բորսնիցը չի վախեցել, արջի ու գէլի մտիկ չ'արել,  
եկել ա: Զէ, հալբադ արդար մարդ ա, միտքը բարի, որ  
սաղ—սալամաթ տեղ ա հասել: Լաւ, լաւ, այ գգիր,  
զլուխներս մի տանիկ՝ ոնց որ խալիս, մինն էլ մենք:»

Այսպէս զզիրը էր պարտքը կատարեց, հաւ ու ձու  
էլ ժողովեց, տանուտէրի մօտ գնաց:

Ինչպէս ուրիշ, նոյնպէս և այս գիւղում ձու, իւղ,  
վառիկ էին ժողովում, երբ մի մեծաւոր կամ իշխանա-  
ւոր էր եկած լինում: Մեծաւորի անունով ժողովում,  
մեծ մասն իրանք էին անուշ անում...

## ՀՅ.

### ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

«Քեզ մատաղ, վարժապետ ջան, նոգույ մեռնեմ»

Տէր—Ղուկասը առաւօտեան թեմական վերատեսչին  
քնած թողեց, ինքը գէպի տանուտէրը գնաց. նա երեսը  
նոր էր լուանում:

«Բարի ողջոյն, պարոն Օսէփ. քունդ անուշ:»

—Փառոց կենաս, խօսքդ անուշ:

«Ի՞նչ արեր, խօսեցի՞ր:»

—Իրիկունը իշխաններիս չետ խօսեցի, ամա ըլ  
կարացի բան հասկացնել:

«Քու խօսին աւելորդ ա ըլել, որդի. խալիս հէնց  
կ'իմանան թէ՝ դու քու փէսին պահելու խաթէր ես  
խօսում ու կը ծռուեն. թող, հազիր մեծ վարժապետը  
եկել ա, ինչ որ պէտքն ա՝ նա կը հոգալ, ես էլ նրան  
օգնական: Միայն էս մարդը բարկացող ա երևում, խալ-  
խին իմաց արա, որ աւել—պակաս խօսող չը լինի մօտը—  
սուս կենան, լաւ լսեն: Անըթ. մոռացել եմ. աչքդ  
լուս: Գործակալիցը էրեկ աղջկանդ պսակի հրամանը  
ստացայ ու մի լաւ նամակ, որ զրում ա՝ թէ վարժա-  
պետին ուրախութէնով պսակեցէք, յետոյ էլ կը կանչեմ

էստեղ՝ տէրտէր ձեռնադրած լետ կ'ուղարկեմ: Վարժապետի կշտին կարգացի, ուրախացաւ: Թող էս մարդին ճանապարհ դնենք, քեզ մօտ էլ կը կարդամ ու, ինչ որ հարկաւորն ա՝ կանենք: Հիմի դու գնա խալսին հուաքի, ես էլ լետ տուն դառնամ:»

Նրանք իրարից բաժանվեցին:

Անցաւ մէկ ժամ: Ձմրան խաւար մառախուղը արեի երեսից չէր հեռանում: Գոմ—ուսումնարանի սրահում ամբոխը կանգնած, սպասում էր: Իւրաքանչիւր ոքին նոր մարդի գալուն ու նրա այն աստիճան հետաքրքիր լինելուն մի կերպ բացատրութիւն էր տալիս: Մի քանիսը կարծում էին՝ թէ նա եկնդեցու, ուսումնարանի ու վարժապետի անունով խօսելով գուցէ ուղում է միամիտ հասարակութեան գլխին մի խաղ խաղալ, մի մեծ խարեւայութիւն գործէլ, որպիսին արել են շատերը: միւսերը հակառակն էին պնդում և մեծ բարիք սպասում նրանից, այսպէս կարծողները Սալին, Վարդանը և ուրիշ մի քանիսն էին, որոնց խօսքը ամբոխի համար թեթև նշանակութիւն ունէր: Մեր գիւղացիք որովհետեւ միշտ վատ դէպքերի են սպատակած, աւելի շուտ են թէքվում գործի կամ անձնաւորութեան մասին վատ կարծիք յայտնողի կողմը: Ուր է սեփհական համոզմունք, գիտակցական ուժ...

Օբշնուած տանուտէրը էլ չէր կարողանում բանն ուղիղ սլարգել, միայն այսքանն էր ասում: «Դրան հոգեւոր տէրն աղքէլ:» Այս խօսքը մեծ գրաւական էր ժողովրդին տրամադրելու համար, թէ անձանոթը ուրեմն չար մտքով չի եկած լինիլ այս գիւղը:

— Երնակ ըտէնց ըլի, ասում էին հասկացողները, եադ մարդ չըլի: Հոգեւոր տէրը մեր զլիի տէրն անրա մարդն էլ մեր տչքի վրա տեղ ունի: Ամա արի տես՝ որ մեզ խափի ու ծուռ միտք ունենալ...

— Որ ըտէնց ա, որ ձեր երեսի աչքն էլ ա քոռ, ինելքի աչքն էլ, ձեզ մուզալիթ կացէք. եղնա ուրիշի սաբար չը բռնէք, ասաց Սալին ու ներս մտաւ զուտումնարանը:

— Դուք սուս ու փուս կացէք, նրան լսեցէք, խօսքիցն ու ջուղաբիցը նրա միտքը մալում կ'անի: Ես ձեզ չեմ մեղագրում, իրաւունք էլ ունէք ըգէնց բաներ փիքը անկիւտ. ասում ա՝ չալ օձից կծածը չալ չաթուից կը վախի: Այս... Հրէս տէրտէրի հետ գալիս ա, ես մտնեմ ուսումնարան, վարժապետին խմաց անեմ, որ երեխանցը հաւաք պահի:

«Տէր ողպրմեա» — կմկմացին երկու ծերունիք:

«Աստուած խէրը վրաբերի» — ասացին մի քանիսը:

Ամեն ինչ իր տեղն էր: Յրուան մառախուղ սրահում կանգնող ամբոխը՝ որ բաց դրնից լուս թափանցելուն արգելք էր լինում, աւելի էին միջնացնում դոմուտումնարանը: Երգիկց ու աղբածակից այնքան լուս չէր մտնում: Աշակերտները աջ ու ձախ կողմից տիսուափէտերին, մի կարգ էլ գոմի երկայնութեամբ շարած քարերին նստուած՝ սովորական ձայնով կարգում էին: Վարժապետը աշակերտներին առաջուց մի համառուստ ծանուցում էր արել այդ մտքով: «աստեղ մէկ չինովնիկ մարդ է գալու, անոր քով ինձի չը թողուք ամօթով, թէ չէ՝ լեզիքդ կու պատռեմ ու անօր քով գիաթլամիշ կ'էնիմ ձեզի:»

Ամբոխը գլուխ խոնարհելով ճանապարհ տուեց եկողներին, որոնք ողջունելով ներս մտան: Զիբուխի կոթը վարժապետի ձեռին էր մնայած, որ նոր ցից դըրեց անկիւնումը, ուր որ դրած էր փալախէն: Դրսի մարդիկն էլ ուզեցին մտնել, բայց ներսը տեղ չ'եղաւ. մեծ մասամբ շէմքումը մնացին թև էլած, կանգնած ու լարուեցին անցքը տեսնելու—լսելու:

«Սու՛սս... շշ՛շշ...», լոեցրեց վարժապետը երեխանցը. «ըշտէ, ոտքի ելէք:» Հրամանը իսկոյն կատարուեց: Վերատեսուչը մէջ տեղը կանգնեց՝ տէրտէրից մի քայլ առաջ: Նորա աչքերը մութն էր, բատ որում դրսից էր մտել: «Բարեւ ձեզ» ասաց, պատասխան չը ստացաւ աշակերտներից:—Սկնոցները մաքրեց, աչքերը ազաղեց ու իր առաջը՝ խաւարի մէջ նոր տեսարան բացուեց... Առ ժամս մի քանի ըոպէի լուութիւնը խորհրդաւոր էր նրա համար: Նա աջ ու ձախ դիտում էր այն ամենը՝ ինչ երեսում էր աչքերին: Նրա ալնքան հետաքրքիր հայեցքներն ու ակնարկները վկայում էին, որ խեղճը ինչ որ չի տեսել, այժմ տեսնում է: Վարժապետի հրամանին համաձայն՝ աշակերտները ձեռքները կոծքին դրած, գլուխները կախ, էլ ոչ ովի չէին նայում.. Ամենքն էլ գրքերը իրանց առաջն էին գրել՝ անմաքուր յատակի վրայ: Վարժապետը շուտ շուտ լսեցնում էր նրանց, թէ և շարժվող անգամ չը կար և ցուցամատի շարժելով մինին ու միւսին սպառնում էր: Սպանդանոցի այլանդակութիւնն ու գարշահոտութիւնը, վարժապետի անճոռնի ու կատաղի գիրքը, ժողովրդի միամիտ ու քաղցր ակնկալութիւնը և մատղաշ ու անպաշտպան երեխանց գառը վիճակը նրա սիրտը խոր խոցուեցին. նո կարծես կարդում էր մանուկների ճա-

կատէն մի շատ ցաւալի նկարագիլ. կասես գոմի ախոռներն ու պատի մամուռտած քարերը լեզու առած՝ սգաւով ափսոսում էին երեխանցն ու «նախատինք» կարգում զարգացած, ժամանակակից ուսեալ, բայց սուտ փայլող երիտասարդութեան զլիսին. իսկ եթէ անդութը չը սպառնար ու թողնէր երեխանցը ազատ նայելու, ազատ շնչելու, նրանց մանկական սիրտն էլ անշուշտ կը զգա՞՝ որ մօտ է իրանց բարօրութիւնը, որ «կենսատու աղբիւրը» իրանց առաջը կանգնած է:

Վերատեսուչը. նկատեց գահիճ գործիքներից մի քանիսը—վալախան, ծէ պլիները, կանգառ փշատունչը, չիբուխի կոթը՝ անգլակի, կաղնի տախտակէքանոնը՝ ծանր մուրճի պէս և այս ամենը նրան լիշեցրին ինկվիզիցիական գալելի սիստեմը..

Նա էլ չուզեց երկար մնալ արդտեղ. նա ուզեց իսկոյն և եթ հեռացնել—գուրս խակել խալիքալին, բայց ի նկատի ունենալով, որ դրանով իր սպասելիք գործին կարող էր աւելի վնասել, միտքը փոխեց և խոհեմ ճանապարհ որոշեց: Ինչ տարակուս, որ առանց ամբոխին առաջուց համոզելու ոչինչ չէր կարող գլուխ բերել և զուր կուսակցական հոգի կը մտցնէր նրանց մէջ:

Տէր հայրը կամաց մօտեցաւ ու վերատեսչի ականջումը երեխ այս ասաց. «ցուրտ ա, գուռն էլ բաց աւելի կը ցըտի, շէմքի մարդիկը կը մռսեն:»

«Տէր հայր, ասաց նա, երեխանցը ժողովիր գոմի մէջ տեղը՝ երգի գիմացը՝ լոյսի առաջը, հարցնենք, տեսնենք՝ ինչ զիտեն»:

Տէրտէրը վարժապետին խնդրեց: Մի աչքաճպելումը երեխալիքը խմբուեցին՝ իւրաքանչիւրն իր գիրքը բռնած:

«Երեխէք, ասաց վերատեսուչը ժպտալով, ամենքդ էլ իմ երեսին մտիկ արեք... Չեզ եմ ասում. աչքներդ իմ աչքերին քցեցէք...» Բայց աչ, նրանք զլուխներն անգամ չը բարձրացրին, սպասում էին վարժապետի հրամանին:

«Դու, փնքքիկ — մատով ցոլց տալով ձայն տուեց մէկին — անունդ ինչ է:» Երեխան մնաց անշարժ:

«Դու ասա, տղա, քո անունն ինչ է, դիմեց երկրորդին. ասա՛, մի վախիլ:» Առ առ մնաց անտարբեր:

«Այ տղա, դու խօսիր, դասդ ո՞րն է» — երրորդին դիմեց ձեռքը զլուխին քսելով. բայց երեխան ջուխտ ձեռքը դէպի զլուխը թռցրեց ու երկիւղից կուչ եկաւ:

«Տէր հայր, ինչ՝ պատասխան չեն տալիս»:

— Աղա որդի, էդ նրանից ա՝ որ վարժապետը չ՝ հարցնում:

Վերատեսուչը «Հըմ» արեց ու մոլորուածի սկս եղաւ:

«Երեխէք, կըկին անգամ դիմեց բոլորին, ամենքդ էլ ձեր զերքը բաց արեք, սկսք է կարգաք:» Այս խօսքում նա աչքը քցեց վարժապետին, ուր կարեռը համարեց:

«Չօ, հարիֆ, ձեզի կ'ըսեմ.. ամեն մէկդ ձեր զերքը բացէք ու կարթըցէք:» Ողորմելիքը ինչպէս շուտով ընտելացել էին կուօի բառբառին: Շըբիկ ու շըթիկը ընկաւ նրանց մէջը: Բարձր ձայնով ոկուեց «բան-բնու-լէմէ..» Մէկ մատղաշ երեխայ, կաղլիկ գառան նման, վրա չը հասցրեց զերքը բանալ ու շուտ կարգալ. «Հայ, կողորվիս» — զոռաց վարժապետն ու մէկ ապտակով վռազգրեց նրան:

«Մի խփիլ» — զրաբերեց վերատեսուչը, որի ձայնը կուլ գնաց երեխանը զլվլոցի մէջ. նա հրամայեց՝

լու ել, լոող չեղաւ. և նայեց տէրտէրին, ուս էլ վարժապետին:

«Չօ, փաթլամիշ կ'էնիմ. ձօ շշը...» Եւ խոկոն լուսթիւն:

«Դու, ասաց վերատեսուչը մէկին, քանիք տարեկան ես:» Տէրտէրը վարժապետի երեսին նայեց ու աչքով մրեց.

«Չօ, Մարգար ես, ինչ ես. ըսէ քո տարիք:»

Մարգարը լուռ մնաց: «Ըսէ, չաթլամիշ, քանիք տարիքի ես:»

Տանը չորս կ'ըլեմ:

«Դէ, հարիֆ, ըսէ գրաւստը» — զոռաց վարժապետն ու Մարգարի մազերը ձեռք քցեց: Վերատեսուչը տամները կրծացնելով ուզեց անգութի ձեռքը բռնել, երեխան կարծեց թէ՝ նա էլ զլսի միւս կողմի մազերն է ուզում ճանկել, կծկուեց ու ձայն հանեց. «Չեզ մտադ, տասնիրեք տարեկան եմ. հոգուդ մեռնեմ..»

«Ձեռք քեզ քաշիր, անպիտան» — զոռաց վերատեսուչը ու աչքերը սեռուեց տէրտէրի վրայ:

— Վարժապետ, որդի, աղէն ինչ որ կ'տսի, էնսպէս արա. առանց որս խօսքի բան մի անիլ: Բայց վերատեսուչն էլ բան չը հարցրեց. նա իրօք տեսաւ այն ամենը՝ ինչ որ ինքը մինչ այժմ երեւակալում էր:

«Տէր հայր, հարցրեց նա, ինչ՝ երեխանց զոյնը այսափ թռել, գեղնել է: Սարի երեխաւը միթէ ալսպէս ընկած պէտք է լինեն:»

— Պրա պատճառը, որդի, վարժապետը կ'իմանալ. սրանք գիփ իրան կշտին նն՝ իրան ձեռի տակ. ինձ ուր ես հարցնում: Այս պատասխանից լետուի ամենքի աչքերն էլ վարժապետի վրա ընկան:

— Գիրք կարթըլու զօռէն քիչ մը կու չարջուին ու պատիժներ կ'ուստին, բացատրեց վարժապետը, աղոր համար տղաքը ադպէս նուազ կ'երևին. Տարի մ'ալ կ'անցնի՝ ամեն փան կարգով կ'ըլլալ, տղաքն ալ ողջ ու առողջ...

Վարժապետը զուր էր աշխատում համոզել նրանց Վերատեսուչը երեսը դարձրեց գէպի տանուտէրն ու ասաց.

«Վարժապետը երեխանց մանկութիւնը փչացրել, թունաւորել է. սա էլ չի կարող ալս կերպով վարժապետ լինել: Ես խնդրում եմ, տանուտէր, մի տեղ որոշչէք, վաղը հրատիրեք բոլոր ժողովրդին այնտեղ: Ես էլ կը գամ ու հարկաւոր կարգադրութիւնը միասին կ'անենք. լսեցի՞ր: Տէր հայր, խնդրեմ դուք էլ օգնէք տանուտէրին, վաղը անշուշտ հասարակաց ժողով կազմենք. ու այս ուսումնարանը բարեկարգենք:»

Տէրտէրը տիրադէմ զլուխը կախ քցեց: Տանուտէրն էլ որ լսեց վերատեսչից թէ՝ «սա չի կարող էս կերպով վարժապետ լինել»—զլուխի որդը շարժուեց.

«Ո՞նց ես հրամայում, աղա ջան. խալիխին հաւաքեմ, որ խորհուրդ անենք ու վարժապետին դուրս անենք:»

—Այդ իմ գնրծն է. միալն դու խօսքս կատարիր. Տէր հայր, դուք էլ խնդրեմ երեխանցը տաեք, որ այսօրուանից ամբողջ երկու շաբաթ ազատ են. թող տանը հանգստանան ու յետոյ նորէն էլի կը գան ուսումնարան: Ես բերել եմ մատիտներ, գրիչներ, գրչակոթեր ու ռետիններ, ստացիր իմ ծառալից՝ որ դուրսը կանգնած կը լինի, և հաւասարապէս բաժանիր երեխանց վրայ: Թող ուրախանան և երկու շարթից յետոյ՝ երբոր էլի կը

ժողովուեն՝ ես սրանց համար կ'ուղարկեմ դասագրքեր ու գրելու թղթեր:»

—Աստուած կեանք տակ, աղա ջան, շէն կենաս, որ մեր երեխանցը զատ էլ ես բաշխում, լսվում էր շէմքի մարդկանցից:

Տէր հայրը ստացաւ թաշկինակում կապած դասական պիտուքը, հասկանալի կերպով ճառախօսեց ու նուէրը հաւասարապէս բաժանեց. ստանող աշակերտը նախ տէր հօր, ապա վարժապետի աջը համբուրում էր: Վերատեսուչը կարգը չը խանգարեց, միայն իր ձեռքը չը թողեց համբուրելու:

Եւ մի քանի ըռապէից յետոյ գոմ—ուսումնարանը փակուեց:

### ԻՊԵ

#### ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ՆՈՐ ՀԻՄՆԱԳԱՐԸ

Միւս առաջօտեան ձիւնը մաղում էր: Գետնի երեսը ծածկուած էր կոճահար ձիւնով: Օրուան փուշը—ցուրտը որ մի փոքր կոտրեց, գիւղի տաւարածները իրանց մողի—մզուրը գէպի մեծ—թափ լերան դոշը քշեցին, որ ծառերի սնքուուը վէր անեն, կոտորեն բարակ ճղները, տաւարին այդ պոխով նկար անել տան: Լծկան եզն ու գոմէշը, ձիաներն ու հորթերը գոմերումը թողեցին. նրանց համար տարմանն ու խոտը պատրաստ էր:

Օրուալ այդ միջոցին Ալէքանց մեծ տանը խմբուել էին գիւղի մարդիկը. նրանք անորոշ դրութեան մէջ՝ աջ ու ձախ խօսում էին.

«Ա խալիսը, տսում էր Սալին, պոխ կտորող տաւարածը ձեզ օրինակ. ոնց որ նա իրես չի պահում, պոխը կտորում ու ածում ա տսւարի աղաքը, որ ամենքն էլ մասնակից ըլեն նրանից, էնպէս էլ դուք էր կու ի ըեսանութին միք անիլ: Իս լաւ բան չի: Իմ կշտին ուրիշ զայդի էք խօսում, մէկէլի կշտին՝ ուրիշ: Խօսքը դռւզ ճակատի մէջ տեղն ասեցէք:—Մեր վարժապետը լաւն ա թէ փիս, մէր տէրտէրն ինչ հունարի տէր ա, մէր քոխվէն ինչ բանում ա մեզաւոր՝ ինչում արգար, ես խթ եմ հուջաթ. էս ամենը ճակատներին կացրէք էլի: Ճակատին որ խօսէք, հենց զիտաք՝ հուջաթ էք տալիս, ան երեսներիդ մեռնը վէր կը գալի, չէ, չէ, իմ ասածն ա: Հայվանի պէս կանգնում էք, լաւ շրվագոցը թողնում, փիս շրվացի աղաքին ծափ տալիս. շատ վախտ դուզը թողած՝ ծուռն էք զնում: Յուն շինուածներ, բա դուք աչքեր չ'ունէք: Ձեզ ճամբա նշանց տվողին, ձեզ հետ կովող—ձեր օգուտը խօսողին էլ առում էք—բարբարշագ ա, կուռաբար ա,,»

—Ես ու իմ Աստօծը, աղբէր, խօսեց Վարդանը,  
Սայնի խօսքերը հրէ աւետարանումը գրած։ Մարդը նա  
ա, ով որ ճակատախօս ա։ Լաւ շունը քամակիցը չի  
մռւալ, աղաքիցը մի հետ «զամփ» կ'անի, ան թէ չէ  
հեռութից հաշելով վրա կը տար։

—Մենք շներ ենք, համ, գեօդակ Վարդան, վրաբե-  
րեց մէկը. ագամ, մեզ շան թաջի էլ շինեցիր։

«Ծունը աշխարհակ շուն տ, մէջ ընկաւ Սալին, ամամարդը որ մարդ չի՝ շանից էլ բէժար ա, իմացար»:  
—Քեզ ասա՞ , Սալի ջան, անկանջիցդ բերանդ չափի,  
սուտն ու շիտակը քեզ այտն կ'ըլի, լիզուդ կը լալի:  
Դու էլ իմացար:

«Թէ սմէս, դու էլ մարգամէջ ես խառնվում. քունն  
էն տ՝ թիթը բազովի ի\*) խաղաս ու տասներկու զայդի  
տմբամբաս. յաւ իմացար:»

Խօսողը սլատասխան չը ստացաւ։ Տանուտերը,  
վարժապետը և մի քանի սլատկառելի ծերունիք իս-  
կոյն ներս մտան, որոնց լոկ ներկայութիւնը ընդհատեց  
մէջը։

«Տղերք, տէրտէլն ու աղեն գալիս են. պատրաստ կացէք, ճամբա տուէք»—ձայն տուեց տանուտէրն ու մի փափուկ բարձ դրեց տախտին:

—Եկան, սնւսէք, սնւս...

Թեմական վերատեսուչը՝ ձեռքին մի քանի տեսրակներ բռնած ներս մտաւ, «բարեւ ամենքիդ» ասաց ու ոտնակախ նստեց տախտի ծալրին: «Տէ՛ր հայր, ասաց նա, խնդրեմ Հրամայէք՝ որ ամենքն էլ տեղն ու տեղը նստեն, իսկ մեծերը կարող են տախտին նստել: Եւ գուին աջ կողմին համեզէք, նստէք:»

Առաջ ծերունիները նստեցին, յետով իշխանները, ապա հասարակ դասը։ Տանուտէրն արգելեց, որ ոչ ով «տէր-ողորմեա» չը համրի և ոչ չիբուլի քաշեն։ Թէմ, վերատեսուչը տեսնելով որ ամենքն էլ իր բերանին են նայում, խօսքը իրանից սպասում, կարեւոր համարեց մի փոքր ընդարձակ խօսել և սկսեց.

«Տէր հայր, սիրելիք, ես երեկ արգեն ձեր ուսումնարանը տեսայ. չեմ խղճահարվում երեխանց անմխիթար վիճակի վրա, ըստ որում՝ ինչ էլ արել էք, բոլորը

\* Φηρούργωκακων μωρούμια μωρούκων ιυαλερίγ μέτιν τι

բարի նպատակով. բայց թէ դուք անգիտակցաբար էք արել—դրա մեղը հանդամանքինն է: Նատ շնորհակալ եմ ձեզանից, տէր հայր, որ պատճառ էք դառել այդ ուսումնարանի հիմնելուն, նոյնպէս շնորհակալ եմ ձեզանից, սիրելիք, որ լսել էք տէր հօր քաղցր խրատները: Տէրտէրի պարտքն է, որ խրատի ու քարոզի. ժողովրդի պարտքը՝ որ լսի նրան: Ի հարկ է, ալէտք է այն խրատները լսել ու կատարել, որն օգտատէտ է թէ մամնաւորի և թէ ընդհանուրի համար: Դուք որ այդպիսի ուսումնարանը այդքան սիրով պահում էք, որքան աւելի լաւ կը պահէք լաւ ուսումնարանը: Լաւ վարժակետը ձեզ լաւ ուսումնարան կը տալ, շատ բան ինքը կը հոգայ. իսկ լաւ ուսումնարանը ձեզ կրթուած զաւակներ կը տայ: Ալժմ, ճշմարիտ է, ձեր երեխաները կարդում են, բայց նրանց կարգացածը քամտատը արտի նման ցորէն կը տալ. որովհետև՝ ուսումնարանը աւազի վրայ է շինած: Խնչ շէնքը հիմք որ աւազի վրա է հաստատած, նա ամուք չի, մի օր վարար սէլաւի ջուրը նրա հիմքը կը քանդի, շէնքը փուլ կ'ածի: Զեր ուսումնարանն այսպէս խախուտ է: Մի բան՝ որ մեր երեխանց սիրտն ու միտքը իմաստութիւնով պէտք է լցնի ու մեզ ամենքիս էլ պէտք է ցոյց տայ լաւ ու բաղդաւոր ասլրելու ճանապարհները, ինչի՞ պէտք է աւազի վրա գնենք նրա հիմքը: Խնչքան որ անուսում մարդիկը ստոր են, նոյնքան աւելի ուսեալները բարձր: Անուսում մարդիկը դարտակ մշակներ են, ինչպէս՝ եղներ, ձիեր ու գոմէշներ, նրանք ուսեալի ամենախոնարհ ծառաներն են, որոնց ապրուաթը խիստ դառն է: Ալժմ ի՞նչ էք կարծում. ովկ է իր չար ու բարին լաւ հասկանում, ովկ իր ցաւերը շուտ կարող է զգալ

ու ճարը գտնել, ե՞ս թէ դուք.... Եկեղեցի էք մտնում՝ չէք իմանում թէ տէրտէրը սեղանի առաջին վնչ է կարդում, որ դուք էլ նրա պէս աղօթէք: Փորձանքի էք հանդիպում, ոչ պատճառն էք իմանում—ոչ ճարը: Մի գործ էք ուսում: բայց ո՞նց անէք, որ օգուտ ստանաք—չը գիտէք: Ուսեալի մօս կուչէք գալիս, նրան էք աղաչում՝ որ ձեր թղթերը զրի, ձեզ մի ինելք ցոյց տայ: Նոյն իսկ գուք չէք իմանում, թէ ինչպիսի հողի մէջ ինչ տեսակ սերմը պէտք է քցել, որ տասնապատիկ սլուուզ ստացուի: Ո՞ր ծառի վրա ի՞նչ տեսակ պատուաստ կարելի է անել, որ ծառն աւելի պըտղաբերուի... բայց այս թողնենք, Հալլաթ մի օր կ'եմանաք: Մեր հոգեոր տէրը—Գիւրի ԶՈՐՅՈՒԹ ԿԱԹՈՒԴԻԿՈՍԸ ինձ նշանակել ու հաստատել է թե մական վերտեսուչ, որ ինչ տեղ հոգեոր ուսումնարաններ կան, բարեկարգեմ, ինչ տեղ չը կան՝ բաց անեմ: Հենց այս նպատակով էլ եկել եմ այս գիւղը: Տիրոջը փառք, Հազար փառք պէտք է տալ, որ մենք մեր աչքերովը կը տեսնենք մեր երեխանց կարգալն ու կը միտիթարուենք. մեր խեղճ սլաղերը չեն տեսել մեզ կարգալիս. նրանք հազիւ թէ ազատել են իրանց ընտանիքի պատիւն ու գոյքը յափշտականէր պարսիկներից, որ այն ժամանակ հայը նրանց ձեռքում գերի էր...

Բայց այս ամենը թողնենք: Ալժմ ձեր գիւղի ուսումնարանը ոչ գրամագլուխ ունի և ոչ ուրիշ մի անսպառելի աղբիւր. ուրեմն և՛ նա նման է մի գութանի, որի առաջին միտյն մի լուծ եզն էր լծած: Պէտք է ութ լուծ եզը թաժամացնել, որ լաւ վար անենք: Ի՞նչ էք ասում, տէր հայր, տանուտէր, իշխաններ, գութանի համար ուժ լուծ եզն ու գոմէշն թէ ոչ...»

— Յըհնեալ լինիս, աղա որդի, ոգևորուած խօսեց տէրտէրը. մէկ լուծ եզը ես եմ տալիս:

— Հաստատ ըլես, աղա ջան, խօսքը կտրեց տանուատէրը. ինչի ա պէտքը մի լծնանի գութանը, մի մըջիւնը նրանից շատ վար կ'անի: Մէկ լուծ եզն էլ ես տուի:

Սալին մէջ ընկաւ.

— Աղա ջան, խօսքդ շաբար ա. խնդրեմ արգ ա առնես: Գութանը ութ լծնանի շինիլը հեշտ ա, ամամացը ըռնելը դժար. մաճկալը որ փիսն ըլի, գութանը թէկուզ տասը լծնանի ըլի—օգուտ չունի: Փէշակն իմն ա, զօրութիւնը ես գիտեմ: Մի ասա, քեզ մատազ, մաճկալն ով պէտք ա ըլի:

Խայնի խօսքը մի խուլ քչփչոց քցեց ամենքի մէջ: Վերատեսուչը նկատելով որ քարոզը զնւր պէտք է անցնի՝ բարձր խօսեց.

«Եղբար պատուական, դու շատ սրախօսն ես երեւում: մի փոքր համբերութիւն ունեցիր: Ամեն բան եր կարդովը կը զալ. ջուրը նորա թուվ են լցնուած, տնաշէն, ոտ խօ ուսումնարանի զարծ է: Դեռ հալամենք գութանը իր սարք ու կարդով պատրաստենք, յետոյ մաճկալի վրա մտածենք: Մեծ մտճկալը ես եմ. ինձ հաւանում չես. ես կուզեմ՝ որ իմ գութանը վատ վարի, խոփը ծնկնահար զետնուածը չը խրուի..»

— Իէ որ ըտէնց ա, աղա ջան, մէկ լուծ ջանով եզն էլ ինձանից ստացիր:

Վարդանը մէջ ընկաւ ժպտալով.

— Աղա ջան, բոլիս կարծ ա, ամա խելքս երկար: Ես էլ մի խօսք ասեմ: Տէրտէրը, տանուատէրը, Սալին մի—մի լուծ եզը տուին. ձեր ասիլով՝ ուսումնարանի

Համար տարէնը պէտք ա մի օրավար վար անենք: Աստուած, երկիննք, եղնանց պահիլը խամթալ ա, վար ու ցանք անիլը եզը պահիլուցը գժար: Դրարացով կը քցեն, վար չեն անիլ, եղնիկը էլ գէլերոց կ'անեն: Վաւ չի ըլի՛, որ մեր ցանածներիցը նազդ տանք, պածնենք ու մեր տուածը գաւթար քցէնք:

Տէրտէրն ուզեց պատասխանել Վարդանին, վերատեսուչը արգելեց ու ինքը խօսեց.

«Հէնց իմ միտքն էլ արտ է, եղբար: Այս մարդիկը խօ, ճշմարիտ, եզներ չեն տալիս, փնդ են խոստանում, որ զրուեն. զրած միջոցին կը յարտնուի՛ թէ մէկ լուծ եզը որքան փող է: Այժմ ես կը զրեմ, միայն լաւ իմացէք, որ իմ զրածը հաստատ է և ով ինչքան զրուի, պէտք է հէնց այսօր վճարի, որ յետոյ էլ ուրիշ բան խօննեք: «Այս ասելով նա հանեց զրիչն ու փոքրիկ թանաքամանը, բաց արևոց նուիրատուաց մտեանը.

«Եղբարք, լնւ մտածեցէք. առաջ ես եմ նուիրում ձեր աղքատ ուսումնարանին քսան ըռւբլի և զրում եմ այսուեզ:» Նա երկու կորմիր տանական ցոլց տուեց ու առաջին վար զրեց:

— Ինձ էլ զրի, աղա որդի, քսան ու հինգ մանէթ. ահան, ել վճարում եմ, ասաց քահանան ու հանեց 25 ականը:

Տէր հօրը հետեւեցին ուրիշ տասը հոգի: Ապա տուրքը իջաւ 20 մանէթի. յետոյ՝ 15-ի, 10-ի, 5-ի, 3-ի և 1-ի: Նուիրատվութեան միջոցը ժամ ու կէս տեւեց:

— Ցնծացէք, ձեզ մատազ, անդադար ձայն էր տալիս տանուածէրը. ցնծացէք, որ Աստօծ էլ մեզ տալ. Նրա սիրտն էլ մեզ համար ցնծալ: Միքանիսը առ ձեռն գրամ չ'ունէին, տանիցը բերին: Մինը միւսին փոխա-

ըինաբար փող էր տալիս: Տանուտէրը մօտ 100 մանէթ սրան ու նրան ձեռացափոխ բաժանեց. նա աշխատում էր լաւամարդի դառնալ, որով և իր փէսալի խալիքայութեանը վնաս չը հասնի:

— Օքհնեալ լինիք, որդիկ, կէս օրը մօտ է. ով ա մնացել, թող տայ ու պոծնի:

— Ամենքն էլ ցնծացել պոծել են, տէրտէր ջան. Համբեցէք, հիմի հեսաբն իմանանք, ասաց Սալին:

Վերատեսչի առաջին՝ տախտի վրա՝ թուզթ փողը դարսուած էր, նրա մօտին էլ սիպտակ փողը: Ամենքն էլ ապուշ նալում էին: Վերատեսուչը տանուտէրի օգնութեամբ համբեց ու գրածի հետ համեմատեց: Գումարը եղաւ 873 մանէթ և մի քանի կոպէկ:

«Ուրեմն, ասաց վերատեսուչը, ձեր գիւղի ուսումնարանը այժմ ունի 873 մանէթ, որ պէտք է անկորուստ պահպանել:

— Աղա ջան, էդ փողը էս խալիսի արինն ա, մէջ ընկաւ Սալին, էնպէս արա՝ որ հարամ ու ըռեխ չ'ընկնի ու մեր տունը քանդուի ոչ...

«Ի՞նչ ես ասում, սիրելիս. սրանից մի կոպէկ ուտողը հազար մանէթով չի պոծնիլ, դուք բոլորդ ել միամիտ մնացէք:

— Հա, քեզ մատաղ, փողի դուշմանը շատ կ'ըլի, դալիմ պահի...

## Ի՞՞ս.

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԻ ԳՈՅՉՈՒԹԻՒՆ ՊԱՀՊԱՆՈՂ ՍԻՒՆԵԲԸ

«Այժմ ուրիշ բան խօսենք»— մի փոքր միջոց տալուց յետով քչփչոցն ընդհատեց վերատեսուչը: «Գուք գիտէք, որ տունը առանց խոհեմ կառաւարչի միշտ կանգուն չի մնալ. ամեն մի հաստատութիւն պէտք է ունենալ իր խնամատար ներկայացուցիչը. ամեն գուշան պէտք է ունենալ իր հմուտ և կառաւարող մաճկալը; բայց ձեր ուսումնարանը ոչ մի պատասխանատու ներկայացուցիչ չունի: Ես միշտ այսուեղ չեմ գտնուիլ, ըստ որում՝ ինձ լանձնած թեմի բոլոր գպրոցներին պէտք է տարեկան երեք—չորս անգամ այցելեմ և հարկաւոր կարգադրութիւնները տեղն ու տեղը անեմ: Դուք ել միշտ լինելու էք ձեր բանին—գործին. ով պէտք է ուրեմն ուսումնարանի վրա միշտ աչք ու խնամք ունենալ:

Վերատեսուչը Սալին սրտիցը ջուր խմեց: — Հա, քեզ մատաղ, էդ եմ ասում, է՛ Ամեն գեադա—գիւղա խօ չը պէտք ա խառնուի էս բանի մէջը: Դէ խօսա, լիզուիդ մատաղ՝ խօսա:

«Դուք ձեր միջիցը չորս հաւատարիմ մարդ ջոկեցէք, շարունակեց վերատեսուչը, ես նրանց կը հաստատեմ հոգաբարձուներ և նրանց կը լանձնեմ ուսումնարանի տնտեսական հաշիւներն ու կառաւարութիւնը: Լաւ մարդիկ պէտք է ընտրէք, որ ուսումնարանի հաշիւները ճիշտ պահպանեն, այլ և ուսումնարանի բոլոր պակասութիւնները խորհրդով հագան, վարժապետին լուր պահպանեն, որոշեալ միջոցին նրա ոռճիկը անխափան տան, բոլոր հաշիւները մի առ մի գրեն

այս մատեաններից մինում և ժամանակին ինձ ու Հասարակութեանը հաշիւ ներկայանցնեն։ Այս ե՞ս իմացէք, որ նրանք միշտ իմ իրաւունքի տակ պէտք է լինեն։ Հասարակութիւնը նրանց ոչ մի գործում չը պէտք է խառնուի, բայց երբ օգնութիւն խնդրեն, դուք ամենքդ էլ պարտաւոր էք օգնելու նրանց ինչպէս որ ամեն մարդի զգին բարոյական պարագ կայ օգնելու բարենպատակ գործերին։ Ես ձեր այժմեան ընտրելի ժարդկանցը ժամանակին դրաւոր հրահանգներ ու պատռւելներ կը տամ, նրանք էլ այնպէս կը վարուեն գործի հետ և կ'աշխատեն յառաջադիմութիւն ցոյց տալ, ի հարկ է, ձեր թիկունքով։ Այժմ ընտրեց էք, եղբարք։»  
Լուսթիւնը տիրեց։ Տէրտէրը բացականչեց։ — Որդիկ, միք քաշուիլ։ Ամեն բան էլ կառաւարիչ ունի աշխարհում։ մեր ուսումնարանն էլ պէտք առնենալ։  
Չորս մարդ ընտրեցէք, ձեն տուէք, ում էք ընտրում։

Եէմքի կողմից ձայն ածեցին։ «Մինը Սալին ըլի, մենք Ալյնին ենք ուզում...»

— է՞լ, հարցլեց վերատեսուչը։

«Մինն էլ տանուտէրը», վրա բերեց Սալին, որին հետեւց ամբոխիւր։

— է՞լ։

«Մինն էլ տէրտէրը պէտք ա ըլի», ասաց Վալդիանը։

— Առանց ջոկելու էլ տէրտէրը կայ ու կայ, խօսեցին մի քանիսը։

— Եատ լաւ, է՞լ։

«Մինն էլ կարճիկ-Վարդանը, հալալ մարդ ա», —

վրաբերից Արգումանը, որին հետեւց ձայների մեջ մասը։

— Աւելի լնա, մտմտաց վերատեսուչն ու ոկտեց զրել ընտրովական թերթը։ Տասն բոպէից լիտոլ ստորագրութիւնը ոկտուեց և վերջում տանուտէրը թերթը հաստատեց արքունական կնքով։

«Այսուհետեւ, ասաց վերատեսուչը, դուք չորսդ էլ հսկաբարձուներ էք և ուսումնարանի տնտեսական համեւներին պատասխանառու։ Բայց ձեզանից մէկը պէտք չանձապահ լինի. չորսդ միասին չէք կարող ուսումնարանի փաղը պահէւ։ Ալիք, որովհետեւ առաջին անգամ դու ունեցար այս փողի վրա կարկած, քեզ գանձապահ եմ նշանակում և այս փողը, կամ ինչպէս դու ասացիր, Խալի ի տրիւնը քեզ եմ յանձնում։ Անկորուստ կը պահես գորան և եթէ կարող ես՝ շահացրու ձեր օրէնքով, միայն պատասխանառուն, կըկնում եմ, դու ես։ Ուսումնարանի կարիքները լրացնելու համար այդ փողից կարող էք ծախսել, միայն չորսից համաձայնութիւնով. մէկը, երկուսը առանց միւս ընկերների կամքի իրաւունք չունէ այդ փողից մէկ կոսէկ անդամ ծախսելու։ Դէ արի, Սալի եղբայր, այս մատեանում սոտրագրիր, որ ստացար գրամագլուխը։»

Սալին ստացար փողը, փաթաթեց իր ու թաշկինակում և ինչ որ վերատեսուչն ասաց, նա էլ խզ մ գորեց մատեանի մէջ։

«Տէր հալը, այս մատեանը՝ որտեղ Սալին ստորագրեց—հուիրատվութեան մատեանի հետ յանձնում եմ ձեզ—երեքիդ. Սալին սրանց հետ գործ չունէ։ Աշխատեցէք ուսումնարանի համար նուերք մողովիլ օտարացէք և ուրիշ գիւղացիներից։ Ով ինչ կ'նուիրէ, կաններից և ուրիշ գիւղացիներից։»

կը ստորագրէ մատենի մէջ իր ազգ — անունը, ինչպէս ես ձեր տուրքը դրեցի:»

— Եատ բարի, որդի աղա, մենք չորսս էլ կ'աշխատենք մեր ուսումնարանը աւելի պայծառացնել: Յոյս ունենք, որ սեերես չը լինենք ձեր առաջին:

— Աղա ջան, էս զանգալը իմ ճուիցը կախ չը պէտք աւլէր, տէրտէրի խօսքը Վարդանը կտրեց, որ կախ ըլաւ՝ մեր տներիցն էլ լաւ կը կառաւարենք: Դուք որ մեր օգուտը ուզում էք, բա մենք չե՞նք ուզիլ: Խալխըն էլ, դուք էլ միամիտ մնայէք: Էս ամեն բանը խէր ա, աղա ամա հմի մեր անունը Բնէ ա, մենք ուսումնարանի քոնվէն ենք, Բնէ ենք:

Սնհամբեր Սալին շուտ վրաբերեց ժպտալով. — Ի՞նչ ես ասում, Վարդան, մենք հոգեբարձներ ենք, էլի:

— Վարդան, դու որ քու անունը չես զիտում, ասաց տանուտէրը, ո՞նց պէտք ա գործդ ճանաչես:

«Բան չկայ, եղբարք, սիրտ տուեց վերատեսուչը. շուտով անունն էլ կը սովորէք, ուսումնարանի կարգ ու կանօնն էլ: Դուք հոգաբարձուներ էք, տէրտէրը ձեզ գլխի կը քցի:»

— Որդի աղա, էդ բոլորը հեշտ է. միայն ժողովուրդը ու դուք քաղցած կը լինէք, լիշեցրեց տէրտէրը:

«Եատ բարի: Տաննւտէր, տեղիցը կանգնելով ասաց վերատեսուչը, ալժմ մենք ամենքս էլ գնանք հաց ուտելու: Միայն ես գեռ բոլորը չը վերջացրի: Սիրելի՞ք, հաց ուտելուց լետոյ նեղութիւն քաշեցէք գալ տէրտէրի դուռը. այնտեղ էլ վերջին խօսքս կ'ասեմ ու կը վերջացնեմ: Այս երեկոյ ես միտք ունեմ դուրս գալ այս տեղից ու գնալ դէպի ուրիշ գիւղեր, Ուրեմն՝ շուտով եկէք խնդրեմ, որ չուշանամ: Ի հարկ է, ձեզ պէտք

է «մնաք բարե» ասեմ ու լետոյ հեռանամ: Տանուտէր, խնդրեմ այնպէս կարգագրէք, որ բոլորն էլ գան տէրտէրի դուռը:»

— Գլխիս վրա, աղա ջան, միամիտ կաց:

«Ալժմ ազատ են, շնորհակալութիւնս յալտնումնեմ. թող գնան:»

— Սնակ ըլես, շատ սաղ ըլես, աղա ջան, անկիւններից վերջին անգամ լսուեց:

«Աղա, ճանապարհին ասումէր տանուտէրը, իրեկունը տներիցը մի քանի հաւ, վառիկ ու ձու հաւաքել տուեցի. ես չէի գիտում՝ թէ դուք էդ զայդի մարդ էք. սաս, հմի նրանցից կերակուր կ'ըլեն պատրաստած, ի՞նչ անեմ: Աղա, խնդրում եմ գնանք՝ մեր տանը ճաշ ուտենք: Ոչ ով չի ըլել մեր կշտին:»

— Եատ սխալուել ես, որ տներիցը հաւ ու ձու ես հաւաքիլ տուել. ինձ համար հառամ է, թոյն է ձեր պատրաստած կերակուրը: Ի՞նչ իրաւունքով դուք ուրիշի, աղքատի, չքաւորի ունեցած հաւ ու ձուն առնում՝ ինձ էլ ուտեցնում էք: Գնա, միւս անգամ այդպէս բան չ'անես: Ես ում տանը իջել եմ, այնտեղ էլ մի կտոր հաց կ'ուտեմ:

«Աղա ջան, ասենք էդ զալաթ եմ արել. միայն էլի խնդրում եմ մեր վարժապետի վրա քաղցր աչք ունենաս» — ասաց տանուտէրը՝ տէրտէրի երեսին նայելով:

— Որդի աղա, նա հմի մեր տղէն ա, տանուտէրի փէսէն, մեր խաթըրի հմար նրան պահի. քեզ մատաղ, թէ կարգս կը սիրես:

«Տէր հալը, դրա մասին ես կը յալտնեմ իմ վճի-

ուը ժողովրդին, որուք էլ կը լսէք. երբէք ինձ բան մէք  
ինդրիլ որ են լսող չեմ:» Այս եզաւ վերջին խօսքը և  
տանուտէրը մտքամոլոր հեռացաւ:

**ԻՇ.**

ԱՆԱԽՈՐՃ ՎՃԻԹ ՎԱՐԺԱՊԵՏԻ ՀԱՄԱՐ

Օրն ալնալս անցել էր, որ ոչ ով չէր իմացել: Ա-  
րեք մարդաբոլ բարձր էր արեմուտքից: Զիւնն էլ չէր  
մազում: Ոտք ուզ էլ գնէիր՝ ալկվում էր:

Թեմտկան Վերատեսուչը անչափ ուրախ էր. նա  
ամեն ինչ կատարեալ էր համարում. ուրեմն և աւե-  
լորդ էր նրան երկար մնալ այս գիւղում, զուր ժա-  
մանակ կարցնել: Նա շուտով ճաշեց, —պատրաստած էր  
շատ պարզ —զիւղական կերակուրներ: Դեռ սուփրէն չէին  
վերցրել, գեռ տէրտէրը «Լիութիւն սեղանուս» չէր տսել,  
վարժապետը անհամարձակ քայլերով ներմ մտաւ ու  
շէմքումը կանգնեց՝ ձեռքերը դոշին դրած, պողած  
որքի նման: Տէրտէրը խղճահարուեց.

«Որդի աղա, ասաց նա, մի յոյս տուր էս խեղճ  
մարդին: Սրա էս գիւղում մնալու, վարժապետ դառ-  
նալու ու նշանվելու պատճառը միմիան ես եմ: Հենց  
էդ ա պատճառը՝ որ իմ սիրոն աւելի ա ցաւում: Կորզս  
վկայ, աս որ չըլէր, էս՝ գեղը ուսումնարան չէր ունե-  
նալ: Մեղք ա, թող մի կտոր հայ ունենայ: Տանուտէ-  
րի աղջկանը խեղճ արի, որ սրա վրա նշանած ա:  
Տես, ողորմելին հաց էլ չի կերել, եկել ա շնորհքդ առ-  
նելու: Ինչ անենք, մարդ ա՝ պակասութիւնը կը դրսի,

ոնց որ գուք նշանց կը տաք: Ով իցէ, որ ոչ մեղիցէ...»

—Տէր հայր, ես ևս խղճում եմ սրան. բայց ինչ-  
պէս անել, հարիւր մարդը կորցնել մէկի համար, թէ  
մէկը՝ հարիւրի: Դուք ինչպէս կը վճռէք:

«Ոչ մինին, ոչ էլ միւսին. պէտք ա էնպէս անել,  
որ մէջ տեղը մարդ չը կորչի: Դուք լաւ գիտէք մէր  
գիւղական ժաղովրդի լնութիւնը. էնպէս արէք, որ ի-  
րար հակառակներ չը լուս ընկնեն ու էս մեր տատուա-  
ծալին զործը քանզեն:

Տէր հօր գթաշարժ խոռքերը խոր ազգեցին վերատեսչի  
սրտին: Նա մի քանի վարկեան մտածմունքի մէջ ընկաւ:

«Աղա ջան, ստացդ հողն եմ, լոյն տէր հօրս՝ ինձի  
պահէ» — աղաչց վարժապետը:

— Ախ, ինչ անեմ, տէր հայր, եղանակ. իմ պաշ-  
տօնս ինձ չի ներում խաթթը ի չուն գործելու. իմ վար-  
ժապետները պէտք է զովեստի արժանի լինեն:

«Աղա ջան, ասելով ծունկ չոքեց վարժապետը,  
ինձի պահէ, կազմէմ ստքդ պատճելով...»

— Ինչք նեղանում ես, բարեկամ. գեռ քեզ ոչինչ  
վնաս չեմ տաւել: Անդնիր, մեղք ես, խեղճ ես...

Այս սղբերգական լսութում դրսից «տէրտէր» ձայն  
տուին: Վարժապետը տիրադէմ կանգնեց: Տէրտէրը գուրս  
գնաց և խոյն ներս մտաւ ասելով. «Աղա որդի, խալ-  
իր գիւղամիջուծը հաւաքվել են, գան թէ ոչ»:

— Ախ, ժամանակ է:

Տէրտէրն էլի գուրս զնաց՝ վարժապետին խնդրե-  
լով, որ սուփրէն հաւաքի մինչ իր զտլը: Վերատեսուչը  
տան մէջ սկսեց ման ու ման անել: Նա մտածում էր  
թէ ինչպէս խալիքային հեռացնի ուսումնարանից, որ  
նրա կողմնակիցները չը թշնամանան գործի հետ: Այս

մտածմունքից նա չէր կարողանում գուրս գալ. վերջապէս՝ նա վճռեց կամ միանգամից հեռացնել անարժանին ուսումնարանից և կամ ծառայի պաշտօն տալ: Աերջին միաբը աւելի նպատակայարմար էր, նա այդպիսով այնքան սուր գէնք չէր տալ տանուաէրի ձեռքը ուսումնարանի գէմ: Խալիֆայի հիմքը աստիճանաբար պէտք էր քանդել:

Վարժապետը մնաց ներսը սուփրէն ժողովելիս, վերատեսուչը գուրս դնաց սրահը, ծառաներին հրամայեց՝ որ ձիաները գուրս քաշեն, թամքեն ու պատրաստուեն զնալու: Խսկոյն զոմի չարդախիցը գուրս եկաւ մէկ տիրապէմ մարդ՝ փայտը ձեռին, փափախը վերցնելով գլուխ տուեց ու կերկերուած ձախով ասաց.

«Աղա ջան, զլխիդ մատաղ, ես գանգատի գուռը գնացող մարդ չեմ, ամա տես բանը ի՞նչ տեղն ա հասել, որ կուշտ եմ եկել: Ես վարժապետը մեր տունը քանդել ա»:

— Ո՞նց:

«Ասեմ, աղա ջան: Ինձ Քիքունց Մարտիրոս կ'ասեն—քեզ ծառայ. իմ օրումը մարդի փխութիւն չեմ արել, մարդի վրայ բամբասել. ամա հմի ջանիս հասել ա, պէտք ա տեսմ: Ոնց որ խալիս, ընէնց էլ իմ երեխէն տուի վարժապետին՝ որ կարգացնի. բան սովորացուց թէ չէ՝ էզ չեմ զիտում, ամա հրէս երկուշաբանի տւել ա՝ ոչ նույժ ա տունում, ոչ խօսում ա, միայն տեղաշրջն ընկած անքում ա...»

— Ի՞նչի՞:

«Հէր օրչնած վարժապետին հարցընւ. էլ թե ու

թիկունք, զլուխ ու մէջք չի թողել՝ թակել, ջարդել ա: Մէնակ իմ Արակէմը չի էս օրին, մի խեղճ տէրտէրակին կայ նրա մինուճար Արամն էլ ա էս օրին: Երկու օր առաջ տէրտէրին կանչեցի, Երկուսին էլ հաղորդեց... Սա ի՞նչ օրէնք ա: Երեխին ահ կը տան, թէ մահ...»

— Հիմի ոնց են երեխէրքք:

«Անխօս կան: Ես ի՞նչ զիտամ, Աստօծ ըղունգի տակին շունչ ա պահել. դու ասա՝ վերջը բարի ըլի: Եղնա ի՞նչ երեխէրք, ի՞նչ, ասլանի բարեբար... Անխօդճմտանք, ոնց ես սիրո անում՝ մատղաշներին մահի գուռը քցում...»

— Դոնչք, սիրելիս, միամիտ մնացէք. այսուհետեւ էլ ոչ ով չի համարձակուիլ աշակերտի ծեծել, գուք լաւ վարժապետ կ'ունենաք: Հիմալ խալխը կը գան, վարժապետի մասին ես իմ վճիռը կը յայտնեմ: Միայն դուք լաւ պահեցէք հիւանդ երեխաներին, տաք պահեցէք: Ես էլ այսուեղից զնալիս՝ կը գամ, կը տեսնեմ հիւանդներին:

Վարժապետը պատուհանիցը տեսել էր Մարտիրոսին վերատեսչի հետ խօսելիս, գուրս չէր գալիս. նա երեակալում էր՝ թէ ի՞նչ պէտք է լինի դրանց խօսակցութեան նիւթը:

«Աղա ջան, զլխիդ մատաղ, կարելի ա՝ մի ճարկիմանաս, արա, երեխանցո ազատի:»

— Ես կ'անցնեմ ձեզ մօտ, միայն գու գնա՛, գիւղամիջումն սպասիր, որ տունը ցոլց տաս: Խոկ եթէ ուղում ես իմ վճիռը լսես, գնա՛, խալխի հետ արի ու կ'իմանաս:

Մարտիրոսը դրուխ տուեց ու մի ուրիշ կողմով հեռացաւ, որ տանուաէրը չը տեսնի, չ'իմանալ նրա

վերատեսչի մօտ լինելը։ Վարժապետը նոր դուրս եկաւ տանիցը։ Եւ ահա ամբոխը երևաց։ տէրտէրն ու տանուտէրը մի քանի քայլ առաջ կանգնեցին։ Վարժապետը սրանց կողմը քաշուեց։ Ամենքն էլ լուս սպասեցին, թէ ինչ պէտք է լսեն։

«Ոիրելիք, ասաց բարձր ձայնով վերատեսուչը, եթէ իշում էք, ես ձեզ ասացի՝ որ լաւ վարժապետին պահել, վատին արձակել պաշտօնից—իմ իրաւունքն է։ Ես ձեր վարժապետին ոչ թէ միայն վատ եմ գտնում, այլ և արդ սուրբ պաշտօնի մէջ անպիտան։ Դրա համար ես երկու բան եմ վճռել—կամ պէտք է դուրս անեմ վարժապետութիւնից և կամ ուսումնարանի համար ծառալ նըշանակեմ։ Այժմ իր կամքն է, թող երկուսից մէկն ընտրի իր համար։»

Տէրտէրը խօսեց. — Որդի՛ աղա, թող ծառայութիւն անի. լաւ ա ծառայ ըլի, քան թէ դուրս անէք. ի՞նչ կ'ասես, անուտէր Օսէփ։

— Եանի ո՞նց ծառայ. ես լաւ չեմ գլխի ընկնում։

«Ես բացատրեմ, շարունակեց վերատեսուչը, արդ մարդը երեխաներին էլ գաս տալու իրաւունք չի ունենալ, վարժապետ էլ չի լինիլ։ Դրա գործը այս կը լինի առ ժամն, որ ուսումնարանը սրբած ու մաքրած պահի, ջուրը կամ ինքը բերի, կամ բերիլ տայ, ուսումնարանը ժամանակին կրակ վառի, տաքացնի, հոգաբարձուների բանը լսի, վարժապետին զուլլուղ անին Այսքանն է գրա պարտքը, ոչ աւելի։»

— Բա երեխանց դասը չը պէտք ասովրացնի, հարցեց տանուտէրը։

«Երեխէրքը գամ են սովորում՝ չեն սովորում, գիտեն՝ չը զիտեն—գրա զարծը չէ։ Ես գրա համար տարեկան ոսճիկ կը նշանակեմ, հոգաբարձուներից կը ստանալ ու իր դուլլուղը կը կատարի։ Ոիրելիք, համաձայն էք թէ ոչ։»

— Որդի՛ աղա, համաձայն ենք, վրաբերեց տէրտէրը, որին հետեւեցին ամենքը. «զարտուղ ենք, զարտուղ ենք։»

— Աղա ջան, իմ խօսքն էլ հենց էդ էր—մէջ ընկառ Սալին. թող գա էնքան ծառայութիւն անի, որ ինքն էլ վարժութիւնից, Ովկա գրա թշնամին,—ոչ ովկ Միայն գու էն ասա, թէ սրա տեղը ում ես մեզ տալիս, որ լուն րլի։

«Ես ձեզ համար քաղաքիցը կուզարկեմ մէկ լաւ վարժապետ, որին ես հաւան կը կենամ։ Մինչեւ երկու շաբաթը նա ալատեղ պատրաստ կը լինի։ Դուք էլ պատրաստ մնացէք, որ ուսումնարանը բացուի։ Ես նոր վարժապետի ձեռքով մէկ նամակ կը գրեմ հաղաբարձուներին. ինչպէս էլ զրած կը լինեմ, այնպէս էլ կը կատարէք պատուէրս։ Միայն այժմ ասացէք, պարոն հոգաբարձունք, տէր հայր, նոր վարժապետին տարեկան ինչքան ոսճիկ նշանակեմ, որ կարողանաք անխտափան վճարել։ Լաւ իմացէք, որ լաւ վարժապետին լաւ փող պէտք է տաք. նա հաւ, ճուտ ու ձու ստանալով չի մնալ ալստեղ։ Դէ, ասացէք..»

— Աղա ջան, հենց ինչքան քու խղճմտանքը կը տալ, մենք պատրաստ ենք, մենք կը տանք, ասաց Սալին ու լուսած մարդկանց երեսին նալից։

— Դու ու քու խղճմտանքը, աղա ջան, վրաբերեց Վարդանը։

Տանուտէրը գլխաքարշ նայում էր իր ոտքերին.

նա մտածման մէջ էր, զուցէ և չէր լսում, թէ իր մօտ  
ով ինչ է խօսում:

— Խալիս— էլահաւան դարսու ենք քու արտօին,  
աղօ՛ ջան, լսուեց բազմութեան միջից, մենք տեսնում  
ենք, քու չենք, որ դու մեր օգուան ես խօսում: Վար-  
ժապետը լաւն ըլէր՝ դու խի կը հեռացնէիր. Հալբաթ  
բան ես գիտում, մենք քու ոտի հողի զբար էլ չկանք:  
Էլ ինչ ես փիքը անում, քոխվա Յոէլ. Ես զեղը խօ  
վարժապետի վրա ծախուած չի...

Խօսողը ուրիշներին էլ սիրու տուեց.

— Փա՛ռք Աստծու, ասաց մի ուրիշը, որ դրան էլ  
դուրս չի անում: Ասենք որ քու փէսէն ա, մենք ինչ  
մեղաւոր ենք. տեսնում ես, անողը մենք չենք, աղէն ա:

— Աղբէր, զուաց Մարտիրոսը, էդ մարդը, էդ կոօն  
իմ տունը քանդել ա. Երեխէրքը մեռնում են, իմ ջա-  
ռումէն տալ կ'ըլի՛: Ազա՛ ջան, գնուրս արա, կորչի..

Թեթե աղմուկ բարձրացաւ: Վարժապետը աներոջ  
քամակին չորացել, սևացել էր: — Որ դուրս անի, զուաց  
տանուտէրը, ինձ մի մեծ վնաս կը հասնի, աղջիկո էլ  
ուրիշի չեմ կարող տալ թէ ուզող չի ըլիլ, ան եղնա  
էս զեղը ուսումնարան կ'ունենալ...

— Որդիկ, բարձր ձայն ածեց տէրտէրը. ձեզանից  
կռուի հոտ ա փչում: Խի էք զուր իրար աչքից ընկ-  
նում: Են բանը՝ որ աղէն ա անում, զուք խի էք խօ-  
սում:

«Սիրելիք, զուր մի նեղանաք, իրաբ մի անպա-  
տուէք: Այս վարժապետը ուսումնարանում ծառայ կը  
մնայ. Ես մի ուրիշ նոր վարժապետ կ'ուզարկեմ ձեզ  
Համար: Միայն դուք ալս ասեցէք, տարեկան նրան ես  
ինչքան փող նշանակեմ:»

— Մեր կարողութիւնը քեզ աչտն ա, աղա ջան,  
լսուեց մէկից, հէնց ինչքան քու խղճմանքը կը տալ՝  
ինքան նշանակի:

« Եսու լաւ, ասաց վերտառեսուչը, որովհետեւ իմ խրդ-  
ճի վրա էք քցում, ես կաշխատեմ համ լաւ վարժապետ  
ուզարկէլ, համ տարեկան ուոճիկը քիչ նշանակել: Նո-  
րան լաւ կը պահէք, աղարսն հոգարածուներ. նա կը  
լինի ձեր տջակիցը և ամեն բան կը հոգալ: Դուք նո-  
րան լսեցէք. ինչ էլ նու կ'անի, ես ձեզ էլ գրած կը  
լինեմ: Ես երկու ոմսից լետոյ էլի կը զամ ալս գիւղը և  
ինչքան ուրախ կը լինեմ, ինչպէս շնորհակալ կը մնամ,  
երբ տեսնեմ, որ ամենքդ էլ սիրով էք, ուսումնարա-  
նը կարգ ու կահօնով շարունակված է:»

Ծառաներն արգէն ձիաները թամբել, սանձերը ըլո-  
նած սպասում էին: « Թէ, օքը մթնում է: Ես էլ տան-  
լու բան չունեմ: Այս խալֆայի տարեկան ուոճիկն էլ,  
սպարտքն էլ ես թղթով ձեզ կը գրեմ, կուզի՝ մնայ այն-  
պէս, չի ուզի՝ կարող է հեռանալ: Աշխատեցէք շտո  
երեխաներ ժողովել: Նրանց թոշակի մասին, ալ. Հոգա-  
րածուներ, գուք իմ ուզարկած վարժապետի հետ միա-  
սին հոգացէք: Այլ ես զոմում ուսումնարան չը պահէք:  
Այսուղ կենդանիներն էլ ստատկաւմեն: Այն մեծ տունը՝  
ուր երեկ ժողով ունէինք, վարձեցէք ուսումնարանի  
Համար—նա յարմար էլ: Լսում էք, աէր հոլը, ասած-  
ներս:»

— Որդիկ աղա, ասաց տէրտէրը, էդ ըոլորը դուք  
ձեզ թղթով զբեցէք. Հիմի մեզանում խելք չը կար:

« Եատ բարի: Ես ալմմ գնալու հմ Կաղէթ. այն  
զիւզումն էլ ստումնարան պէտք է բաց անեմ: « Մնաք

բարեւ»—ասաց նա, եփնջին թիկունքն առած նստեց ձիուն:

— Բարի ճանապարհ, աղա ջան, մոռանաս ոչ...

«Միամիտ մնացէք» — վերջին խօսքն էր. նա առանդակեց ձիուն. իր երկու ձիաւորներից մէկը առաջն ընկաւ: Քիքունց Մարտիրոսը նրանց առաջը կտրեց ու գէպի իր տունը տարաւ: Մարգիկ յետևից ապշած մնացին: Վերատեսուչը հիւանդներին էլ տեսնելով ու հորկաւոր խրատը տալով, անցաւ, գնաց...

Տանուտէրի ու խալիֆալի միակ միսիթարիչն ու յուսադրովը տէրտէրն էր:

«Վարժապետի համար անախորժ վճիռը» շուտ տարածուեց ամեն տեղ:

## Ի՞Զ.

### ՎԵՐՋԻՆ ԳԼՈՒԽ

Երկու շաբաթէց յետոյ եկաւ այս գիւղը թեմական վերատեսչից ուղարկուած մի երիտասարդ, որը Ներսեսեան դպրոցի սաներիցն էր: Նա լաւ հիւրասիրվեց այստեղ և նորընտիր հոգաբարձութեան հետ գործունէութեան դիմեց՝ համաձայն թեմական վերատեսչից ստացուած գրաւոր հրահանգներին: Նա աշխատում էր գրաւել հասարակութեան սիրաը, որով և արդարացներ իր իշխանաւորի առ ինքն ունեցած յուսերը: Նա բերել էր իր հետ նոր գասագքքեր աշակերտաց համար: Ուսումնարանի համար վարձեցին Ալէքսանց մեծ տունը, որին անելի յարմար էր: Ակնեցին նստարանների հոգսը քաշել:

Թեմ. վերատեսչի հրամանով՝ խալիֆան տարեկան պէտք է ստանար 40 ըուբլի իր ծառալութեան վարձը: Նա երւ տեսաւ՝ որ նոր վարժապետը նոր ուսումնարան բացեց, որ ինքը պարտաւոր էր անխօս ծառալել, որ իր պատիւն ու հաշակն ընկաւ ամենի մօտ, որ այլ եւս առաջուան գիրքումը չէ. երբ տեսաւ՝ որ իր պաշտպաններն էլ հետզհետէ թուլանում են և տանուտէրը միտքը փոխել, ասես թէ չի ուզում ընդունել նրան ու աշխիկը տալ, որ էլ առաջուան պատիւններն ու նուէրքները չի ստանում և միմիայն «երազ տեսնողն» է իրան տես գալիս, ամօթ ու նախատինք համարեց ծառալինել այն ուսումնարանում, ուր ինքն առաջ անձնիշխան էր, բռնակալ էր. ինքնասիրութիւնից գրգուեց, թողեց նոր վարժապետին, դիմեց տէրտէրին ու տանուտէրին այս խօսքերով.

«Դուք իմ պատճառաւ ոչ ոքի աչքէն մի ընկնէք. եսիկ չեմ կրնայ ըլլալ ծոռայ անտեղ, ուրտեղ վարժապետութիւն կ'ընէի: Ենորհակալ պէտք է ըլլամ, որ զուք զիս պահեցիք: Փառքի ըլլաս, տէր հարս, որ զիս խնամք ըլլիր: Ասկէ ետեւ ինձի ուսումնարանէն յուս ըլլայ: Եսիկ արհետ մ'ունիմ. կ'երթամ աշխատանք կ'էնեմ, գլուխս եօլայի կու տանիմ: Օսէֆ հարիկ, թէ կուզես նէ՝ աղջիկդ տուր ինձի. ես անոր աղէկ կու պահպանիմ, թէ ոչ՝ հէջ զու չունիմ, աս գեղումը մնալու ալ միտք չունիմ: Իմ վաղաս լմնցած է:»

— Որդի, ասաց տէրտէրը, ես էլ ցաւում եմ, որ մեր բոլոր աշխատանքը ջուրը թափուեց: Ի՞նչ անես, գու ինքդ շատ լաւ տեսար, որ նոր վարժապետին մենք չը գտանք, քեզ զրկեցինք: Հիմի նոր խառնի—խառնի անենք՝ էղ էլ մարդութիւն չի, իմ ծերութեանը չի պատ-

կանիլ: Թէ կ'ուզես՝ մնա այստեղ, քու գեղն ա. թէ չէ՝ դու գիտաս:

— Դնա՛, զադէն, խօսեց տանուտէրը, տէրը քեզ հետ. էս գեղիցը քեզ էլ օգուտ չը կայ. քանի կենաս՝ դուշաններս կ'աւելանան: Միամիտ կաց, իմ աղջկայ ուզողներ շատ կան, որ լաւի չըտամ՝ վատի հօ կը չտամ: Երբ որ էլ ուզենաս՝ կարող ես իմ տուն գալ-զնալ: Մենք քեզ չենք մոռանալ. դու քու արևի ձէնն ածա՛: Դու չես կարող քաղքից եկած, քաղքումն ուսում առած վարժապետի հետ կշեռքի թալը մտնել...

«Համէ որ ագսէս է, թողէք, հարիկս, ձեռքներդ պագնում:» Այս խօսքն անելիս, նրա աչքերը արտասուրով լցուեցին. համբուրեց երկուսի ձեռքն էլ, տէր հօր օրհնութիւնը ստացաւ ու հեռացաւ:

Այնուհետև նա մէկ հաստ գագանակ ձեռն առած, աղօթագրերով լիք հարգէն կոխքիցը կախ արած, ընկաւ հայոց զիւղերը: Պարզամիտ գեղջկուհին ու միամիտ զիւղացին խալիֆայ՝ գրբացի գոյութեան աղբիւրը դարձան: Նա գրքացութիւնով իր գլուխը պահում էր և աւելի ու աւելի մոլորեցնում ժողովրդին: Մի տեղից նրան խոկում էին իր խալեբայութեան համար, միւս տեղ սիրով ընդունում: Նրա ամենամեծ զէնքը թլիսման անելն էր...

Այնուհետև սիրուն Մարգարտի երեսին քաղցր ժողիտ էր խաղում. նա օրհնում էր վերատեսչի «օրն ու ուժը»: որ իր ազատութեան պատճառը եղաւ: Կարճ միշոցից լետոյ նա նորահարս դարձաւ իր ուզած տներից մինում:

Այնուհետև կանալքն իրար հետ խօսելիս ասում էին. «Աստօծ, մեր հանդն ու դաշտը կանաչ պահի, մեր

զեղի գլխին արեն ու լուսինը անսպակաս վառի: Աստօծ, շէնք ու շնորհք տուր մեր ուսումնարանին, մեր երեխանցը ուշք ու միտք, մեր նոր վարժապետին հալաւ սիրոտ ու սաղ ջան.. Թող կորչի էն զըբացը, էն կռօն, էն մարդակեր վարժապետը: Տեսէք, այ կնանիք, երեխէրքը հիմի մոց են ուրախ – ուրախ ուսումնարան թըռչում, մոց են լաւ կարգում, խիթարվում: Աստօծ, ժամի ծոցումը պահի մեր երեխանցն էլ, մեր նոր վարժապետին էլ...

121  
131  
13



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Երես

Եթարող	.	.	.	.	1
Միաբանութիւն	.	.	.	.	12
Աշուղ և վճիռ	.	.	.	.	17
Օջաղ և ուսումնարան	.	.	.	.	23
Անհանց գրութիւնը և ձաշակը դէպի ուսումը	.	.	.	.	29
Նախապատրաստութիւն	.	.	.	.	37
Մանկական կեանք	.	.	.	.	41
Հողը փող, փողը հող	.	.	.	.	57
Աարգ ու կանօն	.	.	.	.	62
Հոչակ	.	.	.	.	70
Աարձատրութիւն	.	.	.	.	78
Դաշիճ	.	.	.	.	83
Անկումն	.	.	.	.	93
Գոմ և զրայց	.	.	.	.	96
Մօր մրմունջը.	.	.	.	.	101
Խշանազրութիւն	.	.	.	.	107
Խօսքի տեղ գործ. Քյոր ու եղբայր միասին.					
Սիրոյ ուժ	.	.	.	.	116
Մարգարտին աչքալուսէք	.	.	.	.	126
Հարսանիքի պատրաստութիւններ	.	.	.	.	132
Տարակուսանկներ	.	.	.	.	137
Խալիֆան մազէ կամուրջի վրա	.	.	.	.	143
Աւսումնարանին տեսութիւն	.	.	.	.	155
Աւսումնարանի նոր հիմնաբարը	.	.	.	.	163
Աւսումնարանի գշյութիւն պահպանող սիւ-					
ները	.	.	.	.	171
Անախորժ վճիռ վարժապետի համար	.	.	.	.	176
Վերջին գլուխ	.	.	.	.	181

2 MAR 2013

ՀՀ Ազգային գրադարան



NL0465034

